


Ա. ԱՌԵՍԼԵՆԴԵՐ

# ՄԵՎԱՄՈՒԹ

## ԱՌԱՋՆՈՐԴ



Թարգմ.  
ՍԻՄՈՆ

891.71

Դ. 66

ՏԱԿԱՆ  
ԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1927 թ.



17 JUL 2006

391.71  
4-66

ԱԵՐԳԵՅ ԱՌԻՍԼԵՆԴԵՐ

25 NOV 2010

ՍԵՎԱՄՈՐԹ  
ԱՌԱՋՆՈՐԴԵԼ

ՆԵԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔ

16 ՊԱՏԿԵՐՈՎ

Թարգմ. Սիմկ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՆ 1927 Թ.

9924  
17728

## I

## ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Յակելենեն իսկի չեր ուզում գարթներ, բայց կոր խրճիթին իբր մուտք ծառայող անցքից ցուրտը ներս եր թափանցում և Յակելենելին ստիպում կուչ գալ ու սեղմվել:

Սովորաբար, յերեկոները վառվող կրակը, գիշերը կամաց-կամաց հանգավ և դարձավ տաք մոխրի մի ահագին կուչտ:

Յակելենեն փորձում ե ավելի մոտ սեղմվել մորը, բայց առավոտյան սառն ողի հոսանքը հասնում ե նրա կամ թիկունքին, կամ վոտքին:

Դուրաը յերգում են աքաղաղները: Նրանց ծուղրուղունին խառնվում ե ալծերի մկանցը, ցերցելաղի ծիծաղը, իսկ այնտեղ, նրանից գենը՝ խիտ թփուտներում, «բակու»-ի խոպոտ կանչն ե լսվում.— «Բակու»-ն շան նման յերկար դնչիկով կապիկ ե:

Հանկարծ այն միտքը, վոր այսոր պետք ե դաշտ գնալ, կարծես սուր ասղի նման ծակում ե Յակելենելին ու փախցնում նրա քունը:

Իհարկե, այսոր: Պետք ե վեր կենալ, պատ-



բաստվել, մի բան ուտել ու չուշանալ այն կանաչ բլրակը բարձրանալ—ուր հավաքվելու ժամադրավայր ե նշանակված:

Ուշանախ ամսթ ե:

Յակելենեն վեր ե թռչում և սկսում ե շարժել մորը:

— Վեր կաց. վեր կաց. ժամանակ ե: Մոռացել ես, վոր այսոր յես դաշտ պետք ե զընամ:

Մայրը տնօքում ե, շուռ ե գալիս, չի ուզում զարթնել:

Բայց զարթել ե շեկ, միշտ հետաքրքրվող ու սուր դնչիկով չնիկը—Զուման: Սա հոտոտեց Յակելենելի վորքերը, պոչը շարժեց, համաձայնեց, վոր ժամանակն ե ճանապարհ ընկնելու—վորին նա ավելի մեծ անհամբերությամբ եր սպասում, քանիր տերը:

Անկյուններում շարժվեցին և փոքր յեղբայրներն ու քույրերը:

Գերջապես մայրն ել ստիպված եր ախ անելով, վեր կենալ և աչքերը տրորել:

Ինչպես ամեն առավոտ, մայրը յերկար փրնթվունթում ե, ապա թե դործի յե կենում—կըակ ե վառում ու կերակուր յեփում:

Յակելենեն անհամբերությամբ ինքն սկսեց փչել զեռ տաք մոխիրը:

Փոքրերն սկսեցին Յակելենելին հարց ու փորձ անել. նրանք ել ելին ուզում դաշտ գնալ, բայց այդ մասին մտածել անգամ չեր կարելի:

Յակելենեն նրանց պատասխանում եր կարճ ու աղջու:

— Զե, չե ու չե: Զեզ նման ձուտերին դաշտ չեն տանում: Առանց ձեզ ել այնտեղ հոգս շատ կունենանք: Սպասեցեք, զեռ մեծացեք:

Փոքրիկները ձեռքերով տրորում ելին աչքները և ել ավելի համառությամբ դիմում:

Լավ ե, վոր հայրը յերեկվանից վորսի յեր դնացել: Նա իսկի չեր սիրում այսպիսի աղմուկ ու դժվար եր իրան զապում, վոր ձեռքն ընկնողի զիմին չբանբաչեր:

Վերջապես մայրը պատրաստեց սովորական մանիոկան (կերակուր), կարտոֆիլ ու ծիրանեղուցն վալրենի խխունջներ յեփեց:

Նա հիշեց, վոր Յակելենեն այսոր դաշտ ե գնալու և դեպի վորդին ունեցած իր վերաբերմունքի մեջ մի տեսակ հարգանք եր նկատվում, նա ծառալում եր վորդուն ինչպես մեծի, ինչպես հոբը:

Յակելենեն շատ սիրով չեր ուտում. Նրա միտքն ամբողջովին զբաղված եր ճանապարհով ու այնտեղի՝ դաշտի կյանքով:

Նա բերանը լիբ լցնում եր և ամբողջ կտոր-

Ներով կուլ տալիս, վոչ այնքան ագահությունից՝  
վորքան շտապելուց:

Մայրը ծխամորձը ծխում եր, գլուխը շար-  
ժում և դանտաղ խոսում.

— Շատ ուշադիր նայեցեք թռչուններինւ  
Յեթե թռչեն և փշացնեն արտը, բոլորի համար  
Ել վատ կըլինի. ո, ինչ վատ: Անտառի խորթը



Հմտնես: Ասում են նորից լույս ե ընկել հին ընձ-  
առյուծ «բամատո»-ն: Զգուշ լողացիր, թե չե-  
կոկորդիլուները...

Յակելենեն անհամբեր շարժեց ուսերը: Նա-  
արդեն յերրորդ անգամն եր դաշտ զնում և ա-  
մեն բան նրանից լավ գիտե:

Բայց չե վոր կանայք հենց նրա համար գո-  
յութիւնն ունեն, վորպեսզի ախ քաշեն և ամեն  
բանից վախենան: Հայրն իզուր տեղը չեր խոսիլ:

Վերջապես ամեն ինչ վերջացավ: Յանկելե-  
նեն բոլորը կերավ, ինչ վոր մայրը պատրաս-  
տել եր, լսեց բոլոր խրատները և պատրաստ եր  
հանապարհ ընկնելու:

Ուտելիքի պաշար վերցնելուց նա հպարտու-  
թյամբ հրաժարվեց.—ի՞նչ-ե, նրանք փոքրիկ են,  
վոր չկարողանան իրենց մի որվա սնունդը հո-  
գալ:

Զուման անհամբեր բամսվում ե նրա վոտ-  
քերին:

Մայրն ու փոքրերը մուտքի մոտ կանգնած,  
հայացքով յերկար ուղեկցում են նրան, կարծես  
թե հայրը յերկարատես ու վտանգավոր վորսի յէ  
դնում:

Յակելենեն ու Զուման բլուրը բարձրացող  
աղաների մեջ առաջներից ելին:

Բայց շուտով բոլոր շավիզներով վեր վազե-  
ցին աղաներ, աղջիկներ, չներ: Նրանք լուռ, ծա-  
րապատիկ նստում են:

Սովորական կատակները, կոփմն ու աղմուկը  
չկան: Այսոր դաշտերի առաջին որն ե:

Այսոր պետք ե առաջնորդ ընտրեն:

Սա այնքան ել հասարակ բան չե: Իհարկե,  
վերջին որերն արդեն շատ խոսակցություն եր  
ցեղեր, շատ ելին վիճել և նույնիսկ պատրաստ-  
վել, բայց այսոր ամեն ինչ պետք ե վորոշի:

Թեկնածուների սիրտը բարախում և հուզ-  
մունքից, թեև նրանցից վոչ մեկը չի արտահայ-  
տում իր հուզմունքը:

— ԴԵ, կարծեմ բոլորը հավաքվել են, — ասում  
է Մակուղեն՝ ամենամեծ տղաներից մեկը և ան-  
համբերությամբ յետ և նայում:

— ԵԼ յեկող չկա, — հաստատում է Յակելե-  
նեն հանգիստ ձայնով, թեև այդ հանգստությու-  
նը նրան արժան չի նստում. չե՛ վոր նա գիտե,  
վոր Մակուղեն իր գլխավոր հակառակորդն եւ:

— ԴԵ, — արհամարանքով ժպտում է Մա-  
կուղեն:

Աղջիկները մի կողմ քաշվեցին և շշնչում  
են. Նրանք չպետք եւ մասնակցեն ընտրություն-  
ներին, բայց նրանք ել են հետաքրքրվում, թե-  
ով կը լինի առաջնորդը, նրանք ել ունեն իրենց  
թեկնածուները, նրանք ել ցածրածայն վիճում  
են իրար հետ:

Տղաները հանում են փոքրիկ ձողիկներ, վոր  
պետք եւ դնեն իրենց թեկնածուների փոտքերի  
մոտ: Յակելենելի, Մակուղենի և ելի ուրիշ յեր-  
կուսի անունն են տալիս:

Թեկնածուները մի թեկի յերկարությամբ ի-  
րարից հեռու կանգնում են շարքով, անշարժ և  
յետ չեն նայում, իսկ մյուս յերեխաները հեր-  
թով անցնում են նրանց յետերից ու իրենց թեկ-

նածուի կրունկի մոտ դնում ընտրական ձողիկը:  
Ծանր լոռության մի քանի ըոսկեներ են անց-  
նում:

Վերջապես լսվում եւ մի ձայն — «պատ-  
րաստ ե»:

Չորս թեկնածուները վարկենապես շուռ են  
դալիս և իրենց ձողիկները բուռը հավաքում:

Յերկու տղաների ձողիկները շատ քիչ ենք  
Նրանք ամոթահար մի կողմ են քաշվում, բայց  
Յակելենելի ու Մակուղենի ձողիկները բոլո-  
րովին հավասար են:

Նրանք կանգնում են դեմ առ դեմ, վոչ մեկը  
չի ուղում զիջել:

Այս ժամանակ մեկն ասում ե.

— Գոտեմ արտ — (կոխվ):

Ու բոլորը միասին ծափ են տալիս ու ձչում:

— Կովեն, կովեն, կովեն:

Աղջիկներն ել թռչկոտում են, ձեռքները  
թափահարում ու ձչում:

— Կովեն, թռո կովեն:

Մակուղեն շատ ավելի բարձր է Յակելենե-  
լից, բայց սա սովոր չե վտանգից խուսափել,  
մասնավանդ վոր պատվի խնդիր եւ: Վոչ, վոչ:

Նրանք արգեն անպետը ընտրական ձողիկ-  
ները դեն են ածում, նայում են միմյանց աշքեն,  
ու հանկարծ, յերկու հովազապուծի նման, մե-  
կոստյունով հարձակվում են միմյանց վրա:

Յակելենեն վզի մոտ ցավ ե զգում. Մակուդեյի յեղունգները խրվել ելին մորթու մեջ:

Բայց ցավը բորբոքում ե ատելությունն ու ուժը, նա կրծտացնում ե ատամները, լարվելուց աչքերը լցվում են արցունքով. նա յերկաթե ողակի նման սղմում ե Մակուդեյի մարմինը, վոտքերով հլուսվում ե նրա հետ, նա կզակով սղմում ե հակառակորդի ուսին, կախվում ե նըրանից:

Մակուդեն աշխատում ե շպրտել նրան, աղատվել գրկիցը, զցել: Ըհը՝ նա արդեն չի հարձակում, այլ պաշտպանվում ե, դա շատ մեծ բան ե, դա հաջողություն ե խոստանում:

Յակելենեն ելի յէ լարվում, շարժում ե Մակուդեյին: Սա չի ընկճվում, ուզում ե կծել հակառակորդի ուսը, բայց Յակելենեն ուսով խրփում ե նրա կզակին, յետ ե քաշում իրեն ու հետո ամբողջ մարմնով թեքվում վրան:

Յերկումն ել խոտի վրա յեն, կովում են ձեռք ու վոտքով, խեղղվում են—այնպես են խճճվել, վոր ել չի կարելի ջոկել, թե վորն ե վորի վոտքը, ձեռքը, ուսն ու գլուխը:

Բայց Յակելենեն զգում ե, վոր թուլանում ե, նա մի բովե պետք ե հանգստանա. ձեռքերը մի քիչ թողնում ե:

Մակուդեն ամբողջովին դողում ե ուրա-

յությունից. Նա բոնում ե նրան, բարձրացնում ե ինչպես մի գառը, վորպեսզի շպրտի խոտի վըրա, հետո ընկնի վրան, վոտնահարի, ամբողջ մարմնով մնշի. բայց Յակելենեն արդեն հանգըտացել ե, նա ինքն ե արագությամբ ցած սողում ու մինչ հակառակորդի շուռ գալը, ամուբողակում ե նրա վիզը, բարձրացնում ե և փորելիք գետին վլորում. սա թրպրտում ե, ուզում ե շուռ գալ, բայց Յակելենեն արդեն նստում ե նրա մեջքին, նրա գլուխն ու քիթը ուժով հրում ե խոտերի մեջ, վոտքերով սղմում ե ձեռքերը և թուզ ե տալիս միան վոր նրա վոտքերն անողնական թափահարվեն:

Հնչում ե բարձր, հաղթական ծիծաղ, աղջիկներն իրար ձեռք բռնած պարում են հաղթական պարը:

Ամեն ինչ վերջացավ:

Մակուդեն հաղթվեց:

Առաջնորդը Յակելենեն ե:

Այս վոչ չի համարձակվիլ կասկածել: Կովողները վեր են կենում, բրտինքները որբում:



Վոչ վոք Յակելենելին վոչ մի շողոքորթող գովասանական բան չի առում, վոչ վոք չի արտասանում «առաջնորդ» բառը:

Բայց այդ արդեն հայտնի յէ ամենքին, և Յակելենեն մենամարտից առաջ իր վրայից ձգած հոր հին թիկնոցը, ինքը չի վերցնում, — աղջիկներից մեկն ու մեկն եւ վերցնում և նրան տալիս:

Յակելենեն դիտում եւ իր հպատակներին և առում նոր, իշխանական ձախով.

— Դե, ճանապարհ ընկնելու ժամանակն եւ Բոլորն արագությամբ խմբում են և, ուրախ խոսակցելով ու յերգելով, առավոտան ցողից դեռ թաց խոտի վրայով ճանապարհ են ընկնում դեպի իրենց տեղը:

Բայց Յակելենեն շատ լավ զիտե իր պարտականությունը, նա զիտե, վոր առաջնորդը ճարպիկ ու ուժեղ կովող պիտի լինի, վոր նա պետք եւ վեհ պահի իրեն և զիտենա հրամայել բայց նա մեծամիտ չպիտի լինի:

Ուստի և նա յել ուրախ կատակներ և անում ու ծիծաղում, ծիծաղելի ու հետաքրքիր խաղեր եւ հնարում, առաջակարուկի յեւ տալիս. նա առաջնորդ գառնալով, ելի նույն լավ ու բարի ընկերն եւ մնում:

Կերջապես հենց արեի ծաղելուց առաջ հասնում են դաշտերը:

Այստեղ չորս կողմից բարձրացրած տեղերում, արդեն առաջուց փոքրիկ, հեշտ լինվող խրճիթներ են պատրաստված, ուր կարելի յեւ պատրսպարզել ցերեկվա շոգից ու գիշերվա ցրտից:

Յակելենեն նորից առաջնորդ եւ գառնում:

Նա հիշում է, վոր ամբողջ պատասխանաւորվությունն ու հոգար իր վրա յեւ դրված:

Նա կարգադրություններ եւ անում:

Աղջիկներին հրամայում եւ հարկավոր քանակությամբ ջուր ու փայտ պատրաստել. — որը յերկար եւ մինչև մութն ընկնելը յեփելու շատ բան կունենան:

Տղաները պետք եւ հոգան, թե ինչից պետք եւ կերակուր պատրաստեն:

Ամենափոքրերին նա ուղարկում եւ թակարդներ դնելու՝ ամենահարմար տեղերում:

Բայց ամենալժվար ու վտանգավոր գործն ուրիշների տնկարաններից շաքարիեղեղն ձեռք բերեն եր: Դա ամեն մարդու բան չեր:

Վումանց նա դաշտի շուրջը պահակներ դրեց և հրամայեց, վոր մոտով թուշող ամեն մի թոշունի քար կամ փայտի կառը ցցեն, իսկ վոր գլխավորնե, շարունակ ձշան, վորպեսզի մեծերն իմանան, թե նրանք իզուր տեղը ժամանակ չեն կորցնում:

Հեռավոր պուրակի յետեկից բարձրանում եւ արելը:

Սկսվում եւ մեծ ու ուրախ որը, դաշտերի առաջին որը:

## II

## ԴԱՇՏԵՐԻ ՈՐԸ

Բոլոր գործերը բաժանելով, Յակելենեն  
հնքը չեր կարող հանգիստ նստել: Զե վոր այդ  
քոլորն այնքան ել հեշտ չե, իսկ այդ ամենի հա-  
մար պատասխանատու յե նա—առաջնորդը:

Ամենից առաջ պետք ե հոգալ կերակրի  
մասին:

Ինչպիսի իրարանցում ու տրտունջ կըքարձ-  
քանա, յեթե բոլորը չկշտանան:

Յակելենեն ուղևորվում ե անտառ, տեսնե-  
լու համար, թե ինչպես ե զնում վորսը:

Մի քանի թակարդներ դեռ յերեկվանից ե-  
մին դրված, պետք ե նայել, արդյոք վորս չէ  
ընկել:

Վորս անելու արդեն շատ ձեեր եյին ու-  
գորել յերեխաները:

Ամենահասարակ թակարդը շինվում ե այս-  
պես. մի տափակ քար այնպես են հարմարե-  
ցնում ձողիկների վրա, վոր թեք անկյուն ե կազ-  
մըվում: Այդ քարի տակ հատիկներ են շաղ տալիս  
այնպես, վոր թոշունները կտցահարելու համար ան-

պատճառ պետք ե կպչեն ձողիկներին: Տափակ  
քարն ընկնում և ձխլում ե թոչնին:

Բայց այսպես ել կարելի յե անել. յեղեգնի  
կտորները տնկում են զետնին—շրջանաձև և  
ծայրերը մոտեցնում, այնպես վոր շուռ տված  
կոնուսի յե նմանում. կոնուսի մի կողմից մի  
անցք են թողնում, իսկ այդ անցքին ամրացնում  
են կովի պոչի մազերից շինած մի ողակ, վորը  
և դառնում ե ներս քաշող ողակ:

Թոշունը զլուխը հեշտությամբ մտցնում ե  
անցքից և կտցահարում թակարդի ներսն իբ-  
րև խանձ դրված հատիկը կամ սպիտակ մըր-  
ջունը: Բայց թոշունը հենց վոր փորձում ե գը-  
լուխը յետ քաշել, ողակը ձգվում ե ու զլուխը  
մնում ե թակարդի մեջ:

Բայց այդ բոլորը մանր վորսի համար ե:

Յեթե ուզում են  
վորեւելու գաղան վոր-  
սաւ պետք ե ավելի խո-  
րամանկ բան մտածեն:

Կարելի յե վերցնել  
մի ձկուն ձող, մի ծայ-  
րը տնկել գետնին, իսկ  
ազատ ծայրին ձգող ո-  
ղակի թոկը կապել:

Չողն այնքան են կուցնում, վոր ողակը




Մի արգելակի յե հանդիպում ու բռնվում։ Հենց վոր վորեւ մեծ թոշուն կամ փոքրիկ գաղան դըլուխը կոխում ե ողակի մեջ, արգելակը պոկ ե գալիս, ձոդն ուղղվում ե և ողակի մեջ ընկած վորսը բարձրանում ե ոդք։

Յակելենեն ուրիշ շատ, ավելի բարդ ձեւը դիտե։

Անցյալ տարի նրանք բավական թվով, միանգամայն մեծ գաղաններ վորսացին։

Փշի ճյուղերից մի քանի մղոն յերկարությամբ ցանկեր եյին շինում և մի քանի տեղ նեղ անցքեր թողնում։ Այդ անցքերի վերևում, ցանկերի մեջ մեծ ծառերի կտորներ եյին դարսում, բայց այնպես, վոր այդ անցքերով վազող կեն-



դանին անպատճառ դիպչի այդ փայտերը պահող արգելակին ու փայտերը թափեն գաղանի վրա։

Բայց այսոր հաջող չեր գնում։

Բոլոր թակարդները գատարկ եյին, յեթե հաշվենք մի տասնյակ մկներ. բայց չե՞ վոր ամբողջ խմբին դա բավական չե։

Գաղաններին կուրացնելու ու ավելի հեշտ գրավելու համար շատ թակարդներում դրած կախարդական միջոցներն ել չոգնեցին։

Առաջուց վորսի ուղարկած յերեխանները քիչ եր մնում լաց լինեյին անհաջողությունից։

Նրանք իրենց հայրերից խնդրած հաջողություն բերող հատուկ դեղ եյին բսում թակարդների թոկերին։

Նրանք քնքշաբար շոյում եյին թոկերը և աղերսանքով շնչում։

— Սիրելի թոկ, խնդրում եմ ավելի լավ աշխատիր, մեզ համար ավելի շատ վորս արա։

Վերջապես նրանք իրենց աղոթքներն ուղեցին մեռածների վոգիներին ու ուրվականներին, աղաչելով նրանց, հաջողություն տալ և վորքան կարելի յե շատ վորս գցեն իրենց թակարդի մեջ։

Բայց վոշինչ չեր ոգնում։

Թոչունները ծառից ծառ եյին թոշում ու, կարծես, ծաղրելով, իսկի չեյին ուղում թակարդն ընկնել. ճագարները խշացնում եյին խոտը, բայց թակարդները դատարկ եյին։

Ե. Հ. Հ.

176354



Յակելենեն զգաց, վոր պետք եւ վճռական  
միջոցների դիմել:

Նա մի զիլ սուլոցով բոլոր վորսորդներին  
հավաքեց բլրի վրա:

— Զողեր հավաքեցեք, ցանցերը պատրաս-  
տեցեք, հիմա կըսկսենք իսկական վորսը, — կար-  
գադրեց նա:

Տղաները վերցրին անհրաժեշտ գործիքները  
բլրի գագաթին շղթա կազմեցին:

Առաջնորդի տված նշանի համաձայն՝ խիս  
շարքերով մտան անտառը, աշխատելով անձայն  
գնալ:

Յակելենեն առաջինն եր, վոր իր ձեռքի  
ձողը շարտեց թոշող թոշունի վրա:

Սա մի ճարպիկ ու դժվար հարված եր:

Թոշունը ձողի հետ քարի նման վայր ըն-  
կավ:

Վորսն սկսվեց:

Ամեն մեկն աշխատում եր գերազանցել  
մյուսներին իր ճարպիկությամբ:

Խփում ելին ճագարների ու թոշունների:  
Ցանցերը փռում ելին: Յետեկի շարքը հազիվ եր  
հասցնում վորսը հավաքելը:

Վորսորդներն այնպես ելին տարվել այդ  
գործով, վոր յեթե Յակելենեն չհիշեր, թե խա-  
ռույկների մոտ վերադառնալու ու կերակուր յե-

փելու ժամանակն ե, վորսը կըշարունակվեր մին-  
չև զիշեր:

Յակելենեն վերջացնելու նշան տվեց:

Վորսերն ուսերից կախած, քրտնած, հոգ-  
նած, ըաց ուրախ ու հպարտ վերադառնում են  
յերեխաներն ու բարձրածայն, հաղթական յեր-  
գերով իմաց են տալիս իրենց հաջողության  
մասին:

Աղջիկներն արդեն կրակն ու ջուրը պատ-  
րաստել ելին:

Ուրախությունից նրանք ծափ ելին տալիս,  
բարձր ծիծաղում ու ճշում, դիմավորելով հա-  
ջողակ վորսորդներին:

Ճիշտ այնպես, ինչպես մեծերը վորսի տեղից  
գուռն ելին վերադառնում:

Աղջիկներն սկսեցին յեփել, վորսորդները  
վեր թափվեցին խրճիթներում՝ հանգստանալու և  
սառչելու:

Յակելենեն ուշադիր նայում եր իր վոտքի  
մասներին. նա շնաձանձ եր փնարում:

Նեզը պետք ե մաքրվի շնաձանձից, թե չե-  
ալդ միջատները կարող են նրա ամբողջ մար-  
մինը ծածկել:

Մյուս բոլոր յերեխաները հետեւցին իրենց  
առաջնորդի որինակին:

— ԱՇ, բոլորովին ուրիշ ե սպիտակների \*) քամը, թող մի չնաձանճ փորձի նրանց մօրթու վլրա ընկնել: Նրանք այնպես քնքշացած են, վորանմիջապես նկատում են և չեն հանգստանում, մինչև վոր մի բոյ \*\*): Ճի հեռացնում այդ չնաձանճը,—ասաց Մակուգեն:

Յերեխաները սպիտակներ քիչ ելին տեսել բայց նրանց մասին յեղած պատմությունները—ամենահետաքրքրականներն ելին:

Մակուգեն նույնիսկ՝ կոմենդատի \*\*\*): մոտ ել ե յեղել:

Սպիտակների մասին նա շատ բան կարող ե պատմել:

Մակուգեն սկզբում փքվում ե, կոտրատվում, բայց հետո սկսում ե պատմել:

— Սպիտակները... ախ, եղ սպիտակները: Նրանք մոծակի կծելուց ել հայնոյում են: «Թուրու»-ի կծածը նրանց կատաղեցնում ե: Ճանձի բզզոցը վախեցնում ե նրանց: Նրանք վախենում են ու ու թունավոր կարիճներից, վորոնք ապրում են հին տանիքներում, քարերի ու աղբակուտերի մեջ: Ամեն ինչ նրանց անհանգստացնում ե: Միթե տղամարդ անունը կըղը եղ-

\*) Գաղութներ նվաճող Փրանսիացիները:

\*\*) Սպիտակներին ծառայող տղա:

\*\*\*) Ֆրանսիական զորամասի պետ:

պիսի դատարկ բաների մասին պետք ե հոգաբանաց վոտքերը: Նրանք վոտքները փաթաթում են ու, դեղին կամ սպիտակ կաշվի մեջ: Դե, լավ, ասենք, ծայրահեղ դեպքում դեռ ելի հասկանալի լե, վոր վոտքները փաթաթում են կարած կաշվի մեջ: Բայց աչքները պաշտպանել սպիտակ, դեղին, կապուլտ, ու ապակիներմակ: Գույխները ծածկել փոքրիկ կողովիկներով: Եղ արդեն հիմարություն ե:

Մակուգեն արհամարհանքով թքուում ե: Յերեխաները հըսնուում են:

Նրանք տեսել են այդ ծիծաղելի, բայց նենդու չար սպիտակներին:

Սպիտակների մասին ամեն մեկը կարող ե մի վորեւ զարմանալի դեպք պատմել:

Նրանք ենսպիսի մեքենաներ ելին բերում, վորոնք մի կտոր փացտ պարտելիս, խոսում ելին ինչպես խեկահան սպիտակներ:

Հայրը ինքը տեսել ե: Նրանք դանակներ են կուլ տալիս:

Դա խեկի վիճելու բան չե: Ամբողջ յերկրում ով չի ճանաչում սոսկալի «Մորո-Կոմբո» կոմենդանտին, վոր սրեր ե կուլ տալիս, վոր խաղաղացրեց ավագակներին:

— Են տեսակներն ել կան, վոր իրենց աթոռներին նստած նայում են խողովակի միջով և ամենահեռու գյուղերը տեսնում են:

Եղ դեռ վոչինչ.—խոսեց Մակուղեն, — այ, մոտ ժամանակներու նոր կոմենդանու յեկավ, ու նա բոլորիներկայությամբ իր ձեռքի կաշին պղոկեց։ Ճիշտ ե, ալդ կաշին շատ չեր նման իսկական կաշի, բայց, դե, ելի կաշի յեր։ Այս, առանց փորեեց ցավ զգալու նա իրենից կտորներ եր պղոկում։ Յեթե ցավ տալիս լիներ, նա կաղաղակեր, այսինչ նա խոսում եր ու ծիծաղում։ Յերեխաները զարմացած լոել ելին։

— Ապա ախար ինչու լեն նրանք մեզ մոտ գալիս, — հարցրեց մի յերեխա, մի հարց, վոր հտպար անգամ կրկնել ելին հասակավորները։

— Ինչու։ Մեր հացը, կառչուկը, մեր գաղաները նրանց հարկավոր են։ Նրանք ուզում են, վոր մենք նրանց համար աշխատենք։ Ա՛յ ինչու։

— Նրանք խորածանկ են, ծուց ու չար։ Բայց ապա մի փորձիր նրանց չլսել.. Նրանք աշխատել չեն ուզում, բայց ծեծել ու սպանել լավ գիտեն։

Յերեխաներն ալդ բոլորը շատ լավ գիտելին—ճիշտ ե, ավելի շատ մեծերի պատմելով, վորովնետև սպիտակները հազվադեպ ելին յերեսում ալդ կողմերում։

Յերեի դեռ շատ յերկար կըխոսելին սպիտակների մասին, յեթե աղջիկները չհայտնելին, վոր ճաշը պատրաստ ե։

Բոլորը միևնույն վայրկյանին քաղց զգացին։ Բայց քաղցը կտորների համար վեճ, իրացնում ու կոիվ չկար։

Նրանք իրենց կարգին ելին պահում, ինչպես վայել և հասակավորներին։

Յակելենեն նստել եր մեծավորի պատվավոր տեղը, նրանից հետո աղաները—ըստ հասակի, իսկ աղջիկները, հասակավոր տանտիկինների նման, չելին նստում, այլ հյուրասիրում ելին և հոգս ելին քաշում։

Կերակուրն այնքան առատ եր, վոր վոչ վոք քաղցած չմնաց. իսկ վոմանք այնքան լցրին փորները, վոր չելին կարողանում կանգնել։

Փոքրիկ Գուղեն այնքան կերավ, վոր ախում վախն ընկավ և Յակելենեն ծակոցները թեթևացընելու համար ստիպված եր տրորել նրա փորը։ ասենք խնճուլքների ժամանակ մեծերի հետ ել և շատ պատահում այդպիսի բան։

Ուտելուց հետո յերբ մի քիչ հանգստացան, վորովեց, վոր շաքարցեղեցնի գնան։

Դա դժվար գործ ե և մեծ շրջահաւեցություն և պահանջում։

Ալդ պատճառով Յակելենեն հավաքեց մի քանի մեծ աղաների ու նրանք պատերազմական խորհուրդ կազմեցին։

Վորոշեցին գնալ յերեք մղոնի վրա գտնվող  
ժեր Նեսուրայի տնկարանը:

Բայց նրա ձեռքը չպետք ե ընկնել:

Բոլորը հիշում են, թե ինչպես նա յերեք յե-  
րեխայի քոնել եր, ու այնպես ջարդել, վոր քիչ  
եր մնացել մեռնելին:

Ճանապարհին հիշում ելին յեղեզն գողաճա-  
ռու բոլոր հայտնի դեպքերն ու ձերը:

Ո՞... այս գործում շատ խորամանկ ու զգուշ  
պետք ե լինել:

Ասում են Նեսուրան մի տեսակ խոտ զի-  
տե, վոր քսում ե յեղիզնի ցողունին, ով ուտի  
այդ յեղեղը, նա դիտակցությունը կորցնում է  
աննպատակ այնքան և վազում, վոր խոստովա-  
նում ե իր գողությունը:

Դե, ինարկե, նրանք ել հիմար չեն:

Ամեն մեկը ծամում է դառը, մողական ար-  
մատը, վոր բոլոր հետքերը կորցնում ե:

Բայց և այնպես պետք ե զգուշ լինել հետ-  
քերի նկատմամբ:

Այստեղ՝ տնկարանի շուրջը խոնավ կավ ե,  
վորի վրա շատ պարզ հետքեր են մնում:

Յակելենեն հնարը դատավ:

Նրանք կրունկները թարսած կը գնան: Յե-  
թե նույնիսկ հետքը գտնի Նեսուրան, ապա կը-

կարծի, թե զողերն արդեն հաջողությամբ յետ-  
են դարձել:

Համենայն դեպս, դա նրան կը մոլորեցնի ու  
կը շփոթի:

Այդպես ել արեցին:

Նրանք բոլորն ել շատ անգամ ելին փորձել  
յետուկետ գնալ և շատ ճարպիկ կերպով ելին ա-  
նում արդ:

Անա և բարձր խոտերի մեջ բսած յեղեղ-  
ները:

Զանազան կողմերի վրա բաժանվեցին, վոր  
միմյաց չխանգարեն: Ամեն մեկը մի մեծ կապ  
կը հավաքի ու կը պատի իր վոտքին:

Զգուշության համար ամենայն դեպս դա յել  
ե հարկավոր, չե վոր յեթե կապը վեր ցըցված լի-  
նի, գժվար չե հափշտակիչի փախչելու ուղղու-  
թյունը նկատել:

Իսկ այսպես թող ման գա, վազվի:

Յակելենեն հանում եր յեղեղը ու ականչ  
դնում. չե վոր նա բոլորի փոխարեն ուշադիր ու  
զգուշ պետք ե լիներ:

Նա արդեն մի կարգին կապ հավաքել եր,  
վոր հանկարծ ծանր վոտնածան լսեց, կարծես  
թե յեղեզների միջով ունգիեղջուր լիներ անց-  
նելիս:

ԶԵ, յերեխաներն այդպես անզգուց շաբժ-  
վել չելին կարող:

— Վտանգ—վարկենապես ըմբռնեց Յակե-  
թենեն և կամաց, անհանգիստ շվացրեց:

Նրան պատասխանեցին նույնպիսի շրվոցով,  
և ահա յերեխաների ամբողջ շղթան սկսեց փախ-  
չել պայմանավորված ուղղությամբ:

Վոտնաձայնը շարունակ ավելի մոտ եր լըս-  
վում, լսվում եր խոպոտ հայոցանքները.—այդ  
Նեսուրան եր, վոր չարությունից խեղդվում եր,  
թե ինչպես չհաջողվեց աննկատելի մոտենալ:

Յակելենեն նետի նման եր սլանում, վոտ-  
քից կապած յեղեգների կապը նրան չեր խան-  
դարում—այդպես վագելուն պետք ե վարժվել.  
Բայց նա անհանգիստ շրվացնում եր ու ականջ  
դնում, վախենալով, վոր ընկերներից մեկն ու  
մեկը Նեսուրալի թաթի տակն ընկնի:

Այ, նրանք դուրս յեկան յեղեգնուտից, վա-  
գելով անցան դաշտը, բլրակը և հասան այն հո-  
վիտը, ուր անհաջողության դեպքում, ըստ պատ-  
մանի՝ պետք ե հանդիպեցին միմյանց:

Յակելենեն անհանգիստ հայացքով նայեց  
շուրջը—այ մեկը, մյուսը, յերրորդը, հինգե-  
րորդը—ե, կարծես թե բոլորն ել հաջողությամբ  
տեղ են հասել և վոչ վոք իր յեղեգնի կապը դեն

չի պցել, վորը շատ մեծ անպատճություն կընա-  
մարվեր:

Բայց չե, փոքրիկ Գուգեն չկա:

Ե՛, ինչի համար ել յեկավ նա:

Մտածելու ժամանակ չկա: Վտանգը դեռ  
անցած չե:

Նեսուրան կարող ե իր վորդիներին ու շա-  
նը ձայն տալ, են ժամանակ վայ նրանց:

Յակելենեն հրաման տվեց.

— Վերցրեք իմ կապը, գնացեք բանակ, իսկ  
իս կըդնամ Գուգեցին վնարելու: Խայտառակու-  
թյուն կըլինի ծեր Նեսուրալի թաթում թողնել  
նրան:

Վոչ վոք չի հակառակում. ավարը պետք ե  
շտապով տանել. բայց գե առաջնորդը հո չի կա-  
րող իր ջոկատից մեկին ու մեկին թողնել:

Յակելենեն լավ գիտեր իր պարտականու-  
թյունը:

Բոլորն արագ ձանապարհ են ընկնում, իսկ  
Յակելենեն բարձրանում ե բլրակը:

Այս—հենց եղան ե վոր կա:—Գուգեն, ձա-  
պարի նման ցատկում ե դաշտով:

Նեսուրան հասնելով ե նրան:

Գուգեն վերջին ճիզն ե թափում. այ, հիմա  
ուր վոր ե, եղ չար ծեր շուն Նեսուրան կըբռնե-  
նրան:

Ո՛, են ժամանակ գուցե Գուղեն շուտ չի



լավանալ, գուցե խսկի չի լավանալ:

Յակելենեն չի մտածում, վայրենի աղաղակով արագ վազում եւ:

Նեսուրան շշմում եւ, մի բոպե քայլերը դանդաղեցնում եւ կ զլուխը շուռ եւ տալիս:

Յակելենեն բարձրացնում եւ փայտը, նշան եւ բննում եւ զցում եւ ուղիղ Նեսուրայի ծնկանը. սա ծիծաղաշարժ ձեռվ զլորվում եւ, կատադությունից զոռզոռում եւ, ուզում եւ վեր կենալ քայլ ծնկներն եւ բննում:

Գուղեն վախից խելքը կորցրած վազում եւ առանց յետ նախելու ու չի լսում Յակելենենի կանչելը:

Վերջինս դժվարությամբ համնում եւ նրան, բոնում եւ վզիցը, ուսերիցը բարձրացնում եւ ու յետ եւ վազում բլուրն ի վեր:

— Սպասիր, անիծված ավագակ. — ճշում եւ Նեսուրան, — սպասիր, տես քո ապուրը յես ինչպես կեփեմ:

Թեև զիտե, զոր Նեսուրայի սպառնալիքն անհիմն չե, բայց Յակելենենի սիրուը գողում եւ հպարտ ուրախությունից. — թեև, գուցե յերեկուան զլուղումը խիստ պեաք եւ պատժվի իր արարքների համար:

Իսկ այժմ... համենայն գեպս հաղթող եւ Ունա փոքրիկ Գուղելին ձեռքից բաց չի թողնում — սա յել պինդ կպչում եւ նրան: Փառակոր ավարի նման նա տանում եւ Գուղելին ու, յերբ նա մոտենում եւ դաշտին, բոլոր տղաներն ու աղջիկներն հիացմունքի և ուրախության ձիչ են արձակում:

— Կեցցե բաջ առաջնորդ Յակելենեն:

եր—չլինի թե յերեխաները հրավերի համար շատ  
պարզ կերպով արտահայտելին իրենց ուրախու-  
թյունն ու դրանով ստորացնելին իրենց:

— Բայց յերբ պետք ե գանք մենք ձեզ մոտ,

— հարցնում ե Յակելենեն, հանգստանալով, վոր  
յերեխաները նստած են անշարժ, կարծես, իսկի  
չեն ել լսում այս խոսակցությունը:

— Յերեկոյան, կովերը կթելուց անմիջապես  
հետո, յեկեք:

— Կըզանք, մեծ ուրախությամբ, — կըկնում ե  
Յակելենեն:

Հետո մի քանի մանրամասնությունների մա-  
սին պայմանավորվում են և Մոբելինից յեկած  
տղաները գնում են:

Հենց վոր նրանք աչքից ծածկվեն, իրենց  
ուրախությանն ազատություն տալ կարելի յե:

Ճշում են, ծիծաղում են, գլուխկոնծի յեն  
տալիս, իրար առաջ են կտրում:

Դե, ախար, շատ հաճախ չի պատահում այդ-  
պիսի հրավեր—ու են ել յերկու շաբաթ առա-  
ջուց. — կընշանակի՝ գա խակալան մեծ տոն կըլինի:

Իսկ մոբելինցիք շատ փառավոր կերպով  
հյուրասիրել գիտեն:

Մտածում եին, թե ելի վ՞ր կըալից կը-  
լինեն հրավիրվածներ:

Հրավիրել կարելի յե միան բարեկամներին,

## III

## ՏՈՆԸ

Մի անգամ, առավոտը վաղ, յերբ Յակելե-  
նեն գյուղի մլուս յերեխաների հետ անասուն-  
ներին արոտ եր տանում, Մոբելինի կրապի-  
մի քանի տղաներ հանդիպեցին նրանց:

Մըանք ուղեկցեցին մինչև արոտատեղը—ա-  
ռանց մի բառ ասելու: Բայց նրանք մի այնպի-  
սի խորհրդագոր ու հանդիսավոր տեսք ունելին  
վոր Յակելենեն խկույն հասկացավ, վոր հին  
մզոն հեռավից սըանք իզուր չեն յեկել:

Յերբ կովերը ցըգեցին արածելու մարդա-  
գետնում, տղաները նստեցին մի բլրի վրա՝ հան-  
գըստանալու:

Մոբելինցիների զլխավորը հազաց ու հանդի-  
սավոր կերպով ասաց.

— Մենք յեկել ենք հարցնելու, թե ձեր կը-  
րապի յերեխաները չեն ցանկանա մի յերեկո  
մեզ մոտ գալ՝ խաղալու:

— Մեծ սիրով կըզանք, — քաղաքավարի, բայց  
հանգիստ պատասխանեց Յակելենեն, մի խիստ  
հայացքով դիտելով իր տղաներին: Նա վախենում

թե չե, չե վոր բոլորը հիշում են, ինչպես յերկու թշնամի լնթանիքների տղաներ հանդիպեցին իրար, ինչպես բանը կովով վերջացավ ու շատերը գլուխները ջարդված, չորեքթաթ անելով իրենց աները վերադարձան:

Չե, Մորելինում եղափիսի բան չի կարող պատահել: Նրանք զիտեն ամեն բան առաջուց մտածել ու դատել:

Հուզված կրաալն են վերադառնում, բայց այդ նորությունն այնտեղ արգեն զիտեն:

Յերբ կրաալի աղջիկներն իրենց կժերը տարել են գետից ջուր վերցնելու ու ենտեղ զրուցի լեն նստել, Մորելինի աղջիկները լեկել, հըրավիրել են նրանց:

Թեև դեռ բավական յերկար ժամանակ կար, բայց պատրաստությունն հենց այդ որվանից սկսվեց:

Ե, զե, ենքան ել հեշտ չեր անհրաժեշտ ներկերը, ուլունքներով զարդարված գոզնոցները, թիկնոցները, ապարանջաններն ու մյուս բաները պատրաստելը:

Տոնին ամենաքիչը հարցուր հյուր կըհավաքվի: Վոչ վոք չի ուզում խախտառակիլել:

Իհարկե, հատուկ ջանք են թափում աղջիկները: Այս գործում տղաներն ստիպված են հպատակել և լսել նրանց կարգագրությունները:

Փոքրիկ յերկանքներ պատրաստեցին, ճիշտ այնպիսին, ինչպիսին սովորաբար հատիկ են աղում: Սպիտակ փափուկ քարը կտորներ են անում, աղում, բարակ փոշի յեն շինում, վորը ջրով շաղախում են ու նրանով լսվ բառում մարմին: Աղջիկները սիրում են ներկերը լսել իրենց: Այնպես են ներկվում, վոր ուղակի ձանաչել չի լինում: Վոճանք կարմիր ներկ են քըսում, վոմանք՝ սպիտակ:

Յակելենելին, իբրև առաջնորդի, ներկեցին ըսպիտակ—վոտքերն ու քըլուխը:

Ապա ինչպիսի զարմանալի զարդանակ կրում աղջիկները—ուլունքներ, խոտից ու պղնձալարից ապարանջաններ, վոր անց են կացնում ծնդներին, մարմի շուրջը, վզին, թևերին:

Իրենց թիկնոցներին նրանք կարմիր կավ են քսում, իսկ փեշի ծալը երը շատ սիրուն զարդարում են ուլուքով:



Վայրենի գաղանների մորթիներին այնքան ճարպ են քսում ու արորում, վոր բոլորովին փափկում են ու քնքուշանում, իսկ վայրենի կատուների պոչերը շատ գեղեցիկ են, յերբ փորի վրա կախ են տալիս:

Բայց ամենահետաքրքիրն ու դժվարը—դաշելն ե: Դա արդեն վերջին որվա գործն եր:

Տղաներն ու աղջիկները համարյա բոլորն ել վախենում ելին տաք մոխրից, ուստի և միայն սրածալը ձող ելին գործածում, վորը սպիտակավուն հետք եր թողնում—թեև այդ հետքը միան մի քանի որ եր մնում:

Բայց մի քանի աղջիկներ վորոշում են խական դաշ անել:

Նրանք կովի աղբով իրենց ձեռքերի վրա նախշեր են անում, հետո այդ նախշերի վրա տաք մոխրը են դնում:

Դա ենքան ել հեշտ տանելու բան չի, յերբ տաքութիւնն այրում է մորթը և փոքրիկ, կլորիկ այրվածքներ են առաջ գալիս: Բայց զրափոխարեն, յերբ այրվածքները լավանում են, նըրանց տեղ նկար ե մնում, վոր յերբեք չի ջընջում:

Աղջիկները հիացմունքից ձչում են և նախանձում, յերբ տեսնում են այդ գեղեցիկ նախշերը:

Յակելենեն ուրախ ե, վոր իր կրաալից իսկական դաշերով աղջիկներ կըլինեն:

Վերջապես հասնում ե յերկար սպասած որը:

Առավոտից սկսած աղջիկները տերեներից ու վայրի ծաղիկներից ծաղկեփնջեր ու պսակներ հուսեցին:

Նրանք ենպես գեղեցկացան ու փառավոր տեսք ստացան, վոր դժվար եր հասկանալ, թե զբանք իրենց հարազատ ընկեր—աղջիկներն են, վորոնց վրա սովորական ժամանակը տղաներն ենքան ել մեծ ուշադրություն չելին դարձնում:

Մայրը Յակելենելին մի տեսակ ճարպ ե քըսում, վորից նրա մորթը գեղեցկանում ե ու մաքրվում: Վոչ մի ճանգովածք, վոչ մի ուռուցք չմնաց—մի բան, վոր շատ կար առաջնորդի ճարմնի վրա:

Ճարպը քսելիս, ճարը իր սովորության համաձայն խրատներ ե տալիս:

— Գլխավորն են ե, վոր չկովեք, թե չեկասեն կովարար կրաալից են յեկել: Հետո չների նման կերակուրի վրա չհարձակվեք: Ամբողջ կրաալը կըխայտառակեք. կասեն՝ «տեսեր, սրանք սոված կըաալից յեկած յերեխեք են»: Դուք պետք ե ամբողջ ցեղի պատիվը հիշեք: Հա, մի բան ել, աղջիկների հետ հիմար կատակներ չանեք: Ինչքան հոգս են քաշել նրանք թե իրենց,

թե ձեզ համար: Իսկ տանտեղերի հետ դուք պետք  
ե չափազանց քաղաքավարի լինեք:

Յակելենեն հեզ լսում ե բոլոր առաջները և  
գլխով անում — «դե, ի հարկե»:

Հիմա նա ենպիսի դրության մեջ չի, վոր  
ուշադրությամբ լսի մոր դատողությունները:

Նա մի բան ե ուզում — շուտով պատրաստ  
լինել և շտապով ճանապարհ ընկնել:

Ինչ վերաբերում ե խրատներին, ատլա, դե,  
մայրն ինքն ել գիտե, վոր գրանք բավական ան-  
ոգուտ բաներ են:

Միթե հասակավորների առների ժամանակ  
ել եղած չի լինում:

Դե, դա յել ինչ տոն կըլինի, վոր հնարավոր  
չինի ըստ ամենայնի ուրախանալ:

Մութը ընկնում ե, վերջարտկութ բոցավա-  
սում ե յերկինքը: Բոլոր խրճիթներից ձեռքերի  
ու վոտքերի վրա հենվելով դուրս են սողում  
զարդարված տղաներն ու աղջիկները և միասին,  
խմբված վազում են հովտի նեղ շափով:

Կարիք չկա ստուգելու, թե արդյոք հավաք-  
վել են բոլորը:

Զի կարող պատահել, վոր վորհե մեկը ու-  
շացած լինի:

Արագ վազող ու յել ավելի արագ շաղակատող  
ու ծիծաղող յերեխաների այդ բարակ թելը վոչ  
մի տեղ չեր կարվում:

Միայն ուղիղ Մոբելինի կրամակի առջեւ բո-  
լորն ել մի քիչ դանդաղեցնում են իրենց վազը:

Յակելենեն առաջ ե անցնում:  
Երանք կրամակի միջով գնում են առաջնոր-  
դի խրճիթի մոտ. բլուրների վրայից շտապում են  
ուրիշ կրամակների յերեխաներ:

Այս — վառավոր տոն կըլինի:  
Առաջնորդը փողը ձեռքին նստած ե իր խըր-  
ըթի մոտ:

Յակելենեն ձոտենում ե, աջ ձեռքը բարձ-  
րացնում ե դեպի յերկինք և տսում ե. «Վախ-  
ետե»:

Բոլոր տղաներն ու աղջիկները կրկնում են  
նույնը:

Առաջնորդը նայում է նրանց և լուս շա-  
րունակում ծխել իր ծխամորձը: Բայց համենան  
գեպս նա նկատեց նրանց գալը, դուցե նա զի-  
տեց նաև նրանց զեղեցիկ զարդարանքները — դա  
ամենից գլխավորն ե:

Հետո մոտենում են առաջնորդի գլխավոր  
կնոջը և ձեռք են տալիս նրան, ապա բարեկում  
են կրամակի մլուս տնատերերին:

Անվայել ե, վոր սկզբից հյուրերը խոսեն.  
Նրանք նստում են ծալապատիկ և լսում են:

Մոտենում են ուրիշ կրամակ յերեխաներ:  
Թռու, նրանք նույնիսկ փետուրներ են ցցել ի-

բենց վրա։ Դա արդեն բոլորովին տղեղ բան է։ Ուզում ելին ծիծաղել, մի սուր խոսքով խայթել, բայց ստիպված ելին զսպել իրենց ու լոել։ Ասենք չե՞ վոր նրանք առանց խոսքի, հայացք-ներով. ժպիտներով ել իրար հասկանում են։

Վերջապես առաջնորդը վերջացրեց իր ծը-խելը, կանգնեց և ասաց.


— Հյուրերին ցուց տվեք տոնակատարու-թյանը հատկացրած խրճիթները։ Այս, լավ կը ի-նի, վոր շտապեք։

Հյուրերը յերկար խնդրելու տեղիք չեն տա-լիս և վազում են խրճիթները։ Այս խրճիթում, ուր կրաալի աղջիկները պահում են իրենց ծած-կոցները կախելով յերկու այլուներից կապած փո-կից, հյուրերը վերցնում են իրենց թիկնոցները և կոկում են իրենց։

— Այ այսաեղ—ասում են նրանց առաջնոր-դի կանանցից մեկը, — կարող եք քնել, յերբ տո-նից կը հոգնեք։

Տօնից հոգնե՞լ։ Յակելենեն արհամարհամնքով ուսերն ե շարժում միայն, բայց քաղաքավարու-թյամբ շնորհակալություն ե հայտնում։

Դա մի մեծ, կլոր խրճիթ ե, հատակին կը-ըակ ե վառած։ Ծուխը փոփում ե մթնապատ-տանիքի տակ, լցնում ե խրճիթը և յեղեգների խիտ ծածկի միջով դանդաղ դուրս ե գնում։



Պատերը հյուսած են ձողերից և կավով սվաղած. կավով սվաղած են նաև հատակը. խըր-ճըթի յետեի մասում յերեսում են կավե աման-ներ և դգումե անոթներ. Սյունից մի փոքրիկ հորթ և յերկու ուլիկ են կապած: Մոբելինցիք հարուստ են:

Այստեղ կարելի յեւ և շատախոսել, և ծիծա-ղել: Հայտնվեց «կրաալի արջառիկ»-ը: Դա ա-ռաջնորդի գլխավոր կնոջ անդրանիկ վորդին ե, ուստի թեև ընդամենը հինգ տարեկան ե, բայց փառավոր դանդաղութիւնմբ ե քաղում:

Նա մոտենում ե Յակելենելին և խորհրդա-վոր տեսքով ասում ե բարձրածայն շնչյունով.

Գիտես, միայն վոչ վոքի չասես, մենք մկներ բանեցինք և հենց ենպես, մորթով տա-պակեցինք. մենք շատ թոշուներ ունենք. զի-շերը, բլրի վրա մենք փետուրներով կուտենք շերանց: Նրանց զլուկներն ել, պոչներն ել կե-նում են: Շատ համեղ են: Միայն վոչ վոքի չպատճես: Սա մեծ գաղտնիք ե:

Յակելենեն շուված ե զգում, վոր կրաալի արջառիկը իրեն ե ընտրել՝ հետը խոսելու:

Բոլոր ազաներն ու աղջիկներն իրար առաջ են կտրում հաստափոր յերեխին զբավելու հա-մար:

Տոնից և ուտելուց առաջ բոլորի արամա-

դըրությունը շատ լավ ե. բոլորը փաղաքշում են իրար, ուրախ են և աշխատում են թագցնել ի-լենց անհամբերությունը ու շատ հաճախ չնա-յել դեպի այն կողմը, ուր խարուցկի մոտ կա-նալը ես կողմն—են կողմն են ընկնում և ընթրիք են պատրաստում:

Վերջապես գալիս ե այդ հանդիսավոր ժամը: Կրաալի առաջնորդը յերեք անգամ ծափ ե տալիս. «կրաալի արջառիկ»-ն ել, հորը նմանեցը-նելով, նույնպիսի փառահեղ տեսքով կրկնում ե նույնը:

Տղաները, աղջիկներն ու փոքրիկները դը-նում են ջոկ-ջոկ խրճիթներ, վոր նրանցից ա-մենքի համար ջոկ ե պատրաստված:


Սովորաբար յերեխաներին ու կանանց տղա-մարդկանցից հետո մնացորդներն ե ընկնում և քիչ անգամ ամենալավ կտորները:

Բայց այսոր արդպես չե: Այսոր նրանք—ա-ռաջին հյուրերն են:

Շըջանաձևնստում են կավե հատակին: «կրա-ալի արջառիկը» պատվագոր տեղ ե բռնում: Նա պետք ե կավե ափսեների և խոտից հյուսած մա-պետք ե կավե ափսեների վրա դարսի միոր և մյուս հա-տուցարանների վրա դարսի միոր և մյուս հա-մեղ բաները:

Այս ու այն կողմն են նայում, քթով համեղ բուրմունքն ազանությամբ ներս են շնչում:

Ել ինչ չկա այստեղ, վոչխարի ու այծի  
միս, պառավ հավեր, տապակած մորեխ, յեզիպ-  
տացորեն, մկներ, փոքրիկ թոշուններ—ամբողջա-  
պես փետուրներով տապակած, իսկ այդ բոլորի  
վրայից կարելի յե խմել մածնեթան:



Մայրերի բոլոր խրատները, թե սաստիկ ա-  
ղահությամբ չհարձակվեք կերակուրների վրա,  
մոռացվեցին:

Ճարպը հոսում է մատների ու կզակի վրա-  
յով կաթում եւ կրծքին, հոսում է փորի վրայով  
—վուկրները ճարճատում են:

Ո՞վ կարող եւ այդպես մաքուր կրծոտել:  
Բայց Յակելենեն հանդիսավոր կերպով հանում  
եւ հոր ընծալած գանակը:

Բոլորը զարմացած են, նույնիսկ մի ըոպե  
ծամելն ու չփշփացնելը դադարեցրին:

Տամնյակ ձեռքեր մեկնեցին դեպի նա: Յա-  
կելենեն ժպառում եւ և զլուխը շարժում:

— Վոչ, վոչ, գուք հիանալի կերպով կարող  
եք ուտել ատամներով ու մատներով: Բացի դրա-  
նից, պետք եւ գանակ բանեցնելն ել զիտեհնալ:  
Ամեն մարդ չի կարող:

Այնքան են ուտում, վոր պառկում են թի-  
կունքի վրա, փորները մաժում են, ու նորից  
վրա ընկնում:

Բայց բոլորը չեն կարող ուտել, սախալված  
են վերջ տալ: Փոքրերը դեմքներն ու մարմիննե-  
րըն ենալես են թաթախել կերակրի մեջ, վոր, կար-  
ծես, ամեն կողմից դաշած լինեն: Լավ եւ, վոր  
շները չեն հորանջում և, փոքրիկներին լիզելով,  
մաքրում են:

Դե, հիմա կարելի յե խաղալ, պարել, վազ-  
վրգել: Այսպես ուտելուց հետո յերկար ժամանակ  
ուժ կունենան:

IV

## ՏՈՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե

Տղաները թիկնոցներ կտած վերմակներ զբելով վրաները, սկսում են գաղել խրճիթի շուրջը և ճաքելով աղաղակում են.

— ՎՌԼ-ՊԼ-ՊԼ-ՆԼ, ՎՌԼ-ՎՈԼ-ՎՈԼ-ՎՌԼ...

Միանգամայն իսկական գալլերի նման:

Աղջիկների ու փոքրերի խրճիթում իրարանցում ե: Նրանք թեև զիտեն, վոր դա խաղ ե, բայց ելի սարսափելի յե. տղաները այնպես լավ սովորել են նմանվել գալլերին:

Կըսալի արջառիկն իր փառապանծությունը մոռանալով, սկսում ե թընզթնզալ, իսկ հետո գալլերից ել վատ ե վոռնում:

— Վա-խե-նում եմ, վա-խե-նում եմ:

Աղջիկները զրկում են նրան, ծիծառում են, աշխատում են սիրտ տալ: Բայց գալլերն ավելի ու ավելի կատաղի յեն դառնում:

— ՎՌԼ-ՊԼ-ՊԼ-ՆԼ, ՎՌԼ-ՎՈԼ-ՎՈԼ-ՆԼ...

Այ, հիմա հենց ուր վոր ե, ներս կըթափվեն խրճիթ:

— Դե, մի վախենար, — վեր ե թոչում վերջապես մեծ աղջիկներից մեկը՝ Յասսիկինջան —

մի վախենար, փոքրիկ արջառիկ: Ես ըսպելիս մենք դայլերին կըթենք: Մենք նրանց ականջներն ու պոչները կըկտրենք:

Յասսիկինջան աղջիկների առաջնորդն եւ ձարպկությամբ և ուժով նա գուցե վոչ մի տղայից յետ չմնա: Միայն համեստությունն ե ստիպում աղջիկներին միշտ զիջող լինել բայց այսոր չե վոր տոն ե:

Նրա աչքերը վառվում են ածուխի պես, կարմիր ներկով ներկած շրթունքների տակից փայլում են սպիտակ ատամները:

— Դե — հրամացում ե նա, — յեթե նրանք գայլեր են, մենք վորսորդներ կըլինենք:

Առաջինն ինքը՝ Յասսիկինջան ոձի նման գուրս ե սողում խրճիթց, նրան հետեւում են մյուս աղջիկները:

Մութ գիշեր ե. լուսինն ուշ դուրս կըգա:

Տղաներն իրենց թիկնոցների մեջ, խելազարների նման վագում են խրճիթի շուրջը:

— ՎՌԼ-ՊԼ-ՊԼ-ՆԼ, ՎՌԼ-ՎՈԼ-ՎՈԼ-ՆԼ...

Իսկ աղջիկները ձախ ձեռքերին մի-մի ձիպու են բռնել: Յասսիկինջանի նշանի համաձայն, նրանք միանգամից վեր են թոչում և վալրենի աղաղակով հարձակվում զալլերի վրա:

Սրանք հարձակում չեն սպասում, շատերը խայտառակարար վախչում են, մյոււները ծընկների տակ վեր են ընկնում:

—Ե՞-Ե՞-Ե. —հանդիսավոր կերպով աղաղակում ե Յասսիգինջան: Նա իր ծնկներով սղմել ե ամենառուժեղ գալիքն, ձեռքերով պինդ բոնել նրա գլուխը:

Գալիք թպրտում ե, մոնչում ե, վոլոր-մոլոր ե գալիա:

—ԶԵ, չԵ, լԵս քո ականջներն ու պոչը կը-կրտրեմ, —աղաղակում ե Յասսիգինջան այնպես կատաղի, վոր, կարծես, թե իսկապես խեղճ գալիք բանը բուրդ ե:

Բայց սա մի վերջին ճիգ ե թափում և դուրս ե սողում Յասսիգինջալի վոտքերի միջից. թիկ-նոցը մոռում ե նրա ձեռքին և աղջկա առջե առագությամբ վոտքի լե կանգնում Յակելենեն:

Նա գազագած ե, սղմում ե բունցքները, ծանր ե շնչում — մի բոտե տատանվում ե:

Յասսիգինջան ել լուռ ե. նա շփոթվել ե, համենայն գեպս առաջնորդն ե, կրաալի տղաների մեջ ամենից ուժեղն ու ճարպիկը:

Բայց չԵ, Յակելենեն չխփեց նրան, գետին չզցեց, նա զսպեց իրեն, միայն զալրացած առաց.

—Քեզ խորհուրդ չելի տալ ուրիշ անգամ մեր խաղերին խառնվել:

—Ինչպէս թԵ, —արհամարհանքով ժպտում ե Յասսիգինջան, արդեն գիտե, վոր տղան ել չ-

լսվի իրեն: —Ա՛յ քեզ բան, ինչու, կարծեմ յես չելի քո ծնկների տակ:

Յակելենեն և կատաղում ե, և զարմանում:

Ի՞նչպես, ուրեմն աղջիկները միշտ վախկոս լացլուկներ չեն:

Իսկ իր վզի ու կողքերի վրա դեռ շատ լավ զգում ե Յասսիգինջալի ձեռքերի ու ծնկների տեղը: Յակելենելի ճարը կարվեց: Նա աշխատելու Յակելենենի ճարը կարվեց մթության տում ե լախ բացած չար աչքերով մթության մեջ դիտել Յասսիգինջալին, կարծես, թե ամեն որ հարյուր հետ չեր տեսել նրան:

Ես ի՞նչ ե պատահել որան. գժվացնող կաթ հո չի՞ խմել:

Յասսիգինջան հանգիստ ժպտում ե և հեռանում:

Խաղը չափազանց աղմկալի յե դառնում: Մի քանի տեղ գալիքը հաղթել են վորսորդներին և կատաղի կերպով կրծոտում են նրանց:

«Կրաալի արջառիկը», վոր խրճիթում մենակ ե մնացել, շարունակում ե ճշար:

Կանայք անհանգիստ վազվում են մթության մեջ և իզուր տեղն աշխատում են կարգ պահպանել:

Գալիս ե կրաալի առաջնորդը. Նա հենց նոր ե վերջացրել ուտելը և մատները լիզում եւ Նա նայում ե այս իրարանցումին, հետո ծափ ե տալիս և միանգամից բոլորը լոռում են:

— Խուսինը դեռ գուրս չի լեկել, — ասում ե  
առաջնորդը, — պարելու համար ուժ պետք ե պա-  
հել, իսկ առայժմ պետք ե հանդստանալ խըր-  
ճիթում:

Բոլորը հնագանդությամբ ամենամեծ խըրճի-  
թի անցըից ներս են մտնում, նստում պատերի  
տակ, վորսի ժամանակ իրենց տեղից յելած ա-  
պարանջանները, գոգնոցներն ու զարդերն են  
ուղղում, շտկում:

Յակելինեն նայում ե աղջիկներին: Միթե  
սա նրանք ելին, վոր մի քիչ առաջ ախալես հա-  
մարձակ ու ուժեղ ելին, իսկ հիմի նստել են,  
ձեռքները ծնկներին դրել, չեն ել ծիծաղում,  
աչքերը վեր չեն բարձրացնում:

Ո՞հ, ինչ խորամանկներն են:

Յասսիգինջան ել, նրանցից ամենախորա-  
մանկը, հիմա ինչպես և համգիստ ու վախեցած  
նստել ենց գուան մոտ. ժպիտը չի շարժում նրա  
շրթունքները, աչքերը ծածկված են կոպերով,  
ապարանջանը չի զրնգում, ուսին խարանած ո-  
ձը չի վոլորվում:

Առաջնորդը ծխում ե իր մորձը և հանկարծ  
աղաղակում ե.

— Խուսինը:

Բոլորն իրար հըելով գուրս են սողում խըր-  
ճիթից:

Առաջնորդը ձիշտ եր գուշակել:  
Խուսինի պղնձե, գեղին, ժպտացող ոեխը  
գուրս ե սահում բլրի լետեից:

Խուսացավ, բայց վոչ ենպես, ինչպես ցե-  
լեկը, այ մի ուրիշ տեսակ — խորհրդավոր:

Բոլորը սըսկվեցին, բոլորը գիտեն, վոր տո-  
նի ամենալավ բոպեն՝ պարի ժամանակն ե զա-  
լիս:

Առաջնորդը, այս բոլոր հասակավոր տղա-  
մարդիկ ու կանայք, փոքրերի հետ նստում են  
բլրին, խոտի վրա:

Տղաները մի կողմն են շարք կանգնում, աղ-  
ջիկները՝ մյուս: Ել վոչ կատակ կա, վոչ ծիծաղ,  
վոչ իրարանցում:

Խուսինի գեղին ճառագալիթներն ուղիղ նրանց  
լերեսին են ընկնում, ապարանջաններն ու զար-  
դերը փալլիտում են:

Առաջնորդը բարձրացնում ե իր ծխամորձը.  
— բոլորը ականջ կտրած սառան տեղներում, ցած  
ե թողնում — բոլորը միասին լերգում են մեղմ ու  
հաղիպիտագ շարժվում են դանդաղ. տղաների ու  
աղջիկների շարքերը մոտենում են միմյանց, հե-  
անում, նորից մոտենում:

Պարն արագանում ե, բարձրացնում են աջ  
վոաքն ու ձախ ձեռքը, մարմինն առաջ են թե-  
քում: Վոտքներն աղմուկով գետնին են դոփում:

Յերգն ավելի բարձր ե հնչում, շարժումներն աշխուժանում են, պտտվում են ավելի արագ, շարքերն արդեն քանդվում են, ամեն մեկը յերգում ե ու պարում իր համար։

Հանկարծ առաջնորդը բլրի վրացից ճշում է.—Սեվելիվելէ։


Ու բոլորը պատսախանում են նրան. — Սեվելիվելէ, սեվելիվելէ, և արդեն վայրենի կատառաղությունը համակում ե պարողներին։

Թռչում են, ցատկում են, գոփում են, ճըշում են, կոտրտվում են, ամենասարսափելի ծածածություններ են անում։ Կարծես թե ամեն մեկն ուզում ե իր աղաղակով ու թոփչքով հաղթահարի մյուսներին։

Խմբվում, մի կուտ են գառնում, ուր միայն վեր բարձրացրած ձողերն են յերեսում, հետո փափում են ամբողջ տափարակում։

Իսկ Յակելենեն մեջ տեղն ե։ Նա պատվում ե նոյի նման, նրան թվում ե, թե գետինն ե պատվում և կատաղի կերպով պարում իր վոտքերի տակ, լուսինն ե պարում ժպիտը դեմքին, բլրակն ե պարում, իսկ ինքը վոչինչ չի տեսնում, վոչինչ չի լսում։

Նա զգում ե, վոր իրեն են նայում, իրենով են հիանում, նա հարբածի պես ե, կարծես, խելագար լինի։



Նրա ցատկումը ամեն անգամ ավելի բարձր է, ձախն՝ ավելի զիլ—սեվելիվելէ:

Նա խեղդվում է, բայց կանգ չի առնիլ. վոչ, նա ավելի շուտ մեռած վեր կընկնի, քան թե պարը կիսատ կըթողնի:

Այ, նա Յասսիգինջալի առջեն է:

Նրանք իրար առջև պտտվում են մի վոտքի վրա—բայց աղջիկը չի հասցնում, նա պետք է վոտքն ավելի արագ փոխի, նա հաղթված կանգ ե առնում, իսկ Յակելենեն խոպոտ, հանդիսավոր ձախով աղաղակում ե—սեվելիվելէ: Վոչ, պարելում վոք չի կարող համեմատվել նրա հետ—առաջնորդ Յակելենելի հետ:

Բոլորը նեղ ողակով շրջապատել են նրան, բոլորն ակամա նմանեցնում են նրա արագ շարժումներին, բոլորը հնազանդվում են նրա վայրենի աղաղակներին:

Ու հանկարծ—լոռություն. բոլորը քարացան, բոլորը լոեցին:

Կրաալի առաջնորդը կանգնեց բլրակի վրա, նա ժպտում է, նա շնորհակալություն ե հալունում պարելու համար:

Նա մատով իր մոտ ե կանչում Յակելենելին, խփում ե նրա մեջքին, ծիծաղում ե, ձեռք ե տալիս նրա վոտքերին ու ձեռքերին, կարծես թե չի հավատում, վոր անվասս են մնացել:

Նա խրախուսանքով չփշփացնում ե իր հաստ շրթունքները, և բոլոր տղամարդիկ ու կանայք շարժում են զլուխները:

— Հայ դա, Յակելենե:

Ու յերբ նա խառնվում ե հուզված շատախոսող տղաներին ու աղջիկներին, սրանք լեզվով տրխկացնում են, շոյում են նրա թիկունքը և ամեն կերպ իրենց ուրախությունն ու հիացմունքն են արտահայտում:

Յակելենեն հպարտ ե ու յերջանիկ:

Նա իրեն կատարլալ հերոս ե զգում:

— Ով լավ ե պարում, նա քաջությամբ ե կովում, — հիշում ե իր հոր իսոսքերը:

Նրա սիրաը պատրաստ ե դուրս թռչել կրծքից՝ ուրախությունից ու այն գիտակցությունից, վոր ինքն ուժեղ ե, ճարպիկ ու համարձակ:

Հանկարծ նա հիշում ե Յասսիգինջալին: Նա ինչպես համարձակվեց ալդպես հանդուզն կերպն ապով հարձակվել իր վրա ու հետո այնպես արապով համարձանքով ժպտալ: Բայց նա յել չի ուզում բարկանար:

Բացի դրանից յերկի հիմա նա յել կըխոսալովանի, վոր հաղթված է: Յակելենեն ուզում է, վոր նա խոստովանի ալդ:

Յասսիգինջան կանգնած է մի կողմ, նրա

գոզնոցի ուլունքը կարվել եւ ու նա աշխատում  
եւ հավաքել:

Յակելենեն մոտենում եւ նրան և հանդիսա-  
վոր ժպտով նայում եւ նրան: Նա ուզում եւ նը-  
րանից հիացմունքի խոսք լսել, կամ գոնե մի  
հնազանդ հայացք. չե՛ վոր նա պետք եւ խոստո-  
վանի, վոր պարելիս ինքը հաղթեց:

Բայց նա զայրացած կծում եւ շրթունքը և  
ծիծաղաբար ասում.

— Դե՛ լավ, մի խանգարիք: Քեզ ով եւ բանի  
տեղ դնողը:

— Ա՛յ, եղակա:

Յակելենեն մեծ ձիգ եւ գործ դնում, վոր  
զսպում եւ իր զայրութը և հանդիսատ հեռանում:

Բայց նա գեռ հաշիվ կընստի նրա հետ, նա  
վրեժ կառնի, նա կըծաղրի եղ ամբարտավան  
աղջկան:

Կրաալի առաջնորդը տղաներին կանչում եւ  
իր մոտ:

— Հասկա, կտրիչներ,—ասում եւ նա ժպտա-  
րով,—վորովիետե դուք լավ պարեցիք, դրա հա-  
մար ձեզ համար դառն եմ պատրաստել:

Կրաալի արջառիկն արդեն վազուց եր այդ  
մասին դուրս տվել, բայց տղաները զարմացած  
ու հիացած դեմք են ընդունում, հարձակվում են  
առաջնորդի ցուց տված ամանի վրա, հանում

են քերթած, պատրաստած դառը և ձեռքերով  
կտոր-կտոր են անում:

Հետո նրանք վազում են բլրակի դագաթը.  
այստեղ խարուկիների համար արդեն ցալ ե  
պատրաստած, իրարանցումն սկսվում ե:

Մոբիլիսցի մի տղա, պառավ ու չար բերսի-  
տից յերկու կատու իւ գողացել:

— Եգուց թող փնտրի նա, մենք ել կող-  
նենք փնտրելու, — ծիծաղում ե նա:

Կատուներին, ի հարկե, կուտեն:

Կրակն ուրախ բոցավառվում ե: Սրած ձողի  
վրա անց են կացնում գառան սիրտը և ձողը  
տնկում են գետնին: Ամենից առաջ, իրու մեծ  
առաջնորդի, Յակելենելի ձեռքերն են կապում  
մեջքին, ու նա պետք եւ աշխատի կծել որտե-  
կտորը այն միջոցին, յերբ փոքրիկ տղաները ձի-  
պոտներով հարձակվում են վրան:

Ո՛, ինչ ամեղ ե գառան սիրտը:  
Հետո հերթը մշուս տղաներին ե համումք:

Ամենափոքրին վոչինչ չի մնում, բայց վոր-  
պեսպի ծնողները չիմանան այդ բանը, նրանց յե-  
րեսին արյուն են քսում:

Սա արդեն շատ հին սովորութիւնն ե, ուստի և  
փոխանակ ասելու, թե «դու խարում ես ինձ»,  
հաճախ ասում են՝ «դու ինձ արյուն ես քսում»:  
Գառան սիրտն ուտելուց հետո, յերեխանե-

ըը յետ են անում իրենց վզից կախած տոպ-  
րակները, վոր պահում են կոնստանտիներին:

Ել ի՞նչ ասես, վոր չկա այդ տոպրակներում,  
թոկի կառներ, մկներ, կերակրի մնացորդներ,  
ապարանջաններ, սատկած թոշումներ, գնդասեղ-  
ներ, մորթ կարելու ասեղներ, ուտելու արժատ-  
ներ, հնդկական կանեփ, խխունջներ, մողեսներ  
—թվել չի լինիլ:

Ի՞նչ վոր կարելի յե ուտել, բոլորը մի կուտ-  
են կազմում և խարուցի վրա խորովում: Խնճուքն  
սկսվում եւ:

Յերբ բոլորն ուտում են, գառան վոսկրնե-  
րը կրծում, տղաներն իրենց կրկին ուժեղ ու-  
յեռանդու են զգում:

Զանագան կրաաների տղաները միմյանց  
խեթ-խեթ են նայում:

Այժմ կովի ժամանակն եւ:

Առանց ավելորդ խոսքերի, վորոշում են  
սկսել:

Վորպեսզի մթության մեջ խառնաշփոթու-  
թյուն չառաջանա, մի խումբը սպիտակ ներկ ե  
քսում:

Յերեխաներին խստիվ արգելված ե զինվո-  
րական պար պարել.—դա միայն իսկական զին-  
վորականների իրավունքն եւ:

Բայց այժմ հասակավորները ցըվել են իրենց

խրձիթները, ու այդ արգելված պարը կարելի յէ  
պարել ու զվարձանալ:

Նրանք գանդաղ ու հանդիսավոր կերպով  
ցերգում են զինվորական յերգը, ինչպես իսկա-  
կան զինվորներ. չե վոր կովում կարող ե պա-  
տալ — մեռնեն:

Յակելենեն իր կըրաալի զլուխն եւ:

Բառերն սկսում են սպառնալի հնչել, վոտ-  
քերն ու ձեռքերը լարվում են: Տղաները ձեռքե-  
րը վեր են բարձրացնում, սպառնում են թշնա-  
մուն, յերդվում են բաջ լինել, շարժում են իրենց  
փայտերը, սկսում են ավելի արագ շարժվել և  
շարունակ մոտենում են թշնամուն:

Յերգը զիլ ու կատաղի յէ հնչում:

Կրաաների առաջնորդներն անենից առաջ  
են կովի բոնվում և իրենց փայտերը խաչածն  
մոտեցնում են իրար:

Կոփիշ սկսվում եւ:

Հաղթող կընամարդին նրանք, վորոնք կանգ-  
նած կըմնան բլրակի գագաթին:

Յերգն արգեն ընդհատվել եր: Լուս, մթու-  
թյան մեջ, ատամները կրծտեցնելով, կովում են

ֆիրավորի, բռնում են հարվածները, վիրավոր-  
փայտերով, բռնում են հարվածները, վիրավոր-  
փայտերով, զինվորները են թոշում և հետո կրկին  
ները զիսիվայր ներքեւ են թոշում և հետո կրկին  
մազցում, վորպեսզի հաղթողի վոտքն ա-  
վերե մազցում, վորպեսզի հաղթողի վոտքն ա-

Յերբեմն միայն առաջնորդի խրախուսիչ ճիշպըն ե հնչում.—Ե՞լ, Ե:

Այս խիստ կոփվը յերկար ե շարունակվում, բայց ուժերը հավասար են և վոչ վոք հաղթող չեն նորիսանում:

— Բավական ե անկարգություն անեք, գընացեք խրճիթները.—Խորում ե կրաալի առաջնորդի քնաթաթախի ձայնը:

Կոփողները կամաց-կամաց հանգստանում են:

Յակելենեն և մյուս խմբի առաջնորդը կանգնած են բլրակի վրա և ձեռք են տալիս իրար:

Վերափորներն աշխատում են իրենց վերքերին ու կապուտածներին կավ քսել, վորպեսզի կովի վոչ մի հետք չմնա:

Շշկված աքաղաղները կանչում են վախեցած, զարմացած ձայնով:

Սև յերկինքը նեղ շերտով գունատվում ե արենելքում:

Աղջիկները նստած են խրճիթում ծխացող կրակի մոտ. մի քանիսը ննջում են, մյուսները կավե տիկնիկներով խաղում են, վոմանք ել հիշում են առնի մամրամամությունները, պարծենում են պարով և, ծիծաղելով, պատմում են գայերի գեմ գնացած վորսի մասին:

Միայն Յասսիգինջան լուռ ժապում ե. նա վոչ վոքի մոտ չեր պարծեցել վոր իր հաղթած գայն ինքը՝ Յակելենեն եր: Վոչ վոքի:

Աղջիկներն ափսոսում են, վոր իրենք տղաներ չեն և չկարողացան բլրի վրայի խնճուլքին մասնակցել:

Յասսիգինջան ժպտում ե ու լոռում:

Զե վոր նա ամենից խորամանկն ե:

Առավոտյան անհաճո ցուրտը ստիպում ե կուչ գալ:

Գլուխներն իրենք իրենց ծովում են գեպեգետին:


Տղաների վոտքներն ու մեջքները ցավում են, թարմ կապտածները՝ ալրվում:

Տոնը վերջացավ:

— Սպիտակները — շատերը դեռ ամենելին չե-  
րին տեսել նըանց:

— Ի՞նչ են ուզում, Նրանք յերբեք կրաալ չե-  
յին գալիս, այլ իրենց ճամբարում նստած միայն  
սպառնալի հրամաններ եյին ուղարկում:

Խրձիթների մոտ, բացատում հավաքվել եյին



բոլոր տղամարդիկ:

Նրանք գլուխները կախ, լուռ կանգնած են,  
իսկ նրանց թիկունքի յետել խոպոտ, տարորի-  
սկ, նրանց թիկունքի յետել խոպոտ, տարորի-  
սկ, յերբեք չլսված մի ձայն ե հնչվում, չար  
ու սպառնալի:

## Ս Պ Ի Տ Ա Կ Ն Ե Ր Ը

Լուսաբացին տնատերեքը յերեխաններին  
զարթեցնում են վոչ ենքան քաղաքավարի ձե-  
փով:

Բոլոր հոգնած են, բոլոր գրգոված:

Յուավուայն ողը ցուրտ ե:

Պառավ Բերսիտան ախ ու վախով, ամբողջ  
գյուղում փնտրում ե կորած կատուններին:

Տուն են վերադառնում յերեկվա շավդով,  
դանդաղ ու լուռ:

Միքանիսը կաղում են, մյուսների փորն և  
ցավում: Գլուխները ծանրացած են:

Ուղիղ կրաալի մոտ պատահում են Նեսու-  
րային: Նա վագում ե և, յերեխաններին պատա-  
հելով, ձեռքերը թափահարում:

— Վայ մեզ, վայ մեզ, սպիտակները յե-  
կել են. — և վագում ե ավելի հեռու:

Վոչ ենքան յերկյուղ, վորքան հետաքրքրու-  
թյունը համակում ե տղաններին ու աղջիկնե-  
րին:

Նրանք արագացնում են քայլերը և շուտով  
վազ են տալիս:

Ես ել քեզ սպիտակներ:

Նա խրճիցն ե գալիս:

Նա ամբողջովին պարուրված ե ինչ վոր  
կապույտ լաթերի մեջ:

Մակուդեն սուտ չեր ասում: Վոտներին  
ինչ վոր դեղին կաշի յե փաթաթած, գլխին սուր  
ծայրով մի տեսակ ծիծաղելի կողով կա.  
նրա մարմինը համարյա չի յերեսում, այնպես  
վոր դժվար ե ասել, թե ինչ դույնի յե:

Նույնիսկ դեմքն ել համարյա հնարավոր չե  
տեսնել, վերեից կողովն ե, ցածից՝ խիտ, շեկ ու  
կովի պոչի նման մազերը:

Յակելենեն աչքերը հառած նայում ե և  
հանկարծ զգում ե, վոր շրթունքները ժպիտ են  
կազմում. ենքան ծիծաղելի յե, վոր ուժ չկա  
զսպելու. բայց չե վոր չի կարելի՝ նա կարող  
ե բարկանալ:

Բայց նա չի նայում Յակելենեյին, նա  
նեզրերին հրելով, մեջտեղ ե անցնում:

Ու յերբ թիկունքները հեռանում են իրա-  
րից, Յակելենեն և բոլոր յերեխաները կարող են  
տեսնել, իրեն՝ կոմենդանտին:

Նա նստած ե փայտի կառների վրա, վոտ-  
քերը չուած. նրա դեմքին կատվի բեղերի նման  
սպիտակ բեղեր կան: Զեռքին յերկար մտըակ:

Նա բարկանում ե. նա խոպոտ մոնչյուն  
ե արձակում, նա սպառնում ե:

Նա աղավաղում ե նեզրական բառերը, բազ-  
մաթիվ սուր ու ճշացող հնչյուններ ավելացնե-  
լով վորի վրա, հայտնի չե, թե ինչու, մեծերը  
չեն ուզում ծիծաղել:

Նա սոսկալի յե և զզվելի:  
Դա—կոմենդանտն ե, վորի մասին այնքան  
սոսկալի պատմություններ են լսել մանկու-  
թյունից:

— Շներ,—խրխռացնում, ե կոմենդատը.—  
յես ձեզ ցույց կըտամ, յերեք տարվա ապառիկ-  
ներ, կարծում եյիք, թե ձեզ մոտ չեմ գալ  
շներ: Յես ձեզ պար կածեմ:

Նա վեր կացավ, շարժեց յերկար մտըակը,  
վորից սարսափահար բոլորն իրար գլխով դիպան.  
Նստեց ու նորից սկսեց սոսկալի կերպով մըոն-  
չալ ինչ վոր սպառնալի խոսքեր. իսկ նրա յետեն  
ելի բազմաթիվ սպիտակներ եյին կանգնած, ու  
նըանցից ամեն մեկի ուսից մի կարճ յերկաթե  
ձող կար կախած. յերեսի դա հենց այն ձողն ե,  
վոր մի մզոնի վրա կարող ե վոչ միայն մարդ  
սպանել, այլև նույնիսկ վագր:

Այսպես բավական յերկար շարունակվեց:  
Վերջապես կոմենդանտն աղավակելուց և  
մտըակը շարժելուց հոգնեց:

Նա վեր կացավ և հրամայեց, վոր իրեն ու  
բոլոր սպիտակներին կերպակութ ուան:

— Իսկ դուք, — վերջին անգամ մռնչաց նա,  
— իսկ դուք, չներ, մինչև ճաշը վերջացնելը —  
ամեն ինչ պատրաստեցեք: Թե չե...

Նա այնպես խրխռացրեց, վոր առանց բառերի յել կարելի յեր հասկանալ, վոր, թե չե  
ամենասուկալին կըպատահի:

Կոմենդանտը չցանկացավ խրճիթ մտնել:  
Խարույկ վառեցին ու սկսեցին ամենագեր վոչ-  
խարները տապակել, իսկ սպիտակները փոփեցին  
խոտի վրա, ծխում ելին և բարձրաձայն ծիծու-  
դում:

Նրանցից մեկը վերցրեց իր ձողը, վեր  
բարձրացրեց, ու հանկարծ կայծակ փայլատակեց  
և վորուը թնդաց հովտում:

Աղջիկներն ու շատ տղաներ լաց յեղան ու  
գետին ընկան:

Ինքը՝ Յակելենեն հազիվ կարողացավ պահել  
իրենիր գողացող վոտքերի վրա. — ասենք, նույն-  
իսկ հասակավոր տղամարդիկ ու ծերունիները  
սարսափահար լեզան:

Իսկ սպիտակները բարձրաձայն ծիծաղում  
ելին և իրենց ձիւերը թամբելով, փայլուն աման-  
ներ ու շներ ելին հանում:

Յակելենեն ման եր գալիս հասակավորնե-  
րի միջև ու լսում եր նրանց խոսակցություն-  
ները:

Կարծես թե նրանք բոլորովին շշկվել ելին:  
— Ապա ի՞նչ պիտի անենք, ապա ի՞նչ ովի-  
տի անենք, — շնչում ելին նրանք չորացած վը-  
թունքներով:

Կըաալում ամենից ծերը՝ ծերունի Պանդա-  
կուրան կամաց, բայց հաստատուն ձևով ասաց.

— Մենք չպետք ե համաձայնենք:  
Բոլորն ալլալված նայեցին սպիտակներին,

բայց սրանք ուտելով ելին զբաղված:

— Մենք չպետք ե համաձայնենք, — կըկնեց  
Պանդակուրան. — Յեթե առաջին անգամը մենք  
տանը, նրանք ենքան կըգան, վոր մեզ ել կու-  
տանք: Յերբ չաղալը մոտենում ե գաշտին, նա  
չի կշտանալ ու հեռանալ, մինչև վոր...

Պանդակուրան զլուխը շարժեց և մատով  
ցուց տվեց:

Բոլորն ել առանց բառերի հասկացան այն,  
ինչ վոր նա նույնիսկ չհամարձակվեց ասել:

— Մինչև վոր չսպանեն նրան. — ինքն իրեն  
հասկացան:

— Բացի դրանից, — շարունակեց Պանդակու-  
րը, — մենք ի՞նչպես կարող ենք տալ. չե՞ վոր մեր  
ըլ, — մենք ի՞նչպես կարող ենք տալ. չե՞ վոր մեզ  
պաշտան առանց այն ել չի բավականանա մեզ  
մինչև նոր հունձը: Ո՞վ կըկերակրի մեզ, լեթե  
մենք նրան տանք բոլորը, — իսկ նրան վոչ մի  
բան չի կշտացնիլ:

Սեվամոր առաջնօրվը Յ

Նա լոեց, բայց բոլորը հանգստացան ու  
ուժ ստացան:

— Բացի գրանից, ախար, դեռ հայտնի չե,—  
խոսեց խորածանկ Յաբողան, վոր սպիտակների  
մեջ շատ եր կացել,—հայտնի չե, թե նա իրա-  
վունք ունի՞ պահանջելու մեզնից: Ախար, սպի-  
տակներն ել բոլորը բարեկամ չեն միմյանց:  
Նրանք հաճախ վիճում ու կովում են իրար դեմ:  
Գուցե մենք իսկի չպիտի լսենք դրան: Յես գի-  
տեմ, վոր կրեդում մի ուրիշ կոմենդանտ էա,  
նա միայն ծիծաղում ե սրա վրա և հաստ յեզն  
ե ասում սրան: Ինքու եմ լսել:

Ճշնջալով, յետ նայելով դեպի սպիտակնե-  
րը, զլուխներն իրար մոտեցրած, կուցած, բազ-  
մաթիվ զանազան գեղեցեր եյին պատմում սպի-  
տակների մասին, նրանց կոմենդանտների մա-  
սին, այն մասին, թե ինչպես զալեմաները\*)  
և ֆրանչիները\*\*): Եթեք տարի յե կովում են  
միմյանց դեմ, և վոր ամենեին հայտնի չե, թե  
նրանցից ով կըհաղթի, վոր առանց նըանց ինչ-  
քան լավ եյին ապրում, աշխատում եյին, վոր-  
սորդություն անում, վոչ վոքի չեյին իրանդա-  
բում, վոչ վոքի ձեռք չեյին տալիս. վոր վոչինչ  
չունեն տալու և չի ել կարելի տալ:

\*) Գերմանացիք:  
\*\*) Ֆրանսիացիք:

Ճիշտ ե, ճիշտ ե ասում ծերունի Պանդա-  
կուրան:

Իսկ սպիտակները նրանց վրա վոչ մի ու-  
շագրություն չեյին դարձնում, ուտում եյին,  
խմում, շարունակ ավելի ու ավելի բարձր ու ու-  
րախ եյին խոսում, և իսկապես ել ենպես սոս-  
կալի չեյին թվում:

Նրանք անվերջ ուտում եյին:  
Թվում եր, թե նրանք յերբեք չեն կշտա-  
նա, կերան վոչխարները, կերան հավերը, դա-  
տարկեցին իրենց տուփերն ու շները:

Նրանք աղաղակում եյին, ձեռքները թա-  
փահարում. սկսեցին յերգել, ծիծաղել:

Փոքր յերեխաները շրջապատեցին նրանց:  
Ճիշտ ե, շատ չեյին մոտենում, բայց ուշադիր դի-  
տում եյին:

Այ, ինչ բաներ են եդ սպիտակները:  
Բայց հանկարծ հաստ կոմենդանտը վոտքի  
կանգնեց, վոտքի թուան և մնացածները:

Նա նրանց ինչ վոր հրամաններ տվեց:  
Նրանք արագությամբ շղթա կազմեցին և  
սկսեցին բոլորին՝ տղամարդկանց, կանանց, յե-  
րեխաներին, քշել կրասլի մեջ տեղը:

Կոմենդանտը բեղերն ոլորեց, իր մարակը  
ու խացրեց ու հարցրեց.  
— Հը, պատրմու ե:

Բոլորը լուռ եյին:

Կոմենդանտը հոնքերը վրա տվեց:

— Խլացէլ եք, շներ:

Այս ժամանակ Պանդակուրան, վոր բոլորի  
առջևն եր կանգնած, ցած, բայց հաստատուն  
ձայնով ասաց.

— Զենք կարող:

— Այ քեզ բան, — վոռնաց կոմենդանտը:

— Զեք կարող, իսկ յես կարող եմ: Դուք  
յերկի ինձ լավ չեք ճանաչում, — ու նա ձեռքով  
նշան արակ իր սպիտակ զինվորներին:

Սրանք ձողերը բարձրացրին և արդեն վոչ  
թե մեկ, այլ քսան վորոտ թնդաց բոլոր կողմե-  
րից:

Յակելենեն ընկավ. նա կարծում եր թե մե-  
ռած ե, բայց լացի ու հառաջանքի ձայներ լսեց  
և գլուխը բարձրացրեց: Բոլորը — մեծ ու փոքր  
ընկած եյին գետնին և աշխատում եյին գլուխ-  
ները թացներ:

Բայց բոլորը կենդանի յեյին, յերեխ սպիտակ-  
ները միայն վախեցնել ուզեցին. սակայն յեթե  
նրանք ուզենան, յեթե միայն այդ հաստ կոմեն-  
դանտը նրանց նշան տա, ապա վոչ վոք կենդա-  
նի չի մնալ:

— Տեսաք, ստոր կապիկներ, — վոռնում եր  
կոմենդանտը. — յես ձեզ բոլորիդ փոշի կարող եմ  
դարձնել: Դե...

Ու նա բացով խփեց ծեր Պանդակուրայի  
շլսին:

Բայց նա չոքած տեղից չբարձրացավ ու  
կրկնեց.

— Զենք կարող, պարոն, չենք կարող:

Կոմենդանտը նորից նշան տվեց և չորս ըս-  
պիտակներ թռան դեպի Պանդակուրան:

Յերկուսը բռնեցին նրա զլսիցն ու վոտքե-  
բիցը և իրենց մտրակներով սկսեցին հարվածել  
նրան:

Ամբոխն իրար անցավ. բոլորն ել ուզու-  
ելին փախչել, վորպեսզի չտեսնեն, թե Պանդա-  
կուրիայի մարմինը ինչպես ե կծկվում հարված-  
ների տակ, չլսեն նրա ցավի հառաջանքները:

Բայց շուրջ կանդած սպիտակները վոչ վո-  
քի դուրս չեյին թողնում շրջանից, նրանք հար-  
ձակվում եյին վրանները, սպառնում եյին յեր-  
կաթե ձողերով:

Յակելենեն կանգնել եր և զգում եր, վոր  
իր ամեն մի մատը, ամեն մի մկանը դողում ե,  
և սա արդեն վոչ թե յերկուղից եր, այլ՝ այ-  
բող անտանելի ատելությունից:

Նրան թվում եր, թե ել համբերել չի կա-  
տող, վոր հանակ կըհարձակվի, յեղունդներն ու  
առամերը կըխրի այդ սպիտակների մարմնի մեջ:

Ու նա չեր կարողանում աչքերը հեռացնել

70

մարակներից, վորոնք բարձրանում և շաջունով  
խրվում եյին Պանդակուրայի մարմնի մեջ:

Նա արդեն չեր աղաղակում, չեր աղաչում,  
այլ միայն խոպոտ հառաչանքներ եր արձակում:

Ամեն ինչ մոռացած, բռունցքները սեղմած,  
Յակելենեն հանկարծ թռավ, բայց մեկն ուժեղ  
ձեռքով բռնեց նրա վզից:

Նա զարցացած շուռ յեղավ—նրան բռնողը  
Յասսիգինջան եր:

Նրա աչքերն ել եյին վառվում ատելու-  
թյամբ. նա լիզում եր չորացած շրթունքները,  
բայց նա ամուր բռնել եր Յակելենեյի ուսից:

— Թռղ.—ուզում եր դուրս պըճնել նա:

— Ի՞նչ ես անում.—շնչում եր Յասսիգին-  
ջան, — նա քեզ ճանճի պես կըսպանի: Կանգնի՛-  
տեղի:

Պանդակուրան ել չեր հառաչում: Վերջապես  
ոզիտաներն ել հոգնեցին խփելուց:

Կոմենդանտը ծիծաղում եր:

— Աս միայն առաջին ծանոթության հա-  
մար: Իսկ յեթե յես ձեզ մեր ճամբարը քշեմ,  
դուք են ժամանակ կիմանաք, թե կոմենդանտ  
կուտառը ինչ կարող ե անել ձեզ, դուք լավ  
էր հասկանաք: Յես ձեզ վանդակի մեջ կըդնեմ և  
կուտարկեմ Փարիզ, ենակեղ ձեզ վայրենի կեն-  
դառանդիների նման ցույց կտան, մինչև վոր սատ-

կեք. վոչ վոք չի կարող փախչել իմ ձեռքից:  
Նա քացով խփեց դեռ ելի անշարժ պառկած  
Պանդակուրային:

— Հեռացըք այս լեշը:

Մի քանի ձեռք մեկնվեցին դեպի անբաղդ  
ձերունու մարմինը:

— Դե, իսկ դուք,—նորից խոսեց կոմեն-  
դանտը,—իմացեք, իմամ մենք պետք ե ելի մի  
տեղ գնանք, իսկ վաղը կըվերադառնանք. ամեն  
բան պետք ե պատրաստ լինի—առանց գես ու  
գենի, թե չե ձեր հոտած կրաալից հետք չի  
մնալ: Իսկ այժմ, ասում են, թե դուք լավ պա-  
րողներ եք: Դե, մի պարեցեք, գրողը տա-  
նի ձեզ:

Ու նա այնպիսի մի ձեռվ տրըխկացըեց իր  
մտրակը, վոր ակամա ձեռքն ու վոտքը շարժ-  
վեցին: Յերգը հնչում եր մելամաղձոտ, ինչպիս-  
ցավագին մի վողը:

— Ավելի ուրախ, — աղաղակեց կոմենդանտը:  
Յակելենեն կանգնած եր անշարժ, բարկու-  
թյունը խեղզում եր նրան. նա չեր կարողանում  
աչքերը հեռացնել կոմենդանտի հաստ ու զզվելի  
մարմնից:

Հավանականաբար, նա նկատեց այդ բոցա-  
վառվող զազազած հայացքը:

— Իսկ եդ սատանի ձուտն ինչու չի պա-

քում: Ինչպես յես տեսնում եմ, դուք բոլորու այստեղ համառ եք:

Նա կանգնած եր ուղիղ Յակելենեյի դիմաց, թվում եր, թե նա իր հայացքով ուզում եր ծակել Յակելենեյի գանգը և իմանալ նրա մտքերը:

Բայց Յակելենեն կանգնած եր անշարժ:

— Ա՛յ քեզ բան, ուրեմն դու չե՞ս ուզում ինձ լսել:

Մտրակը շաշեց ու փաթաթվեց Յակելենեյի ծնդներին, կարծես, սուր դանակով կտրեց:

Յակելենեն տատանվեց և, ձեռքերով ծնկները գրկած, ընկավ:

Կոմենդանտը կրկին բարձրացրեց իր սոսկալի մտրակը և հանկարծ Յասսիգինջան նրանց մեջ տեղն ընկավ:

Նա ձեռքը բարձրացրեց հարվածը կասեցընելու համար, հետո շարժեց ամբողջ մարմինը, պտույտ յեկավ, պարեց:

Կոմենդանտն ակամա աշքերը նրան զցեց և շուտով ել մոռացավ Յակելենեին:

Իսկ սա պառկած եր ու նայում եր, թե ինչպես ե պարում Յասսիգինջան. ամոթն ու զայրույթը խեղդում եյին նրան, ծնկներն արյունվիկ եյին:

Ո՛, ինչպես ե պարում Յասսիգինջան:

Նա ցակտում եր բարձր, նա պտույտ եր պալս մի վոտքի վրա, նա յերգում եր:

Յակելենեն գիտեր, վոր նա պարում եք իրեն վրկելու համար: Իսկ յերբ նա վերջացրեց պարը, կոմենդանտը ծիծաղեց և պինդ քաշեց նրա ականջը:

— Շատ լավ ե պարում այս աղջիկը:

Յասսիգինջալի աշքերը լցվեցին արցունքով, բայց նա ճշաց, չհեռացավ միայն իր սպիտակ ատամներով կծեց շրթունքը: Կոմենդանտն իր զինվորներին հրամայեց պատրաստվել:

Արդեն ձին հեծած միջոցին, նա բոունցքով սպառնաց և աղաղակեց:

— Սպասեցեք ինձ:

Մայրը լալով վրա ընկավ Յակելենեյին: Ծընկներն այնպիս ցավում եյին, վոր չեր կարողանում վոտքի կանգնել:

Մայրը կավ գրեց, տերեներով փաթաթեց և փոքրի նման գրկեց ու տուն տարավ:

Ամբողջ կրաման իրարտնցման մեջ եր: — Ապա ի՞նչ անենք, ապա ի՞նչ անենք. — շշնջում եյին բոլորը յերկյուղած, դողդողացող ձայնով:

Պանդակուրան ուշի գալով, բարձրացրեց գլուխը և թույլ, բայց հրամայողական ձայնով, ասաց:

— Մենք պետք ե գնանք անտառ, հենց այս գիշեր:

նոր ու հետաքրքրական բան եր խոստանում։  
Միայն կանայք ցավակցաբար շարժում ելին  
պուխները Բայց թե, դե, նրանք միշտ մի բա-  
նից վախենում են ու վորեւ բանից դժգո՞ւ են։  
Նրանց վրա ուշադրություն չպիտի դարձնել։  
Յերբ անտառ հասան, Պանդակուրան հրա-  
մայեց իր պատգարակը յած դնել, բարձրացավ  
և աղոթեց անտառի աստվածներին։—Դե, այժմ  
նրանց իշխանության տակն ելին, իսկ նրանց  
հետ շատ բազաբավարի պետք ել լինել. չե՛ վոր  
անտառը — դաշտը չե՛, այնտեղ և ոձեր կան և  
ընձառյուծներ, այնտեղ շատ հաջողությունների-  
կարելի չե հանդիպել, Բայց հեշտությամբ ել  
մարդ կարող ե վունչանալ։

Սկզբում նրանք գնում ելին մի շափուկ,  
բայց շուտով շավիդն սկսեց նեղանալ, բացի ՊԵ-  
րանից Պանդակուրան իր ծրագիրն ուներ։

Նա բոլոր տղամարդկանց առաջ կանչեց և  
հրամայեց ծառերը կտրտել և անտառի ամենա-  
խիտ ծմակը ճանապարհ բանալ, կանայք ու յե-  
րեխաները յետեի շարքն ելին կազմում։ Յերե-  
քոլոր անասուններն անցնում ելին, նրանք շա-  
վիդը լցնում ելին կտրտված ծառերով, ճյուղե-  
րով, արմատահան արած թփերով, այնպես վոր-  
այգպիսով հետքը կորչում եր և նրանց հետապըն-  
դելն անհնարին եր դառնում։

Գիշերվա ուղիղ կիսին ճանապարհ ընկան։  
Կանայք լալիս ու ախ ելին բաշում, Յավա-  
ի յեր հայրենի խրճիթը թողնել, — բացի դրանից,  
ամեն ինչ հետը վերցնել չեր կարելի։

Հավերն ելին բոնում, վոչխարներն ելին կա-  
պում, կովերն ու յեզներն ելին քշում, բարձում։  
Յակելենեցի վիրավոր ծնկները դեռ մըմը-  
ռում ելին, թեև զգույշ, բայց նա արդեն կարո-  
պանում եր քայլել։

Պանդակուրայի համար ճյուղերից պատգա-  
րակ հյուսեցին, գրեցին վրան ու տարան։ Նա  
ցվարթ եր, ուրախ և բոլորին մխիթարում եր։

— Մի վախենաք, դատարկ կրաալում նը-  
րանք յերկար չեն մնալ։ Նրանք չեն սիրում ի-  
րենք աշխատել։ Մենք անտառում կըսպասենք ու  
ըգերադառնանք։ Հետո, մենք միթե չենք կարող  
հիանալի կերպով տեղավորվել անտառում։ Այն-  
տեղ մենք հիանալի խրճիթներ կըշինենք, իսկ  
վորաը մեր ամբողջ կյանքում կըրավականանա։

Տղամարդիկ ու տղաները հեշտությամբ մը-  
խթարվում ելին։ Անտառի կյանքը նրանց շատ-

Դանդաղ եյին առաջ շարժվում. անտառում  
ճանապարհ գնալը հեշտ չէ:

Յակելենեն ձգում եր յետ չմալ աշխա-  
տելիս, թեև ստիպված եր քիչ կաղալ:

— Ախար, քեզ համար դժար ե աշխատել-  
ուսաց Յասսիգինջան, վոր նրա կողքին եր:

— Չե, յես արդեն ել ցավ չեմ զգում, — պա-  
տասխանեց Յակելենեն, և ելի մի անգամ դար-  
մացած նայեց Յասսիգինջային. ենպես խորա-  
մանկ ու մեծամիտ աղջկը ինչու յե եսպիս հո-  
գատար ու բարի դարձել:

Չե, յերբեք չի կարելի իմանալ, թե ես աղ-  
ջիկներն ինչ են մտածում:

Ախապես առջեկց ճանապարհ հարթելով և յե-  
տեից ծածկելով այդ ճանապարհը, յերկար ժամա-  
նակ գնում եյին; Քանի գնում, անտառը խտա-  
նում եր, տեղ-տեղ ուղղակի պատի նման եր,  
փշավոր բույսերը հյուսվել եյին իրար:

Զահերը բոցավառվում եյին, կովերը բառա-  
շում: Ճյուղերը ճարճատում եյին — դա վախե-  
ցած ու հետաքրքրվող կապիկներն եյին, վոր  
աղմուկով հեռանում եյին չտեսած հյուրերից:

Միայն արել դուրս գալուց հետո, Պանդա-  
կուրան կանգ առնելու նշան տվեց:

Շրջապատի ծառերը կտրտելով, փոքրիկ բա-  
ցառը մեծացրին: Ճամբար զցեցին, ճյուղերից

ու տերեներից արագ-արագ հյուղեր շինեցին,  
խարույկներ ծխացրին, բայց ամենից գժվարը  
ջուր գտնածն եր:

Պանդակուրան յերկար ժամանակ նայում եր  
մեկ արկին, մեկ ծառերին, մեկ ձեռքը գետնին  
եր քում, ինչ վոր բան եր ասում, կարծես, աշ-  
խատում եր հիշել մի բան, կամ գուշակել:

Հետո նա ձեռքով ցույց տվեց մի կողմի  
վրա և ասաց.

— Շարունակ ուղիղ զնացեք, հինգ հար-  
յուր քայլ չանցած, մի առվակ կա: Վորպեսզի  
ժմակում չմոլորվեք ամեն քսան քայլի վրա մե-  
կը կանգնեցեք և միմյանց ձայն տվեք:

Զուր գտնելը — դա յերեխաների զործն եր:

Յակելենեն հավաքեց բոլոր աղաներին, աղ-  
ջիկներն ել կժերը վերցրին և ծմակի միջով ճա-  
նապարհ ընկան: — Թփերը կոտրտում եյին, իսկ  
հաստ ծառերի կողքովն եյին անցնում:

Նրանք դեռ յերբեք այդպիսի անտառում  
չեյին յեղել:

Վոտքները խրվում եյին փափուկ խոտի մեջ,  
կանաչ, գեղին ու կարմիր թռչունները ծլվում  
եյին ճյուղերի վրա, թփերի վրա գալթակղեցնող  
պտուղներ եյին յերեւմ, բայց այդ պտուղների  
թունավոր լինել:

Յերեխաներն ուրախանում եյին և զարմա-  
նում այդ բոլորի վրա:

Վոչ վոք չեր ուզում պահակ կանգնել և  
Յակելինեն ստիպված եր հրամայել—եր եշտա-  
նությամբ:

Ծմակով անցնելն այնքան ել հեշտ չեր. նը-  
րանց մարմն վրա շատ քերծվածքներ ու հետ-  
քեր մնացին, բայց ով ուշադրություն կըդարձ-  
ներ նման հասարակ բաների վրա:

Իսկապես, չորս հարյուր քայլ անցած, ծա-  
քեռն սկսեցին նոսրանալ և, շուտով մի սիրուն  
հովիտ յերեաց, վոր ամբողջապես ծածկված եր  
գեղին ու սպիտակ ծաղիկներով, իսկ առվակը  
իր գեռ հեռվից լսվող յերգն եր յերգում: Ու-  
րախ ու բարձրածայն աղմուկով յերեխաները  
վաղեցին դեպի առվակը:

Աղջիկները քաղում եյին այդ չտեսնված  
ծաղիկներից, իսկ տղաներն շտապեցին լողանալ:

Նախ քան կժերը լցնելը, յերկար ժամանակ  
խմում եյին պարզ ու սառնորակ ջուրը, հետո  
լողացան. առվակը բավանին լայն եր ու խոր,  
այնպես վոր վոչ միայն ծածկվել այլ նույնիսկ  
կարելի յեր մի քիչ լող տալ: Ու ամեն ըոպե  
չեր կարելի դողալ, վոր կոկորդիլոս կերեա:

Յերեխաների մի մասն անցավ առվակի  
մյուս ափը, իսկ Յակելենեն լողացավ, պառկեց,

ձեռքերը փոեց և տաքանում եր արեի տակ.  
աչքերը փակում եր և յերեկվա պատկերներն  
արագությամբ անցնում եյին նրա մաքովը. — սպի-  
տակ կոմենդանտը, տոնը, պարերը, Յասսիկին-  
չան, Պանգակուրայի հառաչանքերը, մտրակի շա-  
ջան, Շանգակուրայի հառաչանքերը, շառակի շառ-  
չունը և ծնկների ցավը: Յակելենեն հոգնել եր,  
չունը և ծնկների ցավը: Յակելենեն հոգնել եր,  
չունը և ծնկների ցավը: Յակելենեն հոգնել եր,  
չունը և ծնկների ցավը:

Յակելենը քնեց:

Հանկարծ մի ծակող, սոսկալի ճիչ ստիպեց  
նրան վեր թռչել:

Կժերը թռղած, տղաներն ու աղջիկները  
փաղում եյին դեպի բացատը. շատերն արդեն  
թագնվեցին անտառում:

Յակելենեն միանգամից վոչինչ չկարողա-  
ցավ հասկանալ ու նկատել:

Առվակի մյուս կողմը, թվերի յետեր սեին  
եր տալիս փոկրիկ Գուղեյի ժարմինը, վորին մի  
անգամ Յագելենեն աղատեց նեսուրայի թաթե-  
րից:


Գուղեն պարկած եր մեջքի վրա. նրա վրա,  
կարծես, քնքշությամբ փաղաքշելով, մի չափ վո-  
լորմոլոր յեկող մեծ կատու յեր կոացել:

«Բնձառյուծ», — կայծակի պես անցավ Յա-  
կելենեյի մտքով:  
Գուղեն չեր աղաղակում, չեր շարժվում, մի-

այն ձեռքերն ու վոտներն եր մի թեթև շարժում,  
կարծես, թե աշխատում եր յետ մղել իրեն կա-  
մաց դիպչող թաթերը:

Կարելի յեր կարծել, վոր ընձառյուծը պար-  
զապես խաղում, զվարճանում ե փոքրիկ Գուգեյի  
հետ:

Նա կամ իր բեղավոր դնչով, վոր Յակելե-



նեյին հանկարծ սպիտակ կոմենդանտին հիշեց-  
րեց, սղմում եր նրան, կամ յետ եր կանգնում,  
կարծես, թե ուզում եր բաց թողնել Գուգեյին.  
Բայց հենց վոր սա մի շարժում եր անում, թե-  
թոււթյամբ դիպչում եր իր թաթով և նորից փը-  
ռում եր մեջքի վրա:

Յերբեմն կամաց փնթփնթում եր, կարծես,  
թե հանգստացնելով, իսկ նրա կանաչակարմիք  
աչքերը հառած եյին Գուգեյի դեմքին, կախար-  
դում եյին նրան և ստիպում լոել:

Յակելենեն հմայվածի նման նայում եր այս  
սոսկալի տեսարանին և չեր կարողանում շարժ-  
վել, ճշալ:

Ի միջի այլոց, նա գիտեր, վոր ճիչը, շարժու-  
մը գործը կը փչացնի միայն. այն ժամանակ ըն-  
ձառյուծն իսկույն վերջ կտա Գուգեյի կյանքին,  
վորպեսզի մի վոստյունով հասնի յերկըռդին:

Յակելենեն կը կին անշշուկ պառկեց խոտե-  
վրա մի քանի բողե, ու փորի վրա ընկած, հա-  
ղիվ շարժելով խոտերը, շարունակում եր դի-  
տել այդ ահուելի խաղը:

Ընձառյուծը կուչ եր դալիս, մեկնվում, նը-  
րա բեխավոր դունչը, կարծես, ժպտում եր, և  
այդ ժամանակ փայլատակին եյին տալիս նրա  
դեղնավուն, սուր ժանիքները:

Բայց ահա Գուգեն վեր թռավ, ինչ վոր ճիչ  
արձակեց, վոր վոչ հառաչանք եր և վոչ խեղզ-  
ված աղաղակ:

Կընշանակի նա դեռ կենդանի յեւ:  
Ընձառյուծը ծանը կերպով կը կին պառկեց-  
րեց նրան իր թաթով, յերեի խիստ ձանգսեց  
Գուգեյին. սա յելի հառաջ շարժվեց և ընձառյու-  
ծը չար ու արհամարհուս ժպտաց, բուրդը մի քիչ  
փշաքաղվեց, նա սկսեց բարկանալ:

Հետո նա սղմեց Գուգեյի մարմինը, կարծես,  
խեղդում եր կամ փաղաքշում:

Առանց յետ նայելու, վախենալով վոր չի կարող զսպել ու կաղաղակի, Յակելենեն ոճի նման, զգույշ հառաջ սողաց բարձր խոտի միշտ:

Միայն անտառին հասնելուց հետո, նա վոտքի կանգնեց ու փախավ. արմատներին կոլչելով գոյթում եր, վառերը սաստիկ ցավեցնելով և թփերից ճանկուավելով:

Պահակ կանգնած բոլոր տղաները փախել են և Յակելենեն հեշտությամբ կարող եր մուրփել:

Սոսկումը նրան ույժ եր տալիս և ստիպում եր մոռանալ ծնկների ցավը:

Յակելենեն փախչում եր, կարծես, դեկը կամ ընձառյուծներ եյին ընկել յետեկիցը:

Նա չեր մտածում. արդյոք, ճիշտ ուզդությամբ ե գնում,—ականջ չեր գնում, գայթում եր, ընկնում, վեր կենում ու նորից վազում:

Վերջապես նա ուժասպառ յեղավ, նա քրտընքից թրջվել եր, ճանկը վածքներից արյուն եր հոսում:

Յակելենեն հենքեց մի հաստ ծառի, շունչ քաշեց և նոր մտածեց.—ո՞ր ե ճամբարը, ո՞ւր ե պահակ կանգնած տղաների շղթան, վ՞որ կողմը պիտի գնա ինքը, վոր գտնի նրանց:

Բայց շուրջը ծառեր եյին, թփեր, բարձր

խոտ,—մի նշան չեր կարելի առանել, վոչ մի ձայն չեր կարելի լսել. Աներկլուղ առաջնորդ Յակելենեյի սիրալ վախ ընկավ:

Նա, փշավոր թփերի արանքով, նորից սկսեց վազել, վախենալով վորեա ձայն հանել, վորպես զի ընձառյուծը կամ մի այլ վայրենի գաղան չուի:

Փոքրիկ Գուղեն, վորին փաղաքշում եր ընձառյուծը, կանգնած եր նրա աչքերի առջև,


Բայց վազելով քանի ույժ ուներ, Յակելենեն ընկավ խոտի վրա:

Նա սկսեց մտածել.—հիմա ի՞նչ պետք ե անի: Ամենից առաջ պետք ե հանգստանալ:

Ճամբարը շատ հեռու չղետք ե լինի—բայց ի՞նչպես գտնի:

Մի բանի բոպե պառկելով, Յակելենեն փռացեց բարձրանալ ամենաբարձր ծառի կատարը և նայել թե, չի յերեսում արդյոք խարույկների ծուխը: Ճյուղից ճյուղ բռնելով Յակելենեն արագությամբ բարձրացավ ձկող գաղաթը, բայց զուր եր նա զլուխն այս ու այն կողմը թերի զում. բացի անխնահ կիզիչ ու ժպտացող արեից, բռնմ. բացի անխնահ կիզիչ ու ժպտացող արեից, յերկնքից ու ծառերի անշարժ, սուր կատարներից, վոչինչ չեր յերեսում:

Գուցե ընձառյուծից վախեցած բոլորը հեռացել են. չեր լսվում վոչ կովերի բառաչը, վոչ աքաղաղների կանչը, միայն թռչուններն են:



Կապիկներ են...  
Յակելնեն բարձրածայն  
ծիծաղեց:

Կապիկները նեղացան, և  
նորից կոծոճների ու փալտե-  
րի տարափ տեղաց Յակելե-  
ների վրա:

Յակելնեն հիշեց, վոր նը-  
րանք շատ կռու են:

Նա մի ամենավայրենի ձիչ  
արձակեց, ամենասոսկալի  
գեմք ընդունեց և մի բուռ  
կոծոճ հավաքեց և շպրտեց  
կապիկների վրա:

յին անընդհատ ծլվլում, ու կամ այս տեղ, կամ  
այստեղ ճարճատյուն եր լսվում, վորից դողում  
եր Յակելնեն. չե՞ վոր դա ընձառյուծի, սոսկա-  
լի մահվան քայլերը կարող են լինել:

Հուսահատությունն ու հոգնածությունը հա-  
մակեց Յակելնեյին: Նա իջավ ծառից և զգում է,  
վոր ել ուժ չունի վոչ վաղելու, վոչ փնտրելու,  
վոչ վախենալու:

Նա փոփեց խոտի վրա, և նույն վայրկե-  
նին արել գաղարեց լույս տալ. թաշունները՝ յեր-  
գել. — նա քննեց:

Յակելնեն քննեց ծանր ու յերկար. վերջա-  
պես նա զգաց, վոր մեկը խփում ենրան, բայց  
չկարողոցավ միանգամից արթնանալ:

Յավն ստիպեց նրան շարժվել, հառաչել և  
վերջապես աչքերը բաց արավ:

Սուր կոծոճների, փայտիկների, ճյուղերի  
մի ամբողջ տարափ թափեց նրա վրա:

Յակելնեն ցատկեց:

Առաջին բոպեյին նրան թվաց, թե սա յերե-  
խաներն են խաղ սարբել նրա գլխին:

Բայց չորս կողմը վոչ վոք չեր յերեւմ:

Նա աչքերը վեր բարձրացրեց և ծառի տե-  
րեմների մեջ մազու ու կնճռոտած ոեխներ տե-  
սավ. Նրանք մի բոպե իրենց հարձակումը դա-  
դարեցնելով, նայում ելին նրան հետաքրքրու-  
թյամբ և չարությամբ:

Բայց սրանք չվախեցան, այլ ճշացին նույն-  
պես սուր ու զզվելի:

Դրանք ահազին կինամոնագույն կապիկ-  
ներ եյին, վորոնց նմանը Յակելենեն դեռ յեր-  
բեք չեր տեսել: Նրանք մի ամբողջ հոտ եյին:

Նրանք զըջապատել եյին բոլոր ծառերը և  
յերկի վորոշել եյին Յակելենեյին կենդանի բաց  
չթողնել:

Իսկ յեթե հանկարծ հարձակվեն նրա վրա  
և իրենց կեռ ու ուժեղ թաթերով խեղդեն...

Յակելենեն խիտ թփերի մեջ թագ կացավ  
և շարունակեց խփել նրանց. բայց կապիկներն  
ափելի ու ավելի յեյին զայրանում և ավելի շեշ-  
տակի յեյին խփում:

Յակելենեն հիանալի հասկանում եր, վոր  
այս բանն իր համար կարող ե տխուր վախճան  
ունենալ:

Յեթե նա փախչի, կապիկները սիրո կառ-  
նեն, կըհամեն - կըջարդեն կամ կըխեղդեն նը-  
ըան:

Այ, յեթե նա աղեղ կամ շպրտելու կացին  
ունենար...

Բայց հենց թեկուր ալդ ժամանակ, ի՞նչ  
կարող եր անել մի ամբողջ հոտ թափամազ դե-  
ղերի դեմ:

Նա շարունակում եր հարվածել կոծոծնե-

րով կապիկներին, յերբեմն ճշալով զլիսին կամ  
կըծքին կպած շեշտակի հարվածից:

Սպատվելու ժամին նա այլև չեր մտածում.  
Դա անողուտ եր:

Հանկարծ կապիկները, կարծես, ի՞նչ վոր  
հրամանի համաձայն դադարեցրին Յակելենեյին  
խփելու:

Սկզբում ոա չհավատաց. կարծեց, թե ինչ  
վոր խորամանկություն ե:

Յակելենեն զգուշությամբ զլուխը դուրս  
հանեց թփերի տակից:

Բոլոր կապիկները շուր եյին յեկել դեպէ  
մի կողմ, նայում եյին, ականջ եյին դնում:

Մի բանից վախեցել եյին:  
Միանգամից, կամաց ու վողբալի վոռնո-  
ցով, ծառից ծառ թռչելով, ուացան հենց Յա-  
կելենեյի զլիսի վրայով:

Նա կարողացավ միմիւյն վոլոր-մոլոր յեկող  
պոչներն ու յերկյուղից դողացող դնչները  
տեսնել:

Յակելենեն դեռ ուշքի չեր յեկել վոր ծա-  
ռերն ու թփերը ճարճատեցին ամեն կողմից,  
վոռնոցով ու աղմուկով անտառը լցվեց:

Վայրի վարազը, ծանր լսդնդալով, վախե-  
ցած խոխոցով, փախավ հենց Յակելենեյի  
մոտով:

Այծամը թռավ, թռչունները յերամով վեր քարձրացան: Բոլորը սարսափահար գնում եյին, բոլորը փախչում եյին, Յակելենեյի վրա վոչ մի ուշադրություն չդարձնելով:

Եերտավօր իշառյուծը ցատկեց ու թագնը-  
վեց ծառերի յետեր:

Անսահման յերկյուղ պատեց Յակելենեյին. յերկյուղն ել վարակի նման անցնում ե մեկից մյուսին, նույնիսկ այն ժամանակ, յերբ չես մը-  
տածում:

Յեկ ահա ամբողջ անտառում ճայթյուն ու  
ճարճատյուն լսվեց. սա արդեն վոչ թե կենդա-  
նի արարածների քայլեր եյին, սա մոտենում  
եր ինչ վոր սոսկալի բան, վոր կորուստ ու մահ  
եր բերում:

Կարծես, հեռավոր ծառերի յետերից քուլա-  
քուլա թուղպ եր բարձրանում, ու Յակելենեն  
հանկարծ ցածում ծխացող ու ընկնող կարմիր  
ծիլեր տեսավ. — կրակն եր:

Հրեղեն լեզուները բարձրանում եյին խիս  
խոռից և լիզում եյին ծառերի արմատները, կր-  
բակ:

Կրակն արդեն բոլորովին մոտ եր. ծուխն  
արդեն պարուրել եր Յակելենեյին, վորը ընձառ-  
յուծի գեղնակարմիր աչքերից, կարծես, կախարդ-  
ված, կանգնել եր:

Բայց կարծես մեկը սողոսկաց Յակելենեյի  
վոտքերի տակ ու զարթեցրեց նրան. — փախիր,  
փախիր:

Յակելենեն առանց յետ նայելու վազում  
եր, բայց զգում եր, վոր ծուխն ու կրակը հաս-  
նում են իրեն:

Կողքերից բոցն արդեն առաջն եր ընկնում,  
և ծուխը, խիտ ամպի նման պաշարում եր նը-  
րան: Յակելենեն կրունկներում այրող տաքու-  
թյուն զգաց և սառը քրախնքը պատեց մարմինը:

Միենույն ե, ազատվել չի կարելի. անտա-  
ռը յերբեք վերջ չունի, կրակն այնպէս արագ  
գալիս ե յետերից: Յերբեմն կայծերը Յակելենեյի  
առաջն ելին ընկնում:

Նա փակում եր աչքերը, հաստ ծառերի բը-  
նովն եր ընկնում և վազում եր, վազում:

Մի ինչ վոր մեծ կենդանի, քիչ մնաց վեր  
զցեր նրան: Նա յետ կրնկեց. կնշանակի՝ առջեն  
ել մի ահոելի բան կա:

Բայց Յակելենեն ել չեր կարողանում մը-  
տածել:

Կենդանին ընկավ ու ճանապարհը կտրեց:  
Յակելենեն թափով ընկավ նրա վրա:

Վերջացավ:

— Յակելենե, Յակելենե, — հանկարծ նա-  
ծանոթ ձայներ լոեց, բայց չեր համարձակվում  
հավատալ:

— Յակելենե, Յակելենե,

Նրան շրջապատեցին, վեր բարձրացրին։  
Յակելենեն դժվարությամբ բաց արագ աչքերը։  
Նրան շրջապատեցին վորսորդները, հայրենի  
կրասլի բոլոր տղամարդիկը։

Դա Պանդակուրալի հրամանով — կրակով  
վորսորդություն ելին սարքել։

— Հիանալի գազան դուրս քշեցինք ծմակից,  
— ծիծաղում ելին վորսորդները։

### Փ Ո Թ Ո Ր Ի Կ

Յակելենեն չկարողացավ միանգամից հավա-  
տալ, վոր ինքն ազատված եւ կրկին յուրային-  
ների շրջանումն եւ։

Բայց չեւ այս, ծերունի Պանդակուրան նըս-  
տած եւ կտրած ծառի վրա, ահա և հայրը։ Ա-  
սենք վոչ վոք մի առանձին ուշադրություն չեր  
դարձնում նրա վրա։  
Բոլորն զբաղված են, բոլորն ել ականջ ու  
աչք են կտրվել։

Ահա հենց նոր ծառերից մաքրած նեղ ու-  
յերկար բացատն են վագում ամեն ըսպե, կրա-  
կի սոսկումից խելքները կորցրած դանազան դա-  
զաններ։

Պետք եւ միայն վրա հասցնել նետահարել  
նրանց և շպրտելու կացիններ զցել։  
Մի քանիսին հաջողվում եւ դուրս ալքծնել —  
անցնել վորսորդների մոտով, բայց հեռու փախ-  
չել չեն կարող, վորովհետև յետեռում խոր փոսեր  
են փորած և խորիվով ծածկված։  
Պետք եւ չմոռանալ կրակի մասին և հանդ-  
ցընել, յեթե նա արդեն բացատն եւ մտնում, թէ

չե հետո՝ գուցե թե հեշտ չլինի վերջ տալ նրան:

Ազահությունից բոլորի աչքերը փայլատակում են. սպանած և նույնիսկ բոլորովին չսպանած կենդանիներին թոկ են գցում և քարշ տալիս ճամբարի կողմը:

Յակելենեն մոռացած իր քիչ առաջ կրած յերկյուղը, հիացմունքով դիտում ե այս կրակով գորսը. Նա միայն լսել եր զրա մասին—ինքը դեռ յերբեք չեր տեսել:

Շուտով ինքն ել ե մասնակցում ընդհանուր աշխատանքին՝ պարան ե քաշում, հող ե ածում կրակի վրա, վոր ծմակից ավելի ու ավելի յե մոտենում:

Բայց վերջապես ծմակը դատարկվեց—գաղանները դուրս քշվեցին և կոտորվեցին կրակում:

Ծառերը սեացան, կրակը կարմիր դույնով լուսափայլում ե արդեն շատ մոտ. խեղդող ծուխըն ստիպում ե փոշտալ ու թքել:

Պանզակուրան հրամայում ե, վոր բոլորը հանգժնելու գործին կենան:

Արագ փոսեր են փորում, վոր պետք ե կրակի առաջն առնի, կայծերը ճայթյունով թըռչում ե այրում են մարմինները. բայց վոչ վոք զրա վրա ուշաղրություն չի դարձնում—պետք ե աշխատել ու աշխատել, թե չե կրակը կըվո-

ընչացնի ամբողջ վորում և հենց իրենց բանն ել չավ չի լինիլ:

Կրակ վառելը հեշտ ե, բայց միշտ ել հեշտ չե հանգժնելը:

Յակելենեն լարում ե բոլոր ուժերը. Նա լավ գիտե, թե ինչպես սոսկալի ու կործանալար կարող ե լինել կրակը:

Աշխատում ելին յերկար ու համառորեն, Պանզակուրան կրակի զեմ անեծքներ եր շշնջում, բայց մեկ այստեղ, մեկ այստեղ, թփերի մեջ բոցավառվում ելին վիշտալի կրակե աչքերի նման:

Բոլոր կանանց ու յերեխաներին ել կանչեցին, փայտերով, ձեռքերով ծածկում ելին կրակը, վոր, թշշալով ու մեղմելով, հանգչում եր ե նորից սողոսկում մի ուրիշ տեղից:

Վերջապես ել վոչ մի տեղ կրակ չեր յերեւում, միայն կծու ծուխն եր կոկծեցնում աշքերը:

Յակելենեն բոլոր նորություններն իմավ:

Փոքրիկ Գուղեն այսպես ել չվերադապավ. Վոչ վոք չհամարձակվեց ընձառյուծի զեմ գնալ:

Յերկի դա ծեր «բասմատ»-ն եր, վորը փրկանք վերցրեց նեղըերից, վոր սրանք ծմակը —իր իշխանության սահմաններն են մտել:

պատմությունները, թե ինչպես նա քիչ ե մնացել մոլորդի ծմակում և «բառմատո»-ի ճանկն ընկնիւ:

Ենքան ել չեր հետաքրքրում:  
Վերջապես կերակուրն յեփվեց: Տաղակած  
մսի հոտը գրգռում է նրանց հօտոտելիքները:

Բոլորը վրա ընկան ուտելիքին:

Կենդանու մարմինը կացիններով կորտում ե-  
յին ու հետո ձեռքերով ու ատամներով պատառ-  
պատառ անում: Բոլորն աղահությամբ շտապում  
եյին ամենազեր կտորները վերցնել: Թեհ սիսն  
այնքան շատ եր, վոր վոչ թե միայն մարդկանց,  
թյու և շների համար ել լերկի շատ-շատ կըլիներ:

Այն միջոցին, յերբ բոլորը տարգած եյին  
ուտելով, հանկարծ մի չարագուշակ ու ծոր տվող  
վոնոց լսվեց:

Շները խլըշկոտացին ու հաջացին. բայց  
տղամարդիկ սկզբում վոչ մի ուշադրություն չը-  
դարձրին:

Վոռնոցը կըկնվեց:  
Պանդակուրան գլուխը բարձրացրեց և ա-  
կանչ դրեց:

Ականչ դրին և տղամարդիկ, և կանայք, և  
յերեխաները. միայն ամենից վորքերը շարու-  
նակում եյին յուղոտ վոսկըների համար կովել:  
— Սրանք վոչ գալեր են, վոչ չախկաներ,

Ճամբարը շարժվեց դեպի հովիտ, դեպի  
նոր տեղը, ուր առվակը լայնանում եր և կալան  
լինելու ամեն հարմարություն կար:

Մոտակայքում տեսել եյին անտառային  
նեղերի, վորոնք չեյին մոտենում, բայց հեռ  
վից սպառնում եյին իրենց մահակներով:

Յակելենելին ել մեռած եյին համարում:  
Վերադարձան ճամբարը:

Կովերն անհանգիստ բառաշում եյին, պա-  
ռավները զլուխները պտրտում եյին և շնչում,  
թե որա վերջը բարի չե:

Խարույկները վառեցին և սկսեցին յեփել:

Յակելենեն հոգնածությունից և քաղցից  
կանգնել չեր կարողանում: Նա յել ազատվե-  
լու ուրախություն չեր զգում: Տղաները շըր-  
ջապատել եյին նրան և հարցեր եյին տա-  
լիս. նրանք ուզում եյին իմանալ ընձառ-  
յուծի և խեղճ Գուգեյի մասին, կապիկների ու  
կրակի մասին:

Շատ աղջիկներ ել եյին լսում և յերկու-  
դից չեյին կարողանում զապել իրենց բացա-  
կանչությունները:

Յասսիգինջան իր մորն ոգնում եր կերակուր  
յեփելու ու, կարծես, չեր ել նկատում Յակելե-  
նելի վերադարձը:

Նրան ենքան ել չելին հետաքրքրում այն-

սրանք անտառային նեղրեր են, — ասաց Պանդակուրան. — Նրանք մսի հոտն առել են և յեկել: Պետք ե պատրաստ լինել:

Յակելնեն, ինչպես մյուս յերեխաները, լսել ելին նեղրերի մասին, վորոնք ապրում ելին ծմակում, վորոնք ավելի շուտ կապիկների ու բորենիների յեն նման, վորոնք նույնիսկ մարդ են ուտում և մարդկային լեզուն չեն հասկանում:

Վորովինեակ համարյա արդեն բոլորը կուշտ ելին ու վոռնոցը շարունակվում եր, ուստի կը ու վողները ճարպոտ ձեռքներն իրենց մազերով սըրբելով, վերցրին գենքերը, բայց Պանդակուրան նշանակի կանգնեցրեց նրանց:

— Մենք պետք ե աշխատենք սկզբում հաշտությամբ վերջացնել գործը: Այսպես թե այնպես, մենք նրանց յերկրումն ենք և նրանք ամեն ըստե կարող են վնասել մեզ:

Կովողներն իրենց աղեղները պատրաստեցին և ուղևորվեցին գեպի ծմակը՝ այն ուղղությամբ, փորտեղից լսվում եր վոռնոցը:

Տղաները ծածուկ հետևեցին նրանց — ուղամ ելին անտառային նեղրերին տեսնել:

Յերբ առվակն անցան, թփերի մեջ ինչ վորստվերներ ելին նշմարվում:

Կովողները կանգ առան: Պանդակուրան

ձեռքը դրեց բերնին և, ծոր տալով, ցավագին վոռնոց: Ճիշտ այնպես, ինչպես ըիշ առաջ վոռնում ելին անտառային նեղրերը:

Սավերները շարժվեցին թփերի մեջ և շուտով ի պատասխան լսվեց սուր վոռնոց:

Պանդակուրան ձեռքը բարձրացրած առաջ գնաց, բայց հանկարծ տատանվեց ու ընկավ. Կոգնաց, վերցրին գենքերը, բայց Պանդակուրան ծոծների, սրած փայտերի մի անձրև թափվեց թփերից:

Յակելնեն հիշեց կապիկներին:

Մի քանի կովողներ ել ընկան, մյուսներն արագ քաշեցին աղեղները և նետերն արձակեցին դեպի թփերը, ուր նշմարվում ելին ստվերները:

Թփերի մեջ չարացած ու կատաղի վոռնացին, կարծես, թե մի ինչ վոր ահոելի գաղան նետահար եր յեղել ու ցավից կատաղել:

Կովողները շարունակ նետահարում ելին. Թփերից ել կոծոծներ ու սրած փայտեր չելին գցում:

Պանդակուրան վոտքի կանգնեց, վոտքը թեթև ճանդառվել եր և արյուն եր գնում, Բայց նա ձանդուար կովողներին արգելեց կովողներին գարունակել:

Թփերի մեջ պառկած տղաները դայրանում ելին. — Նրանք կուզենային, վոր կոփկը շարունակ Սելվամոր առաջնորդը<sup>4</sup>

նակվեր և անտառային նեղըերը հաղթվեյին:  
Պանդակուրան ասաց.

—Յեթե չկարողանանք սրանց հետ հաշտվել  
դա մեծ դժբաղդություն կըլինի մեզ համար. —  
Նրանք կըհավաքեն բոլոր անտառային ցեղերին  
և վերջիվերջո մեզ բոլորիս կուտեն: Իսկ յեթե  
նրանց չգրգռենք, նրանք բարի յեն ու վախկոտ:  
Նա նորից ձեռքը բերանին դրեց ու վոռ-  
նաց: Իսկույն չպատասխանեցին:

Վերջապես թփերից մի բարձրահասակ նեղը-  
դուրս յեկավ: Նա յերկու ձեռքն ել վեր բարձ-  
րացրեց, ի նշան այն բանի, վոր զինադադար և  
կնքված:

Պանդակուրան մոտեցավ նրան և ձեռքը մեկ-  
նեց: Սա վախեցած, ծիծաղելի ծամածոռություն-  
ներով լետ թռավ և խոնարհ գլուխ տվեց: Բայց եվ  
նրանք սկսեցին խոսել ձեռքները մեկ այս, մեկ  
մյուս կողմի վրա թափ տալով:

Հետո Պանդակուրան հրամայեց ճամբարից  
բերել մնացած միսը:

Կովողները փնթփնթացին, բայց հնազանդվե-  
ցին: Միսը դրեցին թփերի մոտ:

Անտառի նեղըերից վոչ վոք դուրս չեկավ  
թփերից, մինչև վոր Պանդակուրան ու կովողնե-  
րը չհեռացան:

Միայն բարձր խոտերի մեջ պահված տը-

ղաները տեսան, թե ինչպես ծռմռվելով դուրս  
ելին թռչում բարձրահասակ ստվերները և, վենթ-  
փրնթալով, իրար դեմ կովելով, հափշտակում ե-  
լին մսի կտորներն ու փախչում:

Յերեկոյան դեմ, հենց ճամբարի մոա մի  
մեծ սկ ու կծեց կովողներից մեկին. — յերիտա-  
սարդ, ուժեղ Պուտետին: Նա թափալվում եր  
գեանին, լինդգվում եր իր բերնի ֆրփուրով, ա-  
զաղակում եր և շուտով մեռավ:

Կովերը չեյին հանգստանում և այլայլված  
բառաշում եյին. — ուզում ելին ծմակը փախչել  
վոչ միայն պառավները, այլև կովողներն

անհանգստությամբ նայում ելին ամեն կողմ:

Վոչ, ծմակում միայն վայրենի գաղաններն  
ու անտառի նեղըերը կարող են ապրել:

Սոենք, յերերեխաների հոգը չեր: Նրանք  
հսկա ճյուղերից ճլորթի յելին կապել և այնպիսի  
աղմուկով ու ուրախ ելին ճոճում, վոր Պանդա-  
կուրան ճչաց նրանց վրա և մի ածխակույտ շը-  
պըրտեց նրանց կողմը: Յերեխաներն աղմուկով  
փախան:

— Անիծվեն սպիտակները, — վենթփնթում եր  
հայրը. — Նրանք դուրս բշեցին մեզ մեր կրաս-  
կալից, մեր դաշտերից ու խրճիթներից, ուր ապ-  
էց, մեր դաշտերից ու խաղաղ—վոչ վոքի վը-  
րում ելինք հանդիսաւ ու խաղաղ—վոչ վոքի վը-  
րում չեյինք տալիս: Այս ծմակում մենք բոլորս  
կըկոտորվենք:

Յակելենեն լեռբեք չեր տեսել, վոր հայրն  
այդպիս նեղացած լինի. մոր մասին՝ ել ասելու-  
բան չկա, նա նույնիսկ ել խոսք չեր գտնում, մի-  
այն բոռնցը ով աչքերն եր արորում:

—Անիծված սպիտակներ, —կրկնում երհայ-  
ըլ զայրացած:

Բոլորը տանջված եյին, ուստի և, չնայելով  
իրարանցմանն ու վախին, քնեցին։ Վոչ վոք  
չհամաձայնեց պահակ կանգնել։

Ինքը՝ Պանդակուրան, յերկար ժամանակ վառ  
եր պահում խարույկը, շարունակ ցախ ավելա-  
ցընելով, բայց հոգնածությունը վերջապես նրան  
ել հաղթեց. նա քնեց, գլուխաը տաք մոխրի վրա  
թերելով:

Բոլորը զարթնեցին, յերբ դեռ մութն եր:  
Կարծես թե հազարավոր դեեր վոռնում ու պտղա-  
վում եյին նրանց շուրջիք:

Այդ կատաղի քամին եր պոկում ու կո-  
տըրտում ծմակը, ծոռում ծառերը մինչ զետին,  
գոռում սպանագին:

Նեղբերը մթնում իրար խառնվեցին, չեյին  
իմանում ինչ անեն, ուր փախչեն։ Կանայք լաց  
ու կոծ եյին անում։

— Կորանք, կորանք, ես հւը բերեցիր մեզ,  
Պանդակուրա:

Կովերը վայրենի ցավագին բառաչով վա-  
զում ելին և իրարանցումը մեծացնում:

Փոթորիկն սկսվեց, անտառի ահռելի փոթորիկը:

Վոչինչ չեր կարելի հասկանալ:  
Բոլորն աղաղակերով ու անիծելով փախչում  
ելին ու իրար կաշում: Վոչ վոք չեր ուզում Պան-  
գակուբայի կարգադրությունները լսել նրա թույլ  
ձայնն ել քամին տանում եր և խլացնում, չեր  
լսվում կռտրտվող ձյուղերի ճարճատյունից:

— Հիմար ծերունի, քո խելքը վաղոց և  
յետ տվել, — աղաղակում եյին և անզոր չարու-  
թյամբ բռունցքով սպառնում ծեր Պանգակու-  
րային: Դու մեզ ծմակը բերեցիր, ուր բռուս կը-  
կոտորվենք: Ավելի լավ եր հպատակվեյինք սպի-  
տակներին ու ապբեյինք մեր կրաալում, ախր,  
ուրիշ շատ նեղեր ել կան սպիտակների իշխա-  
նութան տակ:

Ուրիշ շատ հիմար ու չարացած  
եւ ելին ասում:

Վոչ միայն կանալք, այս աղջ լուսները կորցրել եյին, իսկ Յակելենեն կատադությունից գողում եր ամբողջովին. — սպիտակներին հպատակվել: Վոչ, վոչ — միայն թե վոչ այդ. վագրերը, կրակը, փոթորիկն ավելի լավ ե, բայց սահմակ կոմենդանտը:

Փոթորիկը չեր հանգստանուն  
եր ծագակում, կարծես, ինչ վոր դիվական խար

Կա Յասսիկինջան եր: Աշքերից արցունք եր  
թափվում, յերկյուղեց աթունքները ծովել ելին:  
— Փախչենք. — աղաղակեց քամու պես Յա-  
կելենեն, ու ամուր բռնելով աղջկա ձեռքը, հա-  
մարյա քարշ տվեց իր հետ:

Նա իրեն այնպես ուժեղ և  
քաջ եր զգում, թեև նրա սիր-  
ութն ել արագ — շատ արագ  
եր խփում:

Նա սիրտ եր տալիս Յաս-  
սիկինջային, նա ամուր սըր-  
մում եր նրա ձեռքը, իսկ աղ-  
ջկը յետ չեր մնում, կպչում  
եր նրան, պաշտպանություն  
և օգնություն եր վնարում:

Իսկապես առվակի ափով մեծ ձառեր չկա-  
յին, այլ միայն թփեր և ավելի հարմար եր վա-  
ղել: Յակելենեն չեր թողնում Յասսիկինջալիի  
ձեռքը, ու յերբ սա թուլանում եր, փոքրացը-  
նում եր քայլերը, վոր շունչ առնի, ու խրախու-  
սում եր:

Նեզրերն այսպես յերկալ ժամանակ վա-  
զում ելին: Ծմակն ամեն կողմից աղմկում ու  
մանչում եր: Ծառերը ճայթյունով ու գոռոցով  
փշվում ելին: Կայծակը շանթում եր, փորոտը  
թնդում, կարծես, սպիտակների ձեռքի ձողերից  
հազարավորներ ելին վորոտում:



եր սարքել: Կովերն ու այծերը ցրվեցին, փա-  
խան, հնար չկար նրանց բռնելու, հավերն ել  
թփերի տակը մտան:

Բայց սպասելու ու անասունները հավաքե-  
լու ժամանակ չկար — պետք ե իրենք իրենց ա-  
զատելին:

Արդեն լսվում եր, թե ինչպես ծմակում  
խուլ թնդյունով ընկնում ելին ձառերը. նրանք  
կարող ելին ճիշտել բոլորին, և բացի դրանից ար-  
դեն խելագար, վայրենի յերկյուղը տիրել եր բո-  
լորին:

### Մեկն աղաղակեց.

— Պետք ե առվակի մոտով փախչել, այնտեղ  
ձառերը շատ չեն մեծ:

Բոլորն սկսեցին փախչել, փոքրերին վոտ-  
նատակ տալով:

Յակելենեն ել եր փախչում: Հենց առվակի  
մոտ նրա վոտքովը մի մարմին ընկափ: Մեկը  
գետնին կպած, լաց եր լինում:

— Վեր կաց, — ճաց Յակելենեն և ուժով  
բարձրացրեց ուսից, — վեր կաց:

Նա համարյա զոռով բարձրացրեց ընկածին:

— Յես սարսափում եմ, ո, ինչ սարսափե-  
լի յե, — թոթովեց նա:

Տասը բայլի վրա կապույտ կայծակը փայ-  
լատակեց և մի վայրկյան լուսավորեց դեմքը:

Կարծես այդ վազքին վերջ չկար:  
Յակելենեն զգում եր, վոր շնչառպառ և լի-  
նում, բայց նա պետք է գեռ Յասսիգինջային ել  
քարշ տար իր հետ:

— Դաշտ, դաշտ,—աղաղակեց հանկարծ մե-  
կը, վոր ամենից տռաջ եր վազում: Մեկը մյու-  
սին եր ասում այս քաղցը խոսքը, վորին դրժ-  
վար եր հավատալ:

— Դաշտ, դաշտ:

Իսկապես ծմակը նոսրանում եր, թփերն ան-  
հետանում, բլրակի վրա, իրար ձեռքից բռնած,  
գժվածի պես պար եյին բռնել կովողները՝ կա-  
նայք, յերեխաները — բոլորը, բոլորը:

— Դաշտ, դաշտ:

---

## VIII

## ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Այդ ուրախությունը յերկարատև չեր:  
Ճիշտ ե, անիծված ծմակը — այնտեղ յեղող  
ընձառյուծը, անտառի նեղերը, կրակը, փոթո-  
րիկը — մնացին այնտեղ, բայց այնտեղ մնացին  
նաև իրենց բոլոր անասուններն ու բավական  
շատ մարդիկ:

Ի՞նչ անեն, վերադարնան: Յետ գնան փընտ-  
րելու... վոչ, վոչ, վոչ վոք չի համարձակվի:

Միայն յերեխաներին գեռ զվարճացնում եր  
դաշտը, սիրելի, հարազատ դաշտը: Ճանապար-  
դաշտը, մեկի տնկարանից շաքարյեղեգն են քաղում:  
Ի՞նչ քաղցը ե, ի՞նչ հլութալի...

Յերկար թափառում եյին դաշտերում: Վեր-  
ջապես ծանոթ տեղ ընկան և շուտով բլրի դա-  
զաթից տեսան իրենց հայրենի կրասլը:

Յակելենեն, նրա յետեկից բոլոր տղաներն  
ու աղջիկները հոգնածությունը մոռացան և ի-  
րար առաջ կտրելով, վազեցին գեպի խրձիթները:

Թափով վազեցին գյուղի մեջ և հանկարծ  
քարացած կանդ առան: Խրձիթների մոտ սպի-  
տակների ձիաներն արածում եյին: — Անիծված-  
ներ, կընշանակե, նրանք չեն գնացել:

Յերեխաները մի վայրկյան մտածմունքի  
մեջ կանգ առան, շուռ յեկան, ուզում ելին փախ-  
չել, բայց ուշ եր:

Ամեն կողմից արդեն լավում ելին սպիտակ-  
ների ձայները: Նրանք դուրս սողացին խրճիթ-  
ներից, թռան ձիւերին և քշեցին դեպի բլուրը,  
վորտեղից իջում ելին նեգրերը:

Ահա և հասպափոր կոմենդանտը. բարկու-  
թյունից կարմրած, նա մոնչում ել, տրըխկացը-  
նում և մտրակը, կրծտեցնում և տտամները—  
նա ընձառյուծ «բասմատո»-ից ավելի սարսափե-  
լի ու զզվելի յե:

Ու արդեն բոլոր նեգրերը, աղամարդիկ ու  
կանայք, յերեխաները, բոլորը կանգնած են կրա-  
պի հրապարակում, սպիտակ զինվորներով շրջա-  
պատված—կամենդանտի առջև:

Սա կկոցում է աչքերը, լուսմ ե, բեղերը  
սրում ու հանգիստ համարյա՛ քնքույշ ձայնով  
առում:

— Զբոսնեցիք: Ե, ինչ կա վոր, շատ ու-  
րախ եմ կրկին ձեզ տեսնելուս համար: Ո՞, մի-  
այն այժմ ել շուտ չենք բաժանվիլ իրարից: Յես  
ձեր արյունը կըքամեմ մինչև վերջին կաթելը:  
Դուք գոհ կըմնաք: Իսկ դու, ծեր շնուն:

Նա մոտենում է Պանգակուրային, յերկար նա-  
յում ե նրան ու, Յակելենելին թվում ե, վոր դա-  
ընձառյուծի կանանչա—կարմիր աչքերն են:

— Իսկ դու, ծեր շուն, եղ բոլորը քո մտա-  
ծածն ե:

Նա խփում ե Պանգակուրային սկզբում մի  
ձեռքով, հետո մյուս. և յերբ սա վեր ե ընկ-  
նում, նա կոխ ե տալիս վոտքով, թքում ե յե-  
րեսին, խփում ե մտրակով և ասում ե ծիծաղե-  
լով:

— Ե, իսկ մյուսների հետ ճամբարում կը-  
խոսենք: Մի վախենաք, վոչ վոքի չենք մոռա-  
նալ: Դուք չելիք ուզում վճարել, ապա գոնե-  
լաց կըլինեք:

Նա ճանապարհ ընկնելու նշան և տալիս:  
Սպիտակ զինվորները հեծան ձիյերը, և  
մտրակները շարժելով, նեգրերին ստիպեցին վոչ-  
խարի հոտի պես հավաքվել, կրտվել ու գնալ կո-  
մենդանտի յետեկից, վոր գնում եր բոլորի առ-  
ջեց:

Ո՞, շատ դառն ե ստրկության ցավն ու ա-  
մոթը:

Յակելենելին թվում եր, վոր վատ յերազ ե  
տեսնում: Բայց չե, ահա հայրը, մայրը, Յասսի-  
կինջան, Պանգակուրան—բոլորը քայլում ելին իր  
կողքին, զլուխները կախ, ամեն իսոսք մոռացած:

Միայն առջեկից, յետեկից, կողքերից գնացող  
սպիտակներն ուրախ ծիծաղում եին, խռոակ  
ցում, մտրակները շարժում, յետ մնացողներին

հառաջ քշելով։ Նրանք ուրախ եյին և գոհ։ Հաջող վորսից վերադարձող վորսորդների նման, նըրանք ուրախ եյին իրենց վորսով։

Արեն այրում եր, ծարավն տանջում, հոգնածությունից ծնկները ծալվում եր, բայց սպիտակները անկոտրում եյին, նրանք խղճալ չգիտեյին. ասենք, դե, նրանց համար նեզրերը մարդիկ չեյին, այլ կենդանի բռնված վորս։

Յերբեմն կոմենդանտը կանգ առնելու նըշան եր անում և բոլոր գերիները միանդամից թափվում եյին գետնին, վոր հանգստանան, մինչ վոր մտրակը համսում եր նրանց մեջքին։

— Այս անպիտաններին կերակրեցէք, վոր ժամանակից առաջ չսատկեն, — ասաց կոմենդանտը։

Սպիտակները հացը կտրտում և շպրտում եյին նենզերի ամբոխին, ինչպես շնկրի, ու զըվարձանում եյին, թե ինչպիսի ագահությամբ բռնում եյին այդ վողորմությունը։

Բոլորը, և կովողները, և կանայք, և ինքը՝ Պանզակուրան, բոլորը վրա յեյին թռչում հացին։

Միայն Յակելենեն յերկար ժամանակ չեր կարողանում ինքն իրեն ստիպել, վոր մասնակցի այդ ստորացնող խաղին, թեև քաղցից կոկորդը սղմվում եր։ Բայց յերբ մի կտոր հայթում եր ուղիղ նրա քթի մոտով, նա չկարո-

ղացավ իրեն զսպել, աղմուկով վրա թռավ, մեկին գետին գցեց ու հացը բռնելով, սկսեց ագահությամբ կրծել, վախենալով, վոր կըխեն իրենից։

Հետո նրանց գետի մոտ քշեցին և թռւյլ ավին ջուր խմել։

Գնալը, քայլելը հեշտացավ, բայց ամոթն ավելի ցավագին եր ձմլում նրանց սիրտը, և կատաղի ատելությունից շնչել չեյին կարողանում։

Դիշերը կանգ առան, իսկ առավոտյան վաղ կրկին շարունակվում եր անսահման ձանապարհը։

Յեթե մեկը հոգնածությունից վեր եր ընկնում, նրան ծեծում եյին, մինչև վոր վեր եր կենում և քարշ գալիս գեպի առաջ։

Այդ որը մի փոքրիկ աղջիկ մեռավ, իսկ յերբ պառավ Բելիմեն ընկապ ու, ինչքան ել սոսկալի ծեծեցին՝ չկարողացավ վեր կենալ, կոմենդանտն իր յերկաթե ձողով խփեց նրան։

Կրակը բոցավառվեց, վորոտ լսվեց և պառավ Բելիմեյի գլուխը ծածկվեց արյունով։ Վոչ վոք չհամարձակվեց այն կողմը նայել. Բոլորը, թե տղամարդիկ, թե կանայք — դողում եյին, ինչպես կապուտած վոչխարները, վորոնց քարշ են ատիս խարույկի մոտ՝ մորթելու։

Ճանապարհի հաշիվն արդեն կորցրել եյին։

Թվում եր, թե անվերջ այսպես կը գնան, մինչև  
վոր մեկ-մեկ մեռած կը նկնեն ճանապարհին,

Վերջապես սպիտակների ճամբարը յերևաց.  
Նեղերին քշեցին մի ցանկապատի մեջ, հաց ու  
ջուր տվեցին և թույլատրեցին հենց ուղղակի  
գետնին հանգիստ պառկել, ապա վոչ վոք չու-  
րախացավ:

Բայց անցավ մի որ, ու թեև հասակավոր-  
ները գեռ ելի մռայլված նստած եյին իրենց  
տեղերում, յերեխաներն իրենց հետաքրքրու-  
թյանը հաղթել չելին կարող:

Ցանկապատի ճեղքերից նրանք նայեցին և  
տեսան մի մեծ հրապարակ, իսկ նրա ծայրին մի  
ահադին սպիտակ խրճիթ—վորի նմանը յերբեք  
չելին տեսել: Հրապարակում քայլում եյին սպի-  
տակ զինվորներ, իսկ ամենազարմանալին այն  
եր, վոր հանկարծ խրճիթից սպիտակ կին դուրս  
յեկավ:

Նրա մարմինը ծածկված եր գեղեցիկ տոպ-  
րակով, միայն բոլորովին եր սպիտակ դեմքը,  
վոր դաշերով ու ներեներով զարդարած չեր, բայց  
շատ գեղեցիկ եր, իսկ մազերը դեղին եյին, առ-  
վակի ափի ավաղի նման:

Նա բարձրաձայն ծիծաղում եր և նրա ձայ-  
նը ամենսին նման չեր կոմենդանտի կոպիտ մը-  
ռնչոցին, նրա ձայնը նման եր այն հիանալի

թոշունների յերգին, վոր տեսան նրանք ծմա-  
կում: Նույնիսկ հասակավոր նեղբերը, մանա-  
կանդ կանայք հետաքրքրվեցին և սկսեցին ճեղ-  
քերից նայել մինչև վոր սպիտակ զինվորը յե-  
կագ և հրամայեց բոլորին աշխատանքի գնալ:

— Հավանականաբար նա բարի յե, և յերեկի  
իշխանություն ունի, — շշնջում եյին նեղբերը: —  
Մենք կը խնդրենք, նա կը խղճակ կը պաշտպանի մեզ:

Յակելենեն ել եր կարծում, վոր քըն-  
քուշ ձայնով սպիտակ կինը չի կարող չար ու  
անխիղճ լինել: Ախար, նա այնքան գեղեցիկ ե-  
նա ուզում եր մեկ ել տեսնել նրա սպիտակ,  
բոլորովին սպիտակ դեմքն ու դեղին մաղերը:

Անտառը քշեցին աշխատելու, այն անտառը,  
վոր գտնվում եր ճամբարի շուրջը: Սպիտակներն  
ուզում եյին լայն ճանապարհ լինել:

Պետք եր ծառերը կտրել, մի կողմը քարը  
տալ, կոճղերն այրել, փորել և ճանապարհ հար-  
թել:

Աշխատելիս պատահեցին մոտիկ կը ատե-  
րից քշած ուրիշ նեղբերի:

Տեսնելով վոր մենակ իրենք չեն ստրկու-  
թյան դատապարտված, մի տեսակ թեթևություն  
զգացին: Բայց նեղբերի պատմածն ամենսին  
միիթարական չեր. աշխատանքը ծանր ե, կերա-  
կուրը՝ վատ, կոմենդանտը՝ խիստ ու անգութ,

ամեն մի անզգուշության համար պատասխանաւորվության են յենթարկում։ Արդեն շատերը չեն դիմացել և մեռել են ջերմից, քաղցից ու ծեծելուց։

Յակելենեն կրկին հիշեց սպիտակ կնոջը, ապա ինչու նա չի միջամտում թշվառ նեզրերի համար. չե վոր նա անպատճառ գիտե, թե ինչքան վատ են ապրում նրանք։

Յերեխաներին ենքան ել չեյին ստիպում աշխատել։

Դրանից ոգտվելով, նրանք ավելի շուտ վազվում եյին թփերում, պտուղներ եյին հավավաքում, միների և ճագարների համար թակարդներ եյին սարքում, թեև, ի հարկե, չեյին համարձակում աշխատանքի տեղից հեռանալ—հիշելով ծմակում անց կացրած որերը։

Յակելենեն հրամայեց ամբողջ վորսը միանգամից չուտել, այլ դնել այն տոպլրակում, վոր պահում եյին իրենց կոնատակերին այնպես ծածուկ, վոր վոչ մի սպիտակ զինվոր չեր կարող գլխի ընկնել։

Յերեկոյան ամբողջ վորսը հանեցին և բաժանեցին բոլոր թե հասակավորներին և թե փոքրերին։

Պանզակուրան գովեց Յակելենեյին։

— Դու իսկական առաջնորդ ես։ Դու վոչ

միայն քո, այլ ամբողջ կրաալի մասին ես մըտածում։ Իսկական տղամարդը միշտ այդպես պետք ե վարվի։ Յեվ յեթե բոլոր նեզրերն ալդպես անեյին, մենք հիմա եսպիսի վողորմելի ստրկության մեջ չեյինք լինի. ո, մենք հզոր կըլինեյինք և վոչ վոք չեր համարձակվիլ ծեծել ու սպանել մեզ։

Նա դառն մտածմունքի մեջ ընկավ ու լոեց. իսկ հետո, գիշերը շատ ուշ Յակելենեն լսեց, թե ինչպես Պանզակուրան, մի խումբ կովողների եւ շուրջը հավաքած, ասում եր. —

— Պետք ե փախչել, պետք ե Մջել բոլոր կրաալները։ Պետք ե պատմել նրանց, թե ինչ արին մեզ և ինչ ե սպասում իրենց, յեթե նըրանք բոլորը չմիանան և չապստամբեն սպիտակների զեմ։ Յերկու կամ յերեք հոգի պետք ե փախչեն։

Կովողները մռայլ լոել եյին։ Պանզակուրան վշտացած հանդիմանեց։

— Դուք վախենմամ եք, դուք կովողներ չեք, այլ իսկապես վոչխարներ, վորոնք հեղությամբ սպասում են, թե յերբ պիտի մորթեն իրենց։

— Բայց սպիտակները չար չներ, առագավազ ձիաներ ու յերկաթե ձողեր ունեն, վոր կատաղած բոռից արագ են համառում. — այսպես հակառակեց մեկն անհամարձակ կերպով։

Պանդակուրան հառաջեց:

— Ել խոսելու բան չկա:

Բոլորը լուս պառկեցին, իսկ Յակելենեն  
յերկար ժամանակ չեր կարողանում քնել, առելությունից բռունցքները սեղմվում եյին. Կա  
դողում եր, ու Պանդակուրայի խոսքերը ծակում  
եին նրա գլուխալ.

— Պետք ե փախչել:

Առավոտը իրարանցում սկսվեց: Սպիտակ  
զինվորները վազում եյին, աղաղակում, մտրակ-  
ները շարժում: Պանդակուրան և յերկու կովող  
նեղբերը, զիշերը ցանկապատը կոտրել ու փա-  
խել եյին:

Բոլոր նեղբերին վոչ թե աշխատանքի քշե-  
ցին, այլ այն խրճիթի մոտ, վորի կտրին կանգ-  
նած եր կոմենդանտը:

Նույնիսկ նրան նայելը սոսկալի յեր, իսկ  
ձայնը վորոտի նման եր թնդում:

— Դուք ինձ հետ խմղ եք ուզում անել:  
Կարծում եք, յես ձեզ թույլ կտամ ինչ ուզեք,  
անեք: Շներով ձեզ բոլորիդ, ձեր լակոտների  
հետ, զզգել կտամ: Յես...

Նա խեղդվեց. կարծես, թե չիմանալով, թե  
ինչ սարսափելի պատիժ հնարի իր առաջ հեղու-  
թյամբ կանգնած նեղբերի համար:

Այդ ժամանակ աղմուկն ու ուրախ, բարձր  
ձայները բոլորին ստիպեցին շուռ գալ:



Սպիտակ զինվորները դոնից ներս եյին քը-  
շում — հաղթական բացականչություններով — յեր-  
կու փախածների՝ Պանդակուրային և կովողնե-  
րից մեկին:

Մեծ ու սրագունչ շներն առջելից ու կող-  
քերից վազելով, աշխատում եյին իրենց ատամ-  
ները խրել բռնված նեզրերի մարմի մեջ, սպի-  
տակ զինվորները ծիծաղելով քշում երին շներին:

— Սպասեցեք, նրանք ձեզնից չեն փախչիր,  
յեթե նրանց զզվելի, կեղտոտ միաը ձեզ եղակա  
համեղ ե թվում:

Կոմենդանտն ամբողջապես փայլում եր. նա  
ծիծաղում եր, նա ձեռքերով խփում եր փորին,  
կարծես, համեղ հյուրասիրություն եր նախա-  
զգում:

— Հեռու չեյին փախել: Բայց ուր ե յեր-  
բորդ կապիկը: Ախար, յերեքն են: Միթե փա-  
խավ:

— Վոչ, պարոն. կոմենդանտ: Յերրորդին  
շները զզեցին, չկարողացանք ազատել: Սրանք  
ել լավ որի չեն:

Իսկապես, բռնված նեզրերի մարմից ար-  
յուն եր հոսում: Նրանց աչքերը հանդած եյին,  
կարծես, նրանք ել վոչինչ չեյին հասկանում:

Ուրախ ծիծաղից կոմենդանտն ամբողջո-  
վին լըխլըխում եր:

— Կեցցեք: Խայտառակություն կըլիներ,  
յեթե այդ զզվելիներից գոնե մեկը փախչեր մեր  
ձեռքից: Իսկ այժմ...

Յակելենեյի աչքերում կարծես կայծակ փայ-  
լեց: Կտերը յերեաց սպիտակ կինը:

Մոտիկից նա ավելի գեղեցիկ եր: Ի հարկե,  
ի հարկե, նա կըխղճա և կըհրամայի ազատել թըշ-  
վառներին:

Յակելենեյի սիրտն արագ-արագ եր խփում.  
Նա աչքերը չեր կարողանում հեռացնել կնոջ  
սպիտակ գեմքից ու դեղին մազերից:

Կոմենդանտը, ձեռքով ցույց տալով նեզրե-  
րին, ինչ վոր բան ասաց նրան: Նա զիլ ու քըն-  
քույշ ծիծաղեց, ինչպես թոշունն անտառում:

Այ, հիմա նա կասի, վոր նրանց ազատեն:

— Ժամանակ չկորցնենք: Սրանց կապե-  
ցեք այ, այն ծառին: Յես ուզում եմ, վոր այս  
կապիկները տեսնեն ու լավ հիշեն, թե կոմեն-  
դանտն ինչպիսի հանաքներ անել զիտե: Ու սպի-  
տակ կինը նորից այնպես ուրախ ու քնքույշ ծի-  
ծաղեց, վոր Յակելենեն բոլորովին հանդսա-  
ցավ — կընշանակի նրանք շուտով կազատվեն:

Պանդակուրային ու մյուս կովողին քարշ  
տվեցին ծառի մոտ ու թոկով կապոտեցին:

Հինգ սպիտակ զինվոր հառաջ դուրս յեկան:  
Նրանք բարձրացըին իրենց յերկաթե ձողերը և,

յերբ կոմենդատը ձեռքը թափ տվեց, վորոտաց,  
կայծակ փայլատակեց:

Նեգրերի կրծքից ծանը հառաչանք դուրս  
թռափ:

Յակելենեն դեռևս չեր կարողանում հաս-  
կանալ ու հավատալ:

Նա գլուխը բարձրացրեց: Սա ի՞նչ ե:

Պանդակուրան և մյուս սեամորթ կովողը  
դատարեւ տուրակների նման ցած եյին կախված:

Մեւն ամուր բռնեց նրա ձեռքը: Սա յելի  
Յասսիդինջան եր, վոր վախենում եր նրան մի  
բան պատահելուց:

Վոչ, վոչ, դուրս վազեց, հասավ ծառին,  
բռնեց Պանդակուրայի ձեռքը, նա արյունոտվեց,  
ծունկ չոգնեց, նա գրեց նրա ծնկները, նա  
խեղդվում եր, նա վերջապես հասկացավ:

Յասսիդինջան շարժում եր նրան՝ ուսից  
բռնած:

— Գնա՞ք, գնա՞ք, նա կըբարկանա, նա իր  
շները բաց կրթողնի քեզ վրա:

Պանդակուրան և կովողը մեռած եյին:

Բոլոր նեգրերը տխուր վողբով ըրջապատե-  
ցին սպանվածների դիակները:

Յակելենեն լաց չեր լինում: Նրա աչքերը  
ցամաք եյին, շրթունքները՝ սղմված: Նա հիշում  
եր Պանդակուրայի խոսքերը.

— Պետք ե վախչել:

## IX

## ՊԵՏՔ Ե ՓԱԽՉԵԼ

Յերբեմն ցերեկով նեգրերին քշում եյին գե-  
տում լողանալու:

Նրանց տխուր կյանքում սա ամենաուրախ  
բանն եր:

Գետը լայն եր, գովություն եր փչում. ա-  
վազը դեղին եր ու փափուկ. ի՞նչ դուրեկան եր,  
նախ բան ջուրն ընկնելը թափալվել ավազում:

Ճիշտ ե, հեռու լողալը վտանգավոր եր: Յեր-  
կու անդամ արդեն կոկորդիլոս եյին տեսել:

Բայց յեթե խելոք գգուշություն պահպան-  
վի, ապա միշտ կարելի յե վտանգից խուսափել:

Նույնիսկ Յակելենեն, վոր այդ ժամանակ  
շարունակ մուալլված եր շրջում, նույնիսկ նա ալդ  
որը մի քիչ ուրախացավ և մյուս յերեխաների  
հետ խաղաց:

Մպիտակ զինվորները ննջում եյին և թույլ  
տվին սովորականից ավելի մնալու:

Վաղվզում եյին, ավազում թափալվում, լո-  
ղալով իրար առաջ կտրում. նույնիսկ ամենա-  
փոքր յերեխաները ջուրն եյին մտել և ջուր ե-  
յին սըսկում ամեն կողմ:

Վոչ վոք չնկատեց, թե ինչպես ձիով գե-  
ախն մոտեցավ կոմենդանտն ու սպիտակ կինը:  
Յակելենեն ել հուսով ու ուրախությամբ  
չեր նայում նրան:

Նրանք գալիս ելին ձիով և կարծես գետը,  
անտառը և ջրի մեջ խըլտալտացող փոքրիկները  
հիացնում եյին նրանց:

Մյուս նեղրեն ու նույնիսկ յերեխաները  
լոեցին ու կուշ յեկան, կոմենդանտից վոչ մի բա-  
րի բան չսպասելով:

Սպիտակ զինվորները վերթուան և մոտ վա-  
զեցին կոմենդանտին:

Սպիտակ կինը, կոմենդանտն ու զինվորնե-  
րը յերկար խոսում եյին ինչ վոր բանի մասին.  
սպիտակ կինը նորից զիլ ծիծաղեց, բայց նրա  
ծիծաղն ել թռչունի յերգ չեր թվում. նա զի-  
տեր, թե ինչ խաբուսիկ ու անզութ ե այդ ծի-  
ծաղը դեպի թշվառ նեղրերը: Այդ ծիծաղը ծա-  
կում եր Յակելենելի ականջն ու ստիպում եր սոս-  
կումով հիշել այն ըսպեն, յերբ խեղճ Պանդա-  
կուրան կապված եր ծառից:

Կոմենդանտը շատ ուրախ ու գոհ եր: Նա  
այսոր բոլորովին բարի յեր թվում: Գուցե արե-  
վը, կապույտ գետն ու կապույտ յերկինքը, գու-  
ցե այս բոլորն ուրախ տրամադրության մեջ ե-  
յին դրել նրան:

Ծիծաղելով, նա զինվորներից մեկին ինչ վոր  
բան հրամայեց:

Կոմենդանտն ու սպիտակ կինը ձիաներից ի-  
շան ու անցնում եյին նեղրերի մոտով:

Սպիտակ կինը հետաքրքրությամբ դիտում  
եր նեղրերին, ինչպես հազվագույտ գազանների:  
Նրա ձեռքին մի փոքրիկ ձիպոտիկ կար, վորով  
նա խփում եր յերեխաներից մեկ սրան, մեկ նը-  
րան: Կարծես ամենափոքրերը նրան ավելի յե-  
յին հետաքրքրում ու, ժամանով, յերկար նայում  
եր նրանց:

Սպիտակ զինվորը մի տախտակ և թոկ բե-  
րեց:

Սպիտակ կինը իր ձիպոտիկով ցույց տվեց  
ամենափոքր յերեխաներից մեկին, վոր գեռ հա-  
զիվ եր ման գալիս և առանց յերկյուղի գնում  
եր գեպի սպիտակ կնոջ զարդարուն շորերը:

Սպիտակ զինվորը բռնեց աղջկան: Բո-  
լոր նեղրերը մի չար բան նախազգալով, քա-  
րացան:

Միայն աղջկա մայրը վայրենի վողբով վրա-  
ընկավ՝ իր յերեխային խլելու: Սպիտակ զին-  
վորները ծիծաղելով յետ հրեցին:

Աղջիկը լաց եր լինում և գուրս եր պըրծ-  
նում սպիտակ զինվորի ձեռքից, բայց նա  
ճարպկությամբ պառկեցը եց նրան տախտակի  
վրա և թոկով պինդ կապեց:

Հետո նա մտավ ջուրը և տախտակը՝ աղջիկը վրան, հեռու հրեց գետի մեջ։ Տախտակը պըտվեց և ալիքներն արագ քշեցին ուղիղ գետի մեջ տեղը։

Մայրն աղաղակում եր և դուրս եր պըրծնում, բայց զինվորներից մեկը պարան դցեց նրա վիզը, ինչպես անում են դաշտում ձի բռնելիս։

Սպիտակ կինը ծափ եր տալիս և ուրախ ձիծաղում։

Տախտակն ու աղջիկն արդեն հեռու, ուղիղ գետի մեջ տեղն ելին. հոսանքը նրանց ցած եր տանում։

Կոմենդանտն ու սպիտակ կինը հեծան ձիաները և քշեցին ափովը, վոր աղջկանիցը յետ չմնան։

Սոսկումով դողալով, նեգրերը վազում ելին ձիաների յետեից։

Կոմենդանտն ու զինվորներն իրենց յերկաթե ձողերը վերցրին։

Աղջկա սրտաճմիկ լացի ձայնը տարածվում եր ափում, շատ հեռու։

Փոքրիկ սե կետի նման կամ անհետանում եք, կամ կրկին հայտնվում եր կապույտ ալիքների վրա։

Հանկարծ նա կանգ առագ։

Մի վայրկյան ինչ վոր սե, մեծ բան յերեւաց նրա կողքին։

— Կոկորդիլնս, — սոսկումով շնչացին նեղ-ըերը։

Շատերը չկարողացան զսպել իրենց և լա-ցով վայր ընկան, յերեսները թաղեցին ավազի մեջ, վորպեսզի չտեսնեն, չլսեն աղջկա աղեկ-տուր ձիչերը։

Բայց Յակելենեն բոլորը տեսավ, բոլորը լսեց. Նա աչքերը չեր հեռացնում, ականջները չեր փակում։

Սպիտակ զինվորներն ու կոմենդանտն ի-րենց ձողերն ուղղեցին դեպի կոկորդիլոսը։

Վորոտաց. ծուխը ծածկեց ամեն ինչ։

Յերբ ծուխը ցրվեց, գետը հանգիստ եր ու դեղեցիկ, ինչպես միշտ. վոչ կոկորդիլոսը կար, վոչ աղջիկը. — ել չեր լսվում նրա լացը։

Կոմենդանտն ոգնեց սպիտակ կնոջը ձին հեծնելու և նրանք ուրախ խոսակցելով քշեցին ձիյերը։

Նեգրերին անտառը քշեցին՝ աշխատանքի։

Յակելենեն չեր կարողանում վոչ աշխատել վոչ ճագար բռնել, վոչ պտուղներ հավաքել։ Նա գնաց հեռու, ծմակը։

Ներմն այրվում ու վառվում եր։ Ուզում եր վայրենի ու կատաղի կերպով գոռալ։

Յակելենեն ընկավ խոտի վրա, յերեսը գետ-նին սեղմեց, և նա՝ քաջ ու հպարտ առաջնորդ Յակելենեն, լաց յեղավ։

Նա հիշեց բոլորը. — և Պանդակուրային, և  
թե ինչպես քշեցին իրենց, և այժմ այն թմփլիկ,  
դանդրահեր աղջկանը, վոր ձեռքը մեկնում եր  
դեպի գեղեցիկ, սպիտակ կնոջ շորը:

Բոլորը, բոլորը հիշում եր նա:

Մեկն զգուշությամբ ձեռք տվեց նրա գըլ-  
խին:

Նա ուշ բարձրացավ:

Նրա վրա կուցած, կանդնած եր մի սպի-  
տակ զինվոր։ Յակելենեյի աչքերում արցունք-  
ները չորացան։

Բայց զինվորը չծիծաղեց, չխփեց նրան։  
Նա նայում եր նրան աչքերը հառած ու տխուր։  
Հետո խոսեց. Նա վատ գիտեր նեգրերեն խոսքե-  
րը։ Յակելենեն չկարողացավ բոլորը հասկանալ,  
և նույնիսկ միանդամից չկարողացավ հավատալ  
նրան, ինչ վոր հասկացավ։

Սպիտակ զինվորն ասում եր.

— Ախար, դուք մինչև յերբ պետք ե համ-  
բերեք։ Նույնիսկ շունը, յերբ խփում են, յետ ե  
դառնում, կծում։ Բայց դուք չե՞ վոր մարդ եք,  
մարդ, գլուխ ունեք, սիրտ ունեք, ձեռքեր ու-  
նեք...

Արդյոք սա յերազ չե՞ր, կամ սպիտակի կող-  
մից մի նոր ստոր նենդություն չե՞ր։

Սա նկատեց Յակելենեյի զարմանքը և դան-

գաղ, խիստ քնքույշ փաղաքշեց նրա գլուխը։  
Վհչ, նա թեև սպիտակ ե, բայց նա նրանց  
նման չե։

Նրա աչքերը բարի յեն, նա գունատ ե ու  
նիհար, նա հաճախ հազում ե, նրա կուրծքը յա-  
վում ե, նա բռնում ե կուրծքը։

— Դու կարծում ես մենք՝ բոլոր սպիտակ-  
ներս այդպես ենք, ինչպես այդ գաղան կոմեն-  
դանտը։ Նրան, այդ չար իժին պիտի սպանել։  
Դու չգիտես։ Դու կարծում ես նրանք միան  
ձեզ, սեերիդ են տանջնում. — վհչ, նրանք տան-  
ջել, սպանել, ծաղրել գիտեն և մեզ, իրենց նը-  
ման սպիտակներիս։

Յակելենեն և հասկանում եր սպիտակ զին-  
վորի խոսքերը, և չեր համարձակվում վերջնա-  
կանապես հավատալ։

Սպիտակ զինվորը շարունակում եր.

— Դու կարծում ես, սպիտակները — բոլորը  
յեղայրներ են, բոլորը միատեսանել են։ Վհչ.  
սպիտակների մեջ կան այ այդ տեսակները, ինչ-  
պիսին կամենդանտն ե։ Դա նրանք են, վորոնք  
ուզում են, վոր իրենց համար ուրիշներն աշխա-  
տեն. դա նրանք են, վորոնք սպանում են, տան-  
ջում, արյուն ու քրտինք քամում։ Բայց սպի-  
տակների մեջ կան և այնպիսիները, և նրանք  
շատ են, շատ ավելի շատ են, վորոնց ստիպում են

հետևում են ինձ: Յերկուսիս համար ել վատ  
կըլինի:

Նա գնաց. իսկ Յակելենեն յերկար ժամա-  
նակ անշարժ նստած եր խոտի վրա:

Նա յել չեր լալիս. Նա մտածում եր այն  
բոլորի մասին, ինչ զոր ասել եր նրան սպիտակ  
զինվորը, նա մտածում եր այն մասին, ինչ զոր  
պատահել եր:

Իսկ յերը վերջապես վերկացավ ու գնաց  
ազթատանըի աւեղը, նա հաստատ գիտեր, թե  
ինչ պետք ե անել:

Յերեկոյան նա ուշադիր նայում եր բոլոր  
հասակավորներին ու յերեխաներին. Նա պետք ե  
ընարեր մեկին, զորին հայտնեց իր ծրագիրը.  
Չե զոր հետո բոլոր նեգրերին պետք եր նախա-  
պատրաստել:

Բայց բոլորի գեմքերն ել այնպես հոգնած ու  
անհույս եյին, զոր նա վոչ վոքի հետ չուզեցավ  
խոսել, զոչ վոք նրան չեր ոգնի ու չեր աշակցի:

Նրա հայացըը կանգ առավ Յասսիգինջայի  
վրա:

Մի ըոպե նա յետ քշեց այս միտքը: Այս-  
պիսի կարեոր գաղտնիք ինչպես վստահանա մի  
ազջկա:

Բայց զորքան ավելի յեր նայում նրա աչ-  
քերին, այնքան ավելի յեր ուզում խոսել նրա

աշխատել, վորոնց տանջում են, սպանում են:  
Սպիտակ լինին, դեղին թե սկ, միթե բո-  
լորը մեկ չեն, յերբ նրանց միացնում ե միե-  
նույն միտքն ու տառապանքը: Յեվ սպիտակնե-  
րի մեջ, նրանց մեջ, վորոնք արյուն-արցունք են  
լալիս, դուք կըգտնեք շատ յեղբայրներ, իսկա-  
կան, հավատարիմ, միրնդ յեղբայրներ: Պետք ե  
միայն միանալ կարողանալ:

Յակելենեն հիշեց Պանդակուրալի խոսքերը.  
Նույն բանը չեր ասում ծեր, իմաստուն Պան-  
դակուրան՝ իր մահվան նախորյակին:

Սպիտակ զինվորը մտածելու լոեց, հետո  
ասաց.

— Ա՞յ, այստեղ յես ել քեզ պես զերի յեմ:  
Նրանք ինձ այստեղ ուղարկեցին, վորովհետե  
յես չեյի ուզում այնտեղ լուս ու անտրառնչ  
հնագանդիկ նրանց: Կոմենդանտը կարող ե ինձ  
ել ձեզ նման սպանել կամ խփել, յեթե յես  
նրան դյուր չգամ:

Սպիտակ զինվորը կանգնեց և, ժպտալով,  
ձեռքը մեկնեց Յակելենեյին:

— Ե, մնաս բարեւ, իմ փոքրիկ, սկ յեղբայր,  
չպետք ե հուսահատվել: Մեր ուրախության  
ժամն ել կըհասնի: Յես ու դու դեռ շատ-  
շատ կըխոսենք, միայն թե սպիտակների  
ներկայությամբ ինձ չմոտենաս: Նրանք ուշադիր

հետ, և միայն նրա հետ, Նա կարծես հասկացավ, և Յակելենելի հայացքի առջև աչքերը ցած շեր դցում:

Նա մի մատով աննկատելի նշան արավ նըրան:

Յակելենեն կամաց դուրս սողաց ցանկապատից և գնաց գեպի այն ծառը, ուր սպանեցին Պանդակուրային:

Մի ըոպելից հետո Յասսիգինջան կանգնած եր նրա առջեր: Նա լուռ եր, բայց նրա աչքերում հաստատուն միտք և հավատարմություն եր փայլում: Նա կըկատարի այն ամենը, ինչ վոր կըհրամայե նա, առաջնորդ Յակելենեն:

Յակելենեն մի քիչ լոեց, հետո ասաց.

— Այս գիշեր յես պիտի փախչեմ:

Յասսիգինջան դողաց, բայց զլուխը մի քիչ խոնարհեց:

— Յես կըփախչեմ, — կըկնեց Յակելենեն հաստատուն ձայնով: — Յես կըվազեմ ըոլոր կրապաները: Յես նըրանց ամեն բան կըպատմեմ: Յես ապստամբություն կըբարձրացնեմ: Յես նեղերին այստեղ կըբերեմ:

Յասսիգինջան լուռ, պատրաստ եր լսել նըրա հրամանները:

— Յերբ մենք մոտիկ կըլինենք, յես նշան կըտամ: Անտառում, այն մեծ ծառի փշակում,

վորի մոտ յերեկ մենք շատ պտուղներ գտանք, յես մի նետ կըդնեմ: Դու պետք ե ամեն որ գնաս այդ ծառի մոտ: Իմ նշան տալու հաջորդ գիշերը դու կըգաս այն ծառի մոտ և յես կըպատմեմ քեզ, թե ինչպես պետք ե վարվել: Հասկացմը:

Յասսիգինջան վոչինչ չպատասխանեց, բայց նրա վառվող աչքերից կարելի յեր իմանալ, վոր նա ամեն ինչ հասկացավ, ամեն ինչ կըկատարի:

Յակելենեն աչքերը հառած նայեց նրան և իրեն համար ել մի քիչ անսպասելի կերպով, ավելացրեց.

— Յերբ յես իսկական կովող կըլինեմ, կամուսնանամ քեզ հետ:

Յասսիգինջան կըկին գլուխը մի քիչ խոնարհեց:

Ո՛, նա, վոր միշտ այնպես հպարտ եր ու խորամանկ, ել չեր ծիծաղում:

Գիշերը Յակելենեն փախավ:

Սպիտակ զինվորները յերեխաների վրա ուշադրություն չելին դարձնում: Առավոտը նըրանք միայն հասակավորներին համարեցին: Նըրանք Յակելենելի բացակայությունը չնկատեցին:

Նեղբերից վոչ վոք վոչ մի խոսք չասաց:

Լուռ եր և Յասսիգինջան:

## X

## ՅԱԿԵԼԵՆԵՆ ԱՌԱՋՆՈՐԴ

Յակելենեն անցնում եր կրապից-կրաալ,  
մոտեկից հեռուն և ամենահեռավորները:

Ի՞նչպես փոխվել ե տղան: Նրա աչքերը  
վառվում են:

Նա կարողանում եր իմաստուն ծերերին և  
հասակավոր կռվողներին ստիպել, վոր լսեն իրեն:

Նա պատմում եր նրանց այն ամենը, ինչ  
վոր տարել ելին, կրել ելին նրանք անտառում  
ու սպիտակների ճամբարում. Նա պատմում ե  
Պանդակուրայի մահվան, կոկորդիլոսին գրավե-  
լու համար գետը գցած աղջկա, մտրակների,  
կոմենդանտի կատաղի մոնչյունի, սպիտակ կնոջ  
անգութ ծիծաղի մասին: Նա ասում եր ծեր  
Պանդակուրայի կտակը.—

— Յեթե բոլոր նեզրերը չմիանան ու չա-  
պլստամբեն, նրանց բոլորին վոչխարների նման  
կը մորթեն, կամ ստրուկների ցանկապատը կը քշեն:

Նրա խոսքերն այրում և հրամայում ելին,  
կրալների առաջնորդները փղի կաշվից կարած  
վահանները բարձրացնում ելին, իրրե նշան, վոր  
պետք ե արշավելու պատրաստվել:

Յակելենեյին հրավիրում ելին առաջնորդի  
խրձիթը, և նա զինվորական խորհրդում լինում  
եր, ինչպես հավասար անդամ մյուսների հետ:  
Կռվողները լսում ելին նրա խոսքերը և հար-  
ցեր ելին տալիս նրան:

Յակելենեյի վոտքերը հոգնել չգիտելին:

Նա իր ձեռքերի վրա գեռ զգում եր Պան-  
դակուրայի տաք արյունը, և այդ բանը նոր ուժ  
եր տալիս նրան:

Եեվ ահա արդեն շատ ցեղեր, շատ կրապ-  
ներ համաձայնության յեկան ապստամբություն  
բարձրացնելու. յերդվեցին կովել մինչև կը չնշվեն  
կամ ընդմիշտ գուրս կը քշեն սպիտակ գազան-  
ներին, վորպեսզի նեզրերը կարողանան ազատ  
ու հանգիստ ապրել իրենց դաշտերում ու ան-  
տառներում, աշխատել ու վորս անել:

Զանազան կողմերից նեզրական խմբերը  
մոտենում ելին սպիտակների անիծյալ վորջին:

Յակելենեն մտածել եր ամբողջ ծրագիրը, և  
առաջնորդների խորհուրդն առանց հակաճառելու  
ընդունեց:

Այն անտառում, վոր շրջապատում եր ըս-  
պիտակների ճամբարը, հավաքվում ելին նեզրե-  
րի խմբերը:

Յակելենեն գնաց հետախուզելու: Նա ծա-  
ծուկ մոտեցավ այն ծառին, վորի մասին ասել  
եր Յասսիդինչային:

Նա լսեց անտառում աշխատող նեղբերի ձայնը, նա թփերի մեջ տեսավ իրենց կրածի տղաներին ու աղջիկներին. նրա սիրտն արտգ բաբախում եր. նա ուզում եր նրանց կանչել ու հարցնել, թե իր փախչելուց հետո ինչ ե պատահել, բայց նա չափազանց զգույշ պիտի լինել:

Նա ոճի նման խոտերի միջից սողալով մոռացավ ծառին, իր նետը դրեց փշակում և յետ սողաց, վոչ վոքի վոչ մի նշան չտվեց, վոր ինքը մոտ ե, վոր հասնում ե բոլորի ազատության ժամը:

Թիշերը Յակելենեն կրկին ծածուկ մոռացավ ծառին: Ծառի բնին կպած, կանգնած եր Յասոիդինջան:

Նա չեր համարձակվում բառերով արտահայտել իր ուրախությունը, բայց Յակելենեն նրա աշքերում կարդաց այդ ուրախությունը:

— Վաղը, — ասաց Յակելենեն, հոգնածությունից ու հուզմունքից մի քիչ խեղդվելով. — Վաղը, յերբ դուք այստեղ աշխատելիս կըլինեք, մենք կըհարձակվենք սպիտակների վրա: Դու պետք ե այնպես անես, վոր նեղբերից վոչ վոք, վոչ պառավները, վոչ յերեխաները, ճամբարում չմնան: Բոլորն այստեղ պիտի լինեն ու նրանք կազատվեն: Բայց մեծ զգուշություն ե հարկավոր:

Սպիտակները խորամանկ են, նրանք կարող են բան հասկանալ, ձեզ ճամբարից դուրս չթողնել, և այն ժամանակ ձեզնից վոչ վոք կենդանի չի ֆալ: Արեկի ամենատաք ժամանակը, յերբ սպիտակ զինվորները կըհոգնեն ու ստվերներում կըպառկեն՝ հանգստանալու, դու պետք ե մեզ նշան տաս, իսկ մյուսները պետք ե վերցնեն սպիտակների յերկաթե ձողերը, վորոնցով նրանք սպանում են: Հիմարություն ե, այդ ձողերում վոչ մի կախարդական բան չկա, դա սպիտակների եռորամանկությունն ե միայն:

— Յես ինքս կըգողանամ հրացանը, — ասաց Յասսիգինջան:

Նա ամեն ինչ հասկացավ, ամեն ինչ կըկատարի:

Յակելենեն հանգստացած վերադարձավ: Նա կարող եր հույս դնել Յասսիգինջայի վրա:

Ճամբարը պաշարած նեղբերը խարույկ չեւին վառում, վոր չմատնեն իրենց տեղը. նրանք սրում ելին կացինները և թաթախում ելին իրենց նետերը մահացու թույնի մեջ:

Յերբեք յերկինքն այդքան դանդաղ չեր վարդագունել, յերբեք արևն ալդպես դանդաղ չեր ծագել:

Յակելենելին թվում եր, թե արևն այսոր բոլորովին մոռացել ե զարթնել և յերկինք բարձ-

ըանալ: Բայց ամեն մի, թեկուղ ամենաանհամբեր սպասումին վերջ և լինում: Արել դուրս լեկավ: Վերջապես անտառի մոջ ձայներ և աշխատանքի նշաններ լսվեցին:

Նեղբերը տիսուր յերգեր ելին յերգում: Գուցե նրանք չգիտեյին, զոր ազատությունն այդքան մոտ ե, գուցե նրանք խաբում ելին հոկող սպիտակներին:

Թփերի ու խոտերի միջով ամեն կողմից մոտ սողացին սեամորթ կտրիչները, պառկեցին ու նշանին ելին սպասում:

Յակելենեն առաջնորդների շարքումն եր: Նա լսում եր, նա աշխատում եր գուշակել թեինչ և կատարվում այնտեղ՝ բացատում: ահա աղմուկով ընկավ կտրած ծառը, ահա հողը փորող բահերը գնգացին, ահա ծիգ տվող հառաջանքներով ինչ զոր ծանր բան են բարշում, իսկ սպիտակներն աղաղակելով քշում են նեղբերին:

Արեգակը շարունակ վեր եր բարձրանում: Ահա նա ուղիղ գլխների վերեն ե, նա անխիղճ կերպով այրում ե, նա կտրծես ժպտում ե, մը խիթարում ե. «Շուտով, այ, շուտով, շատ շուտով»:

Անտառում շատ ձայներ ու հաշյուններ են լսվում, թռչուններն ամեն կողմից յերգում են.

բայց յերբ շատ բարակ ձայնով մի նոր թռչուն յերգեց, Յակելենեն միանգամից ճանաչեց Յասսիգինջայի ձայնը, ձգվեց, մի բոպե ականջ դըրեց և շնչաց առաջնորդներին:

— Մեզ նշան են տալիս: Ժամանակն ե:

Առաջնորդները բարձրացրին իրենց փղի կաշվից շինած վահանները, նիզակներով խփեցին նրանց և ծմակն աղմկեց փոթորկի նման. գա սեամորթ կովողներն ելին, զոր ուսոււսի սեղմած, հարձակվեցին բացատի վրա:

Յակելենեն վագում եր բոլորի առջևից:

Նեղբերը յուրաքիններին տեսնելով, ուրախ ու վախեցած բացականչեցին: Սպիտակները վեր թռան, շփոթվեցին, հայնոյեցին, տրխկացը մըտրակները, ուզում ելին վախեցնել իրենց հնազանդ հոտը: Բայց չե, ել չեն վախեցնում:

Բայց յերևաց, զոր նեղբերը նրանց բոլոր յերկաթե ձողերը չելին տարել: Խուլ թնդաց վորուր—մեկ, յերկու:

Մի սեամորթ կովող տատանվեց ու ընկավ: Բացատօնն ել մեկն ընկավ:

Սեամորթ կովողները շնկվեցին. նրանք վախենում ելին սատանայական յերկաթե ձողերից, կարծում ելին, թե իրենք նրանց առջև անուժ են: Առաջնորդներն իրենք կանգ առան: Բայց Յակելենեն հուսահատված աղաղակեց.

— Մի վախենաք, զինվորներ: Սպիտակներն  
անմահ չեն: Յերկաթե ձողերը նրանց չեն ա-  
զատիլ:

Սևամորթ կռվողները չոգեցին գետնին, կը-  
սացան մի ծնդան վրա, և թփերի տակը մտած՝  
նշան դրին բացատում կանգնած սպիտակների  
վրա:

Նետերը զրբնգացին:

Սևամորթ վորսորդներն անվրեպ հայացք  
ունեն:

Մեկ, յերկու, յերեք—ընկնում եյին սպիտակ  
զինվորները, յերկաթե ձողերն ել չեյին թնդում.  
Ճեռքները վեր բարձրացրին, գութ եյին խնդրում:  
Բայց նրանց խնայել չկա:

Յերգեցին ուազմական յերգը—պարեցին ուազ-  
մական հաղթական պարը: Անա նրանք բացա-  
տում են: Ել վոչ մի սպիտակ կենդանի չե մը-  
նացել. արցունքներն աշքներին հանդիսավոր ա-  
ղաղակներով ազատվածսերը գրկում են իրենց  
ազատողներին, բարձրածայն յերգով գովում են  
փոքրիկ առաջնորդ՝ քաջ Յակելենեյին:

Բայց ինչու նա չի տեսնում Յասսիգինջալիք  
ուրախ աչքերը, ինչու նա յել մյուսների հետ չի  
պարում հաղթական պարը:

Յակելենեն անհանգիստ նայեց չորս կողմը:  
Յասսիգինջան չկա վոչ մի տեղ:

Սևամորթ կռվողները վերցրին սպիտակնե-  
րի յերկաթե ձողերը, հետաքրքրությամբ ու յեր-  
կուղով դիտում եյին:

Յակելենեն շրջում ե կռվի տեղը, ահա ըն-  
կած ե մի սպիտակ, ահա յերկրողը:

Ես ի՞նչ եւ չենց առվի ափին Յասսիգին-  
ջան եւ:

Նա պառկած ե մեջքի վրա, նա բաց աչ-  
քերով ուղիղ արկին ե նայում, նա յերկու ձեռո-  
քով պինդ սղմել ե այն յերկաթե ձողը, վոր  
ինքը վերցրել ե սպիտակ զինվորից:

— Յասսիգինջա, Յասսիգենջա,—ձայն եր  
տալիս Յակելենեն:

Բայց, ախար, ինչու յե լրում, նայում ե տ-  
ընին, ժաղտում ու լրում:


Ո՛, խորամանկ, հնարագետ աղջիկ ե Յաս-  
սիգինջան: Նա միշտ մի նոր բան ե մտածում:

— ԴԵ, վեր կաց, Յասսիգինջա: Այսն ինչ  
վերջացավ, մենք ազատ ենք:

Յակելենեն թեքվել ե նրա վրա, շարժուժ  
ե նրան, ուզում ե բարձրացնել, հանկարծ սար-  
սափով հասկանում ե, բայց չի կարողանում հա-  
գատալ, ու համառությամբ բարձրացնում ե նրա  
ծանրացած մարմինը:

— Յասսիգինջա, Յասսիգինջա:  
Վոչ: Չի կարող բարձրացնել, նա յերբեք

առաջնորդ Յակելենելի կինը չի լինիլ։ Յասսիգին-  
ջայի ճակատին մի գեղեցիկ կարմիր աստղ կա-  
նա սպանված եւ։



Վոսկե արևը սև եւ յերեռում, նրա աշքին  
ծառերը շարժվում են, չի լսում հաղթական յեր-  
գը, զբունքները համառ ու հուսահատ շշնջում  
են։

— Յասսիգինջա, Յասիգինջա։

Առաջնորդները Յակելենելին զինվորական  
խորհրդի յեն կանչում։ Ժամանակ կորցնել չի  
կարելի, պետք եւ նոր կովի պատրաստվել։

Յակելենեն ամուր եւ ու հանգիստ։ Նա պա-  
տասխանում եւ բոլոր հարցերին, նա զարգացնում  
եւ հարձակման ծրագիրը։

Ամենից առաջ անհրաժեշտ եւ պետի մոտ յե-

ղող բոլոր նավակները վերցնել և քշել, հեռաց-  
մել, վորպեսզի սպիտակները նահանջելու ճանա-  
պարհ չունենան։ Բոլոր շավիղներում և բացատնե-  
րում պետք եւ ծարերը թունավորած ցցեր տըն-  
կել և խոր փոսեր փորել։ Ծառերի վրա և թը-  
գերում դարան պետք եւ մտնել։ Մինչև յերեկո  
նրանցը չեն հասկանալ, թե ինչու նեղըերն աշ-  
խատանքից չփերագարձան։ Յերեկը նրանք արևի  
ճառագ ոյթներին չեն դիմանում և քնում են ի-  
րենց խրճիթներում։ Իսկ զիշերը պետք եւ ճամ-  
բարի շուրջն յեղող անտառը կրակ տալ, թող  
թրպրան, թող փրկություն փնտրեն։ Նրանք  
ամեն կողմից միայն անխնա վրեժինդրություն  
կը գտնեն։

Առաջնորդներից վոչ մեկը չի հակածառում,  
միայն բոլորը զարմանում են, թե այս յերեխան  
վժրտեղից այսքան խորամանկություն ու խելք  
ունի։

— Դու մեծ կովող կը լինես, դու մեծ առաջ-  
նորդ կը լինես, յերբ մեծանաս, — գովում են նը-  
րանք Յակելենելին։

— Դու նեզրերի փրկիչը կը լինես, — ավելաց-  
նում եւ մեկը՝ ամենից ծերն ու իմաստունը,

Գովասանքները չեն ուրախացնում Յակելե-  
նելին, բայց վերջին խոսքերը լսելիս նրա աշքե-  
րը վառվում են մոռալ կրակով։

«Ալո, նա փրկիչ ու վրիժառու կըլինի: Միթե նա կարող ե մոռանալ այս ամենը, ամենը և այս կարմիր աստղը ճակատին՝ Յասսիգինջալին, վոր սպիտակներից խլած յերկաթե՛ ձողը պինդ ռեղմել եր կրծքին: Վոչ. յերբեք»:

Այսպես ե մտածում իր մասին Յակելենեն: Նա լալու, հառաշելու, տիրության անձնատուր լինելու ժամանակ չունի: Նա հանգիստ անցնում ե այն տեղից, ուր Յասսիգինջալի մայրը, կրաալի կանանցով շրջապատված, փետրում ե իր մազերը, բարձրաձախն վողբում ե, խարուկ և պատրաստում, վորի վրա յերեկոյան կայրեն փոքրիկ, քաջ Յասսիգինջալի մարմինը:

Ո՛, նա առաջնորդի հավատարիմ ու արժանի կին կըլիներ:

Յակելենեն կռվողների հետ թագնվում ե, մոտենում ե գետին, վոր ճանապարհը ցուց տա նրանց:

Ցերը նրանք հաջողությամբ քշում են բռը նավակներն ու լաստերը, նա ծածուկ մոտենում ե սպիտակների ճամբարին:

Նա ուզում ե տեսնել, թե ինչ պետք ե առեն նրանք. բացի դրանից նա միտք ունի աղատել նրանցից մեկին. նրան, վորը թեև սպիտակ ե, բայց ամենելին նման չի նրանց, նրան՝ վորը յեղբար անվանեց փոքրիկ սկամորթ Յա-

կելենելին: Յակելենեն չի մոռացել նրա քնքուց խոսքերը, նրա ձեռքը յեղբայրորեն պինդ սեղմելը: Յակելենեն պետք ե նրան նախազգուշացնի և ազատի:

Յանկապատների արանքում Յակելենեն մի մութ անկյուն ե գտնում, ալստեղից ամեն բան լավ կարելի յէ տեսնել:

Յակելենեն ստիպված եր յերկար պառկել իր անկյունում:

Միայն այն ժամանակ, յերբ արեք բոլորովին ցածացավ, սպիտակներն սկսեցին շարժվել սկսեցին իրենց իրճիթներից դուրս գալ:

Կոմենդանսն ու սպիտակ կինն ել դուրս յեկան: Ծափի տակ նրանց համար սեղան դրին, նրանց համար ամեն տեսակի և շատ ուտելեղեն բերին: Յակելենեն լսում եր, թե ինչպես զիլ ու անխոռվ ծիծաղում եր սպիտակ կինը:

Ցերը յերկինքն սկսեց մթնել և կանաչ, բազմածառագալթ աստղերը վասվեցին, իսկ գետի կողմից դյուրեկան հով փչեց, սպիտակները վերջապես ուշադրություն դարձրին, վոր նեգրին ու նրանց ուղեկցող զինվորները չկան: Նըրանք նայեցին ցանկապատի ներսը, դուրս յեկան ճանապարհ նայելու, գնացին կոմենդանտին ասելու, և, վերջապես սի քանի մարդ հեծան ձիւերը և սլացան անտառ:

Շուտով լսվեցին վախեցած ու անհանգիստ  
յերկաթե ձողերի վորոտը:

Կոմենդանտն ականջ դրեց. ականջ ելին դր-  
նում և բոլոր սպիտակները: Ախոռներում ձիան-  
ները, զգալով վոր վատ բան ե լինելու, սկսե-  
ցին վրնջալ-խըրխնջալ:

Ճարճատունը լրեց և բակը մտավ մի սպի-  
տակ զինվոր, միայն մեկը, իսկ նրա լետեկից յե-  
րեք ձի, առանց ձիավորների:

Զինվորն ընկավ կոմենդանտի մոտ, Նա ինչ  
վոր բան ասաց, վորից սոսկացին բոլոր սպիտակ  
զինվորները:

Կոմենդանտն աղաղակում եր, ձեռքերը թա-  
փահարում, իսկ սպիտակ կինն ել չեր ծիծաղում:

Իսկ մութ անտառում, հանկարծ, միանգա-  
մից — ամեն կողմից ծուխ բարձրացավ. չարա-  
գուշակ ճայթյունով ճարճատեցին ծառերի ճու-  
ղերը, վախեցած թռչուններն ու փոքրիկ կա-  
պիկները թրպրտացին ծմակում:

Դա անգութ սրբազն կրակն եր, վոր դան-  
դաղ մոտենում եր սպիտակների ճամբարին:

Նրանք ուզում ելին վազել դեպի անտառ,  
բայց նրանց այժմ անզոր յերկաթե ձողերը հենց  
բացատի մոտ անկանոն կերպով տրաք-տրաքե-  
ցին, ու հետո արագ յետ դարձան: Նրանք ան-  
համեմատ քչացել ելին:

Սև կովողներն անվրեալ նետաձիգներ ելին:  
Կոմենդանտը նորից ինչ վոր բան աղաղակեց  
և բոլոր զինվորները, և հենց ինքը և սպիտակ  
կինը, բոլորը հեծան ձիաները և ոլացան դեպի  
դետը:

Յակելենեն ուշադիր դիտում եր: Նա դրանց  
մեջ չեր տեսնում իր սպիտակ յեղբորը:

Յակելենեն զգուշությունը մոռանալով, դուրս  
վազեց իր անկյունից և սկսեց վնտրել նրան,  
վորին նա պետք ե ազատեր:

Խրճիթներում, ցանկապատների մեջ, ամեն  
աեղ դատարկ եր:

Յակելենեն վազեց այն արժանահիշատակ  
ծառի մոտով, վորի մոտ սպանվեց Պանդակու-  
րան, և վորտեղ նա փոքրիկ Յասսիգինջային իր  
կինն անվանեց:

Մի հաստ ճյուղից մի չարագուշակ ստվեր  
կար կախված: Յակելենեն ձեռքը բարձրացրեց և  
մեկի վոտքերին հասավ:

Յակելենեն կապկից արագ ծառը բարձրա-  
ցավ: Իրեն ծանոթ, բայց այժմ սոսկալի, կապ-  
տած դեմքը, լեզուն հանած, սպիտակ յեղբոր  
դեմքը — նրա աչքի առջևն եր: Պինդ կապած թո-  
կըն ատամով կրծեց, և քարի նման ծանրացած  
մարմինը ցած ընկավ:

Յակելենեն կուացավ նրա վրա: Յակելենեն

շոյեց նրա գլուխը, ինչպես այնտեղ, անտառում  
սպիտակ զինվորը շոյում եր Յակելենելի գը-  
լուխը:

Վոչ... այս մի քանի որվա ընթացքում այն-  
քան շատ մեռածներ եր տեսել նա, վոր չեր կա-  
րող սխալվել:

— Անիծված շներ, — հանկարծ կատաղած  
դուրս թռավ Յակելենելի, կարծես, սրախց: Նա  
սղմում եր բոռնցքները, նա թակում եր վոտ-  
քերով:

— Անիծված շներ, դուք տանջում եք և  
մեզ, և մեր սպիտակ յեղալըներին: Դե, սպա-  
սեցեք:

Յակելենեն վայրենի կատաղի վոռնոցով  
վաղեց դեպի գետը, նա ուզում եր հասնել նը-  
րանց, մոռանալով, վոր ինքն անզեն ե. Նա ու-  
զում եր ատամներով, յեղունզներով կպչել նը-  
րանց կոկորդներին:

Յեթե չկարողացավ ազատել, ապա կարող  
ե վրեժ լուծել:

Սպիտակներն արդեն ձիաները քշել ելին  
մինչև գետը: Նրանք նավակներն ու լաստերը  
չդան: Արդեն նրանք այս ու այն կողմն ելին  
ընկնում: Կրակն ողակի նման պաշարել եր նը-  
րանց և խիտ թփերից անխնա ու շեշտակի նե-  
տերի անձրև եր թափվում:

Սպիտակները մտրակում ելին իրենց ձիե-  
րին, ստիպում ելին դետը լողալով անցնել: Սե-  
վամորթ կովողները դուրս թափվեցին թփերից  
և հաղթական ազադակներով հարձակվեցին լո-  
ղացող սպիտակների վրա:

Գետի կողմից միայն հառաջանքի ու անեծ-  
քի ձայներ ելին լսվում:

Սետմորթ կովողները դուրս ելին հանում  
վափող ածխակոթերը և հեռու, գետի մեջն ե-  
ժին շպրտում:

Փայտակող լույսի տակ կարելի յեր տես-  
նել, թե շեշտակի արձակած նետերի տակ կամ  
արագ հոսանքի հորձանքի տակ ինչպես ելին  
տարփում ձիաները, ինչպես ելին թափվում ձիա-  
փորները:

Այ, ել չկա վոչ կոմենդանար, վոչ շեկ մա-  
զերով սպիտակ կինը, ել վոչ վոք չկա. միայն  
ձիափորներից ազատված ձիերն են յետ դառնում  
դեպի ափը:

Առաջնորդներն արդեն կրակը հանգցնելու և  
խրամաները փորելու հրաման են տալիս, իսկ  
այնտեղ՝ սպիտակների ճամբարում, կոմենդանարի  
խրձիթի առջեր, ուր այնքան արյուն ու արցոնք  
եր թփերի, ազատված նեզրերն արդեն պարում  
են իրենց հաղթական, հանդիսավոր պարը:

Միայն Յակելենեն լուռ կանգնած եր այն ծա-

ով տակ, վոր տեսել եր Պանդակուրայի ու սպիտակ  
յեղբոր մահը, լսել եր Յասսիգինջային ասած իր  
խոսքերը:

Յակելենեն չի ուրախանում, չի կարող ու-  
րախանալ. — Նա զիտե, վոր սա միայն առաջին  
կոփին եր, առաջին հաղթությունը, վոր այնքան  
թանգ նստեց, անքան կյանքեր տարավ:

Նա զիտե, վոր մինչեւ վերջնական հաղթու-  
թյունը դեռ շատ արյուն պետք ե թափվի:

Նա ուրախ չե, բայց նա հանգիստ ե ու ա-  
մուր: Նա զիտե, վոր իրեն վիճակված ե առաջ-  
նորդ, փրկիչ ու վրիժառու լինել:

---

### ՍՊԻՏԱԿ ՅԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Մեկ, յերկու, յերեք, չորս և շատ ավելի  
անդամ նեղբերը հավաքեցին իրենց հունձը, վրա  
հասան անձրեալին յերկար ու տխուր որերը, զե-  
տերը դուրս յեկան իրենց ափերից, ու նորից  
արել բոցավառվեց ու չորացրեց ամեն ինչ:

Ազատարար ու վրիժառու առաջնորդ Յա-  
կելենեցի քաղցը անունը շնչյունով կրավից կրա-  
ալ եր անցնում. տռն որերին եղ նրա մասին են  
կովողները հպարտ ու անվերջ յերգեր յերգում:  
Իսկ սպիտակներն այդ անունն արտասա-  
նում են սոսկումով ու անեծքով:

Արդեն շատ տարի յե, վոր նրանք կովում  
են միմյանց դեմ. սպիտակ զինվորները մեռնում  
են չերմից, թունավորված նետերից. Յակելե-  
նեն սպիտակներից խլած արդեն մի քանի հատ  
ձողեր ունի և նա զիտե նրանց վորոտացնել ու  
սպանել: Նրան եղած հեշտ վախեցնել չի լինի:  
Յեթե նա ուժով չի կարողանում հաղթել, ապա  
քաշվում ե ծմակը կամ անապատը. այնտեղ կըր-  
կին իր շուրջն ե խմբում ազատության ծարավի  
սկամորթ կովողների, ու նրանք հարձակվում են

սպիտակների վրա, այրում են նրանց ճամբարները, անխնա կոտորում են ու հորից յետքաշը վում, առանց բռնվելու:

Յերկար տարիներ են անցնում:

Յակելենեն բազմաթիվ հաղթություններ ու դառն պարտություններ ապրեց. նա ստիպվեց շատ բան լսել ու տեսնել. նա ծանոթ եր անտապատին, դնաց, հասավ մինչև ծովը և տեսավ սպիտակների ահագին, ուրվականի պես ալիքների վրա տարբերվող, նավերը:

Ինչքան նա մեծանում եր, նրա գեմքն այնքան տիրուք ու համառ կերպարանք եր ընդունում:

Նա հաստատ կերպով գիտեր իր պարտականությունը՝ վոր դժվար եր ու քաղցր՝ կովել, անվերջ կովել:

Բայց յեկան վերջին հուսահատության ուրերը, կարծես, թե վոչ վոք չեր կարող ողնել Յակելենելին՝ կովելու իր մեծ դործում: Նրա դորախմբերը ջարդվեցին: Ինքը մենակ հազիվ կարողացավ փախչել:

Յերկար որեր իրեն հավատարիմ յերկու առաջնորդի հետ, թափառեց նա անսպատում ու ծծակում:

Բոլոր կրաալները լիքն են սպիտակ զինվորներով և սպիտակների լրտեսներով: Նրանք Յա-

կելենելին ելին վնարում. Նրանք զիտելին, վոր թանի դեռ նա կենդանի լե, ապստամբության կայծը դեռ չի հանգել և ամեն բողե կարող ե վառ խարուչկի նման բոցավառվել:

Յեվ ահա Յակելենեն հիշեց իր սպիտակ, թշվառ յեղբորը, վորին կոմենդանար սպանեց, նա հիշեց նրա խոռքերը, թե՝ սպիտակների մեջ բարեկամներ ու յեղբայրներ կան:

Յակելենեն սպիտակների քաղաքումն ե: Վոչ թե հարուստ ու փրփած սպիտակների մոտ ե, վոր ապրում են շքեղ պալատներում, այլ այնտեղ՝ բաղաքի ծալքերում, վողորմելի հյուղերում: Յեվ այստեղ նա բարեկամներ ու յեղբայրներ ե գտնում:

Նրանք շատ բան պատմեցին նրան, վոր առաջին սպիտակ բարեկամը չկարողացավ պատմել:

Յակելենեն սովորում ե սպիտակների լեզուն, նա արդեն հասկանում ե նրանց, նրանք ել սրան:

Յեվ ահա մի քանի տարուց հետո, Յակելենեն սպիտակների մի հեռավոր, հեռավոր քաղաքում ե:

Նա ծովեր ե անցկացել, նա շատ, զարմանալի բաներ ե տեսել. մի յերկաթե գազան գոռալով ու յերախից կրակ թափելով, տարավ նրան դաշտերով, վոր ծածկված ելին սպիտակ, յերբեք չտեսած ձունով:

Յակելենեն Մոսկայումն ե:

Ինչքան գժվար ու քաղցր և նրա համար այդ բանն արտասանելը, վոր նա վազուց կլրի նում ե, իբրև վերջին, իսկական հույս:

Նա նստած է մի մեծ սենյակում, նրա շուրջը ըստ զմանաթիվ սպիտակներ, դեղնամորթներ, սեղամորթներ կան. նրանք բոլորը խոսում են զանագան լեզուներով, նրանք գժվարությամբ են հասկանում միմյանց; բայց նրանք բոլորը յեղբայրներ են, և մեծ, կարմիր աստղը փայտում է նրանց համար, ինչպես նրա հեռու հայրենիքի վոսկե արեց:

Յակելենեն, սեամորթ առաջնորդը, փրկիչն ու վրիժառուն հիմա պետք է խոսի նրանց՝ յեղբայրների համար:

Նա գժվարանում է բառեր դանել, նա մի քանի ըստե շփոթված, կանգնած ե, նա՝ վոր վարժվել եր առանց դողալու նայել մահվան աչքերին:

Նրա գանգի մեջ խոնդում են հիշողությունները, նա փոշինչ չի մոռացել. վոչ ծեր Պանդակուրացի մահը, վորի արյունով ոծված են նրա ձեռքերը, վոչ, իբրև կոկորդիլոսին հրապուրելու նյութ՝ գցված թմբիկ աղջիկը, վոչ յերկաթե ձողը սզմած փոքրիկ ու քաջ Յասսիկինջան, վոչ սոսկալի, լեզուն հանած սպիտակ յեղբայրը—ելի շատ բան ե հիշում նա:

Նա սկսում է խոսել. — Նրա խոսքերի մեջ, ատելություն և սեր կա:

Սպիտակ, դեղին, ոև յեղբայրները հասկանում են նրա անկապ, կցկառուր խոսքերը:

Նրանք այսաեղ են բերել իրենց ատելությունն ու սերը:

Ուրախությունը խեղզում է Յակելենելին, նա յել չի կարողանում խոսել, նա յերգում է մի ին, հպարտ ուզմական յերգ:

Նա գիտե, վոր նա մենակ չե, նա գիտե, վոր ինքը շատ, շատ յեղբայրներ ունի, վոր իրենց ձեռքերը պինդ միացնելով նրանք կընազթեն և հարվածների տակ տնքացող, անարդ աշխաներում տանջվողներին բոլորին կաղատեն:

Սեամորթ առաջնորդ Յակելենեն իր ամբողջ կյանքում ի զուր չեր կովել:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ցերեալ

I	Առաջնորդի բնուրություններ . . . . .	4
II	Գաւառների որը . . . . .	14
III	Տոնը . . . . .	30
IV	Տոնը շարունակվում է . . . . .	44
V	Սպիտակները . . . . .	60
VI	Անտառում . . . . .	74
VII	Փորորիկ . . . . .	91
VIII	Սպիտակների իշխանության տակ . . . . .	105
IX	Պետք է փախչել . . . . .	119
X	Յակելենեն առաջնորդ . . . . .	130
XI	Սպիտակ յեղբայրներ . . . . .	147



9924